Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository

Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial 3.0 Unported (CC BY-NC 3.0) **license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով

ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

Lin
1925

1999

№2/11

ՊԷՊՕ

ԿՕՄԵԴԻԱ ԵՐԵՔ ԱՐԱՐՈՒԱԾՈՎ

ՀԵՂԻՆԱԿՈՒԹԻՒՆ

Գ. ՍՈՒՆԴՈՒԿԵԱՆՑԻ

ԹԻՖԼԻԶ

ՅՈՎՀԱՆՆԷՍ ՄԱՐՏԻՐՈՍԵԱՆՑԻ ՏՊԱՐԱՆ

1876

ՊԷՊՕ

ԿՕՄԵԴԻԱ ԵՐԵՔ ԱԲԱԲՈՒԱԾՈՎ

ՀԵՂԻՆԱԿՈՒԹԻՆ

Գ. ՍՈՒՆԴՈՒԿԵԱՆՑԻ

1962.

ԼԷՕ
ԳՐԱԴԱՐԱՆ

ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ
Гос. Библиотека
ՀԱՍՌ-ԻՄ.ՍՍՌ
Им. А. Мясникяна
Ա. ՄՅԱՍՆԻԿՅԱՆԻ ԱՆՎԱՆ

ԹԻՖԼԻՍ

ՅՈՎՀԱՆՆԷՍ ՄԱՐՏԻՐՈՍԵԱՆԻ ՏՊԱՐԱՆ

1876

Дозволено цензурою. Тифлисъ, 22 Ноября 1876 г.

Зр. 1933
41925-ш

Типографія Мартиросіанца, на Орбеліановской улицѣ № 5.



ՊԱՐՈՆ

ԳԷՈՐԳ ԶՄՇԿԵԱՆԻՆ

ՆՈՒԷՐ



ՀԵՂԻՆԱԿԻՑ

ՍԻՐԵԼԻ ԳԷՈՐԳ

Դու վարուց խնդրում էիր ինձ «մէկ բան գրել Թատրոնի համար մեր Թիֆլիսի պուժալինինէրի կեանքից»։

Երկար ժամանակ ես չէի կարողանում գտնել նիւթի առարկայ, թէեւ քո պատուէրը երբէք մտքիցս չէր հեռանում։

Բայց պատահմունքը վճռեց գործը։

Մէկ օր Թատրոնումը ներկայացնվում էր Հանգուցեալ Փուղինեանցի Մօլիէրից շինած «ՎՈՒՐ ՏՐԱՔՎԻՍ ՊԻՏԻ ՊՅՍԱԿՎԻՍ» պիէսան, որի մէջ դու կատարում էիր Շամիրի դերը։

Քո հագուստը, դէմքը, շարժուածքը, խաղը, ծայնը այս դերի մէջ, յանկարծ մտքումս ծագեցրին հարց թէ՝ ի՞նչպէս կը վարուէր Շամիրի նման մարդն այնպիսի դէպքում, երբ նրան մեր հարստահարողներից մէկը փող պարտ լինէր եւ դա չը կամենար ճանաչել իր պարտքը։

Գէպքի հիմն դցուեցաւ. մնացածն ինքն ըստ ինքեան եկաւ. նա մնաւանց այնպիսի մէկ դիպուած, որն՝ այն ժամանակներում ես անմամի փորձել էի մէկ հարուստի ինձ տուած խօսքի ուրանալուց, արդէն նախապատրաստել էր իմ դլխում Գէպքի հակառակորդի պատկերը։

Կաղմելով հետզհետէ երեւակայութեանս մէջ պիէսայի կապը եւ նրա հերոսների տիպերը, ես ի նկատի ունեցայ, որ այն դասի, մէջ, որի զանազան ներկայացուցիչներին այս տեղ արհամարհանքով

անուանում են պոժարնի, ջուխտ, ֆենոս, կան մարդիկ, որոնք իրանց բարոյականութեամբ, մեծահոգութեամբ եւ վեհանձնութեամբ կարող էին օրինակ լինել շատ եւ շատ բարձր դասի հասարուած մարդկանց համար։ Այս պատճառով Շամիրի բնաւորութիւնը պիէսայում անցաւ Կակուլու մէջ. իսկ նրանից բարձր տիպը միեւնոյն դասի ես իմ կարողութեան չափ աշխատեցի ցոյց տալ Պէպօի մէջ։

Երբ ես մօտաւորապէս պատմեցի թեզ Պէպօի բովանդակութեան գլխաւոր միտքը, այն օրից սկսած դու էլ ձեռք չը վեր առար ինձանից. ստուերի պէս հետեւում էիր ինձ՝ աշխատելով շուտով եւ շուտով հանել իմ գլխից քո սիրեկան Պէպօին եւ գրչի տալ իմ խօսքերը։

Եւ ահա 1870 թուի սկզբում, դու ըստ սովորականին վեր առար թուղթ եւ գրիչ եւ ես սկսեցի թելադրել թեզ Պէպօն, որը թէեւ շուտով ընդմիջուեց, բայց յիշեալ թուի Յուլիս ամսին, միեւնոյն ձեւով շարունակուեց եւ վերջացաւ Կրծանիսում։

Թերթելով այժմ Պէպօի սկզբնական օրինակը, ես դտնում եմ, որ համարեա ամբողջ պիէսան քո ձեռքով է գրած, բացի միքանի տեսիլներից, ուր քո բացակայութեան ժամանակ օգնել են ինձ Պ. Զաքարիա Բարանաեանցը եւ մեր թատրոնի տաղանդաւոր աշխատա՛ղից Պ. Յովհաննէս Ամերիկեանը։

Շնորհակալութիւն յայտնելով յիշեալ անձանց, նաս մանաւանդ Պ. Ամերիկեանին, որը ուրիշ շատ անգամ եւս օգնել է ինձ իմ թատրոնական ասպարիզում, ես չեմ կարող մոռանալ այն աշխատանքն եւ անձնանուիրութիւնը, որ դու կրել ես՝ թէ ներկայ հեղինակութեանս եւ թէ այլ գրուածներիս մեծ մասի մէջ։ Բայց առ այժմ խօսքս միայն Պէպօի վերայ է։

Քանի՛ եւ քանի անգամ գործդ թողած առտուային շոգ պապանաքին, ուտով եկել ես եւ գնացել Կրծանիս, քանի՛ եւ քանի անգամ հետդ խորհրդակցել եմ, օգուտներ քաղել քո խորհուրդներից եւ ճանճրացրել թեզ իմ ծանր ու բարակ մասլահաթներովս. քանի՛ եւ քանի անգամ ամբողջ ժամերով, գրիչը ձեռքիդ, անշարժ նստած ես եղել սեղանիս առաջ՝ ձեւացնելով թեզ մէկ գրող մեքենայ, երբ ես հեղինակելով՝ բոլոր իմ շարժուածքների ազատութիւնն եմ վայելել. քանի՛ եւ քանի անգամ երբէմն արագութեամբ թերթեր ես լցրել իմ խօսքերով եւ ստէպ ստէպ հանգութիւնդ ցոյց տալով, այժ ես տուել ինձ շարունակելու, երբէմն յօնքերդ տօթելով կամ տասն անգամ կրկնել ես միեւնոյն վերջին խօսքերս կամ լուռ ու մունջ մնացել, առանց մէկ բառ արտասանելու՝ կամենալով արգելք չը դնել մտքիս ընթացքին։ Ո՞վ իմանայ ի՞նչ մտքեր են ծագել քո մէջ այն ժամանակ, ի՞նչ մտքեր ես կլանել, ի՞նչ մտքեր զոհել, երբ ես ուզեցս փորելով աշխատելիս եմ եղել իմ միտքն ընդարձակել, իմ միտքը գեղեցկացնել։ Միով բանիւ քո կամքը ենթադրել ես իմ կամքին, քո սովորութիւններն իմ սովորութիւններին, քո ժամանակն իմ

ժամանակին, քո աշխատանքն իմ աշխատանքին, եւ այս բոլորը, բոլորը միայն նրա համար՝ որ Պէպօն շուտով լոյս տեսնի, դու քո սիրեկան թատրոնի համար մէկ նոր պիէսայ Հարեա։

Մտաբերելով անցեալը, մտաբերելով այն ժամերը, երբ Պէպօն գրվում էր, երբ մեր մտերիմ խօսակցութեան մէջ Պէպօից մենք անդադար անցնում էինք դէպի նրա եղբայրակիցները, նրանցից դէպի ժողովուրդը, ժողովրդից ազգը, ես խոստովանում եմ որ այն ժամերը միշտ կը մնան իմ կեանքիս ամենաերջանիկ ժամեր։

Յիշո՞ւմես, սիրելի Գէորգ, այն առաւօտները, երբ արեգակը գլուխը դուրս բերելով հեռու հորիզօնում մէկ առանձին լոյս էր թափում ծառերի տերեւների եւ գիմացի սարի վերայ, մինչեւ հազարաւոր թռչունների կանուխ երգը, շատ անգամ խօսքս բերանիս կիսատոր թողնելով, ասնում էր մեզ կարծես ուրիշ աշխարհ. յիշո՞ւմես բարեկամների այն փոքրիկ խումբը, որ շարունակ հաւաքվում էր իմ ընտանիքում, այն հանաքները, ծիծաղը, ուրախութիւնը, Եաղօբի երեւակայական «ՈՍԿԵՐԸ», Եօվանէի ճիանուրը, խեղճ Եավանդուլի բայաթիները, ծկնորս Լօփիանի պարը, քո արհեստական բարբարոսական եղանակով «Վնճ ու իմ սիրեկան եարին», Ամերիկեանի երգերը, նրան ընծայած սարսափելի փունջը... եւ այլն եւ այլն. բոլորն ունէր իր գեղեցկութիւնը, իր հիացքը, մինչեւ անգամ այն անտանելի սեւ միջատների անթիւ զօրքը, որ մոմի առաջ հաւաքուելով մեր գլխին, մանաւանդ քո գլխին, շատ անգամ առիթ էին լինում Պէպօի թերթերը ցիր ու ցան անելու։

Յիշո՞ւմես դու Թէյէթի այն բազմաթիւ ուխտաւորներին, որոնք կիրակի առաւօտները ժամը չորսից սկսած, ներկայացնելով իրանցից մէկ գեղեցիկ դունաւոր ժապաւէն, անցնում էին մեր բնակարանի առաջ եւ բարձրաձայն պատմում միմեանց իրանց վշտերը։ Քանի՛ խսկական Շուշան եւ Կէկէլ, քանի՛ յատուկ Պէպօ եւ Կակուլի ենք տեսել նրանց թուում. ես երբէք չեմ մոռանալ այն խօսքերը, որ մէկ կին նայելով մեր բակիցին ասաց իր ընկերուհուն. «Էստի մրտիկ, սրանք բաղումն էլ գիւաններով ին, ես կի տանս մէ կոտրած սկամի էլ չունիմ», եւ այս դառը խօսքերը նա կնքեց ուրախ ծիծաղով, կարծես թէ խեղճի ուրախութեան աղբիւրը նրա խեղճութիւնը լինի։ Քանի՛ այսպիսի դատողութիւններ են արտայայտել նրանք, քանի՛ մտքեր են զարթեցրել նրանց գանգատները։ Ճըշմարիտն ասած, տեսնելով այս մարդիկներին, լսելով եւ համակրելով սրանց, հարկաւոր էր ինձանից շատ եւ շատ վարպետ նկարիչ, որ կարողանար արժանաւոր գոյներով նկարել սրանց. բայց երբ մարդ ապրելով ժողովրդի մէջ, նրա ուրախութեան հետ ուրախանում է, նրա տրտմութեամբ տրտմում, եւ այս զգացմունքները նա կարողացել է փոքր 'ի շատէ պատկերացնել, դա էլ արդարեւ մեծ բաւականութիւն է։

Ինչ եւ իցէ ժամանակը հասաւ. Պէպօն ներկայացուեցաւ Թատրոնում առաջին անգամ 1871 Թուի Ապրիլի 30ին։ Պէպօի դերը դու ինքդ կատարեցիր եւ կատարում ես ցարդ բեմի վերայ։ Դու տուիր նրան շունչ եւ կենդանութիւն, բո խաղը դերազանցեց դրուածքից, իսկ Պ. Ամերիկեանը, որ ներկայացնում էր Պէպօի հակառակորդի պատկերը, եւ միւս մասնակցող անձինք իրանց հանճարաւոր խաղով օգնեցին մեզ աւելի պարզ ցոյց տալ հարստահարուած Պէպօի համակրական ոգին։

Այն ծափահարութիւնը, այն ընդունելութիւնը, որ առաջին ներկայացման օրը ստացայ հանդիսականներից Թատրոնում, ես արդէն բաժանել եմ քեզ եւ բո ընկերների հետ. այժմ Թո՛յլ տուր ինձ, սիրելի Գէորգ, խնդրել քեզ ընդունել այս նուազ նուէրս իբրեւ յիշատակ բո չափազանց աշխատութեան եւ հարկ բո անսահման սիրոյն դէպի մեր Թատրոնը։

Քո Գաբրիէլ Սունդուկեանց։

Թիֆլիզ
6 Նոյեմբերի 1876

ՊԷՊՕ

ԴՈՄԵԴԻԱ ԵՐԵՔ ԱՐԱՐՈՒԱԾՈՎ.

Թիֆլիզի Թատրոն. 30 *Ապրիլի* 1871

ԳՈՐԾՈՂ ԱՆՁԻՆՔ

ԱՐՈՒԹԻՆ, *հարուստ վաճառական* . . .	Պ. ԱՄԵՐԻԿԵԱՆ
ԼԻՊԼԻՄԱՅ, *Արութինի երկրորդ կին* . . .	Տ. ԱՆԱՀԻՏ
ՊԷՊՕ, *ձկնորս*	Պ. ՁՄՇԿԵԱՆ
ՇՈՒՇԱՆ, *Պէպօի մայրը, սպի կին* . . .	Տ. ԱՐԱՄԵԱՆՑ
ԿԷԿԷԼ, *Պէպօի քոյրը*	Օր. ԹԱԳՈՒՀԻ †
ԳԻՔՕ, *Պէպօի ազգական*	Պ. ՄԻՐԱՂԵԱՆՑ †
ԿԱԿՈՒԼԻ, *Պէպօի բարեկամ*	Պ. ՄԵԼԻՔ-ԱԴԱՄԵԱՆՑ
ԳԻԳՕԼԻ, *Արութինի դուրսի աշկերտ* .	Պ. ՄԱՆԴԱԿՈՒՆԻ †
ՍԱՄՍՕՆ, *Արութինի տանու ծառան* . .	Պ. ՏԷՐ-ԱՍԱՏՈՒՐԵԱՆ †

Երկու այլ ծառաներ Արութինի տանը։

Առաջին եւ երրորդ գործողութիւնները կատարվում են Պէպօի տանը. իսկ երկրորդը Արութինի տանը։

Անցքը պատահում է Թիֆլիզում 1870 *ին։*

ԿԷԿԷԼ. 18 տարեկան, միջին հասակով, թարմ գրաւիչ դէմքով, սև երկար մազերով։ Վրացնակ հասարակ հագուստ (ճակատի աղլուխ, չէքիլայ, չթէ դէրլայ և այլն)։ Ձայնը քաղցր և շարժուածքը համեստ։

ԳԻՐՕ. 65 տարեկան. միջին հասակով, փոքր ինչ մէջքը ծռած։ Սպիտակ մազեր և բեխեր, երեսը թրաշ։ Վրաց հագուստ՝ սպիտակ շապիկ, դօշը սև ղայթանով բոլորած. սպիտակ ղալամքարէ կամ մուք կապոյտ նաշուրի արխալուխ, սև մահուդէ կաբայ և լայն շալուար։ Խարազի սև լաչէներ ցածր կրնկներով. բուխարու սև գդակ ծայրը ներս ծալած. հասարակ շալէ կամ կապոյտ զանաւուղէ գօտիկ։ Գործ է ածում ձեռնափայտ, բուռնոթի և կապոյտ չթէ թաշկինակ։ Մանդալը, շարժուածքը և խօսակցութիւնը չափից դուրս դանդաղ։

ԿԱԿՈՒԼԻ. 25 տարեկան, հասակով փոքր ինչ ցածր Պէպօից։ Երեսը կարմիր և գեղեցիկ, սև մազեր ճակատի վերայ բերած, բարակ յօնքեր, բարակ բեխեր և նօսր կարճ մօրուք։ Թիֆլիզի բուն պաժառնու կամ կինտոյի շքեղ հագուստ՝ մաւի մորթէ մեծ գդակ Բաքուի ձևի, կարմիր մեռաքսեայ շապիկ և դօշլուղ. կապոյտ կամ սև զանաւուղէ արխալուխ, քոբաչու սև շալից կարճ և չաքերով չոխայ, միևնոյն շալից լայն շալուար, ծայրերը բոլորովին զանգեալում կամ պաձիճում ամրացրած։ Դօշլուղը, արխալուխը և չոխան ամենաշքեղ ձևով զարդարած կլապիտոնէ լայն բաֆթաներով։ Լէգգու երկար ճտեբաւոր չուստիներ, բարակ ոսկեթելով բոլորած. արծաթէ լայն քամար, բաղդադէ թաշկինակ։ Ձայնը, շարժուածքը և խօսակցութեան ձևերը կօշտ.

ԳԻԳՕԼԻ. 25 տարեկան։ Վրաց հասարակ հագուստ՝ սպիտակ չթէ արխալուխ, դօշն կօճակները կապած, սև մահուդից կաբայ. նոյն մահուդից կամ սպիտակ պարուսէնի շալուար. նեղ արծաթէ քամար. ձեռքին գլխարկ—ֆուրաշկայ։

ՍԱՄՍՕՆ. 18 տարեկան. սև երկար մազեր եւրոպական ձևով սանրած։ Եւրոպական սպիտակ շապիկ, հասարակ չթէ արխալուխ, կրծքի կօճակները բաց, նեղ քամար և գունաւոր նեղ շալուար։ Յետոյ չերքեզի շքեղ հագուստ՝ սօսանի ատլասէ արխալուխ բոլոր կօճակները կապած, սպիտակ մահուդէ չերքեզկայ արծաթէ մասրաներով, նոյն մահուդից նեղ շալուար ծայրերը կարմիր մահուդով. բոլոր հագուստը զարդարած է կլապիտոնէ բաֆթաներով. Եւրոպական փայլուն կօշիկներ, արծաթէ շքեղ քամար, արծաթապատ դաշոյնով։ Բարութամանի կլապիտոնէ լայն բաֆթայ։ Բոլոր ժամանակ առանց գլխարկի։

ԵՐԿՈՒ ԱՅԼ ԾԱՌԱՆԵՐ ֆիրակով, սպիտակ ձեռնոցներով և առանց գլխարկի։

Գրադարան

ԱՐԱՐԱՏԱԾՈ Ա

Բեմը ներկայացնում է հին ձեւի աղքատիկ սենեակ Ծարերներով, դոլաբներով, լուսամուտով եւ երեք դռներով՝ աջ, ձախ եւ մէջ տեղ։ Ձախ *) կողմը դրած է գորգով ծածկած տախտ նստարով եւ մուծաբայով, իսկ աջ՝ հասարակ սեղան։ Սենեակի այս անկիւնում կապած է մի Ծոկ։ Դոլաբներում եւ Ծարերների վերայ դարսած են հինօրեայ պղնձէ, կաւէ եւ փայտէ ամաններ։ Միքանի հասարակ աթոռներ վերջացնում են սենեակի զարդը։ Ժամանակը կէսօր է։

ՏԵՍԻԼ Ա

ՇՈՒՇԱՆ, տախտի վերայ նստած դուլպայ է գործում եւ ԿԷԿԷԼ, սեղանի մօտ աթոռի վերայ նստած շուապով կար է անում։

ՇՈՒՇԱՆ։

Ձիս իմանում քա։

ԿԷԿԷԼ։

Այ, էս էլ պրծնիմ, դէդի։

ՇՈՒՇԱՆ։

Թող, մէքիչ դնջայի, իժում պրծի։

ԿԷԿԷԼ։

Չի ըլի դէդի է, հօրէս տէրը գուքայ։

*) Աջ եւ ձախ, բոլոր գրուածում պէտք է ընդունել հանդիսականների դիրքից նայելով։

ՇՈՒՇԱՆ։

Նրա աչկն էլ կարիմ, խիստ շատ է տալի։

ԿԷԿԷԼ։

Բանն էլ էտ է է, դէդի, ինչրու նրա գալը դիփ հազիր վուր չըլի, էլ թամամ գինը չի տա. խօ գիդիս ինչ անաստուձն է։

ՇՈՒՇԱՆ։

Ախար աչկիտ լուսը խօ չիս կանա հանի, տաղ գիշեր հէնց բռնէ չիս քնի ու ջէր վուրդի էր ծէքը, վուր էլի բանի նստեցար։

ԿԷԿԷԼ։

Ի՞նչ անինք, դէդի, խղճի հացը էժան չէ ճարվում։

ՇՈՒՇԱՆ։

Հէրիք արա, հէրիք, վուրթի։ Ջանդամը միր գլուխը, վունցօր ըլի կու ապրինք։

ԿԷԿԷԼ։

Էս սահաթիս, դէդի ջան, այ, Աստուձ գիդենայ, քիչ է մնացի։

ՇՈՒՇԱՆ։

Սաղ գիշեր ջուամ ջուամի բերիք ինձ, դուն մէ կուռը, քու ախպուր փիքրը մէկէլը։ (Լռութիւն։) Նա էլ ի՞նչ էլաւ, իմքին բան չըլի էկի գլուխը։

ԿԷԿԷԼ, վախեցած։

Ի՞նչս ասում, դէդի, գանա էս անց էլ չէ մնացի դուսը գիշերով։

Նկարագրութիւն գործող անձանց:

ԱՐՈՒԹԻՆ. 60 տարեկան, միջին հասակով և կաղմուածքով, երեսը կարմիր, լեռը և թրաշած: Սև ներկած կարճ մազեր, հաստ յօնքեր և կրտած բեխեր: Եւրոպական հագուստ՝ սպիտակ շապիկ, դուռնաւոր փողապատ, ժիլէտ և պանտալօն: Սև սերթուկ և գլխարկ-ցիլինդր: Ոսկէ ժամացոյց ոսկէ շղթայիւ: Գործ է ածում գունաւոր մետաքսեայ թաշկինակ, փաբրիկ դեղին սաթէ համրիչ և ծոցի մէջ պօրտմոնէ: Շարժուածքը, մանգալը և խօսուածքը ծանր: Ըստ երևոյթին պատուաւոր անձն:

ԼԻՓԵՄԵԱՑ. 30 տարեկան, դեղեցիկ և վայելչակազմ կին՝ շէկ մազերով: Եւրոպական մօդայի ամենաշքեղ բայց կապոյտ հագուստ, վրացնակ գլխով (չեքիլայ, սակեկար ճակատի աղլուխ և այլն): Զարդարուած է ոսկէ ժամացոյցով, երկար շղթայով և զանազան ակնեղէններով: Պարանոցին ունի կարմիր բանտ: Խօսակցութիւնը, շարժուածքը և մանգալը արագ և կրակոտ: Նատ է քրքրվում:

ՊԼՊՈ. 35 տարեկան, թուխ և դեղեցիկ դէմքով, բարձր հասակով, ամուր կազմուածքով և լայն կրծքով: Սև կարճ մազեր բերած ճակատի վերայ, բարակ յօնքեր և բեխեր, երեսը թրաշած: Ունի երկու ձևաք Թիֆլիզի բուն լօթու հագուստ՝ մինը հաստակ, միւսը դարդի: Առաջինն է՝ չթէ կամ սպիտակ շապիկ, մուք կապոյտ գօշլուղ սև ղայթանով բռլրած. սև նաշուրի արխալուխ, լէգգու սև շալից չոխայ առանց դարդարանքի, միևնոյն շալից լայն շալուար, ծայրերի ներսի կողմը զանդեալի մէջ չարչուրապով ամրացրած, սև զափաղաւոր լափչիներ, նեղ արծաթէ քամար, կարմիր մորթէ երկար գդակ, ծայրը փոքր ինչ ներս ծալած, կարմիր բամբակէ թաշկինակ: Զարդի հագուստն է՝ մետաքսեայ կարմիր գօշլուղ և սև արխալուխ, երկուսն էլ բարակ ոսկեթելով բռլրած: Դիւառնի դեղին չոխայ սև լայն չափարիշով գարդարուած, նոյն կտորից լայն շալուար ծայրերը վերջիշեալ ձևով ամրացրած, սպիտակ զափաղաւոր լափչիներ կանանչ ղայթաններով. բուխարի սև գդակ, ծայրը կոտրած. մետաքսեայ Խմերէթու գօտիկ, կապոյտ բամբակէ թաշկինակ: Քայլը հաստատ, ձայնը քաղցր և ազդու, շարժուածքը և խօսակցութեան ձևերը բուն ժողովրդական:

ՇՈՒՇԱՆ. այրի կին 50 տարեկան, միջին հասակով և հոմեալի դէմքով: Վրայ հաստարակ հագուստ, մէ տակ (ցածր կապած) գլուխ. (ճակատի սև աղլուխ, սպիտակ հաստ լաչաք, սև փաթաթելու): Սև հաստարակ տերնոյից կամ աբրեշումից դերիայ գօշլ կապած: Հաստարակ սև շալ: Տանից դուրս գնալու ժամանակ գործ է ածում ապիտակ զաթիպայ:

ՇՈՒՇԱՆ։

Էս օր խիստ ուշացաւ, ԿԷԿԷԼ. առանց էն առուտ-նիրը տուն է էկի ու հիմի հօրէս կէսօրի վուխտն է։

ԿԷԿԷԼ։

Ինչ հաջաթ, դէդի ջան, էգէբա փողոցումը բան լուս ննդաւ։

ՇՈՒՇԱՆ, ողոց հանելով։

Աստուձ անէ էտէնց ըլի, վուրթի, սիրաս գնում ու դալիս է. ո՞վ գիդէ ջուրը մինձացաւ, ո՞վ գիդէ իմքնի էդնէն ննդաւ ու ինքն էլ հիդը գնաց։

ԿԷԿԷԼ։

Է՜, ի՞նչեր իս ասում, դէդի։

ՇՈՒՇԱՆ։

Նրա գլխին էլ վուր մէ բան դայ, ջուրն ածելու կու դառնանք։

ԿԷԿԷԼ։

Աստուձ գիդենայ անմիղ իս նիղանում, դէդի ջան, էրէխայ խո չէ, սիրաս էլ անմիղ շուռ ու մուռ իս բերում։

ՇՈՒՇԱՆ.

Էսէնց էլ ապրիլ կուլի՞։ Հախմիան Տէրն անէ քու դաղատանը, Արուրթին։ (Դրսից ոտի ձայն է լսվում։)

ԿԷԿԷԼ, ուրախ։

Ա՛յ, դէդի, հօրէն։

ՇՈՒՇԱՆ, ականջ դնելով։

Նա՞ է։ (Գլուխը շարժում է։) Չէ՜։

ՏԵՍԻԼ Բ

ՆՐԱՆՔ ԵՒ ԳԻՔՕ։

ԳԻՔՕ, ներս մտնելով միջի դռնից, գլխարկը ծածկած եւ ձեռին փայտ։

Բարի լուս ձիկ։

ՇՈՒՇԱՆ, տխուր։

Աստծու բարին, Գիքօ, համեցէք։

ԿԷԿԷԼ, վերկենալով Գիքօին գլուխ է տալիս, յետոյ առանձին։

Աչկս քիզ էր մնում։ (Նստում է իր գործին։)

ԳԻՔՕ, նստելով աթոռի վերայ Շուշանի մօտ։

Վո՞ւնց իք, ի՞նչ բարին հարցնինք։

ՇՈՒՇԱՆ։

Փառք Աստծու, կանք։

ԳԻՔՕ։

Է՜, փառք Աստծու։ Էս ո՞ւր է Պէպօն, ջէր չէ տուն էկի։

ՇՈՒՇԱՆ, վախեցած։

Հը՞ա, իմքին խաբար կա՞։

ԳԻՔՕ։

Հա, բան ունիմ ասելու։

ՇՈՒՇԱՆ, ծնկանը խփելով։

Վա՛յ քոռանամ ես, *) ի՞նչ խաբար է։

---

*) Թիֆլիզի բարբառում Ի-ն բառի սկզբում, երբ նա չէ փոխարկվում բոլորովին ուրիշ ձայնաւորների, (ախպէր, Էրազ, ֆրիդուն, օրՁում,) բաղաձայնի առաջ եւս պահպանում է միշտ այն հնչումն,

ԳԻՔՈ, ուղղվելով։

Ինչ խաբար։

ՇՈՒՇԱՆ։

Հա։

ԳԻՔՈ։

Լաւ խաբար չէ, Շուշան։

ՇՈՒՇԱՆ, աւելի վախեցած։

Ի՞նչ է, խիղաւվի՞ լ է։ (Կէկէլը կսրը Ոողնելով, վախեցած նայում է։)

ԳԻՔՈ, զարմացած։

Ո՞վ է խիղտվի, ի՞նչ լիք ասում։

ՇՈՒՇԱՆ։

Պէպօն, բաս չէ խեղտվի։

ԳԻՔՈ, երեսը խաչ հանելով։

Տէր օղորմած Աստուած, էտ ես չիմ իմանում ինչ լիք ասում։

ՇՈՒՇԱՆ։

Ախար իրիդուն կէս գիշերին դամբը վիկալաւ, գնաց

որը յատուկ է նրան ա եւ օ ձայնաւորների առաջ։ Օրինակ՝ Էս, Էլի, Էա, Էարաք, Էօթն, Էօթանասուն բառերում է արտաբերվում է միեւնոյն ձեւով եւ նմանվում այն է-ին, որը լավում է է-ը, է-ղ բառերի է- վանկի սկզբում։ Զեւակերպելով է տառի այս ձայնը, կարելի է ասել, որ նա արտասանվում է ը̈է, ուր ը հնչվում է կիսաձայն եւ ամենամեղմ կերպով, այնպէս որ է-ի հետ նա կազմում է մէկ ձայնաւոր հնչիւն։ Ուրեմն այս դրուածում՝ Էս, Էլի, Էրեկ, Էրգէնա, Էքիշ, Էրգիր, Էփօր, պէտք է կարդալ ը̈էս, ը̈էլի, ը̈էրեկ, ը̈էրգէնա, ը̈էրեշ, ը̈էրգիր, ը̈էփօր, հնչելով ը̈է-ին ինչպէս ասած է։

ու ջէր չէ տուն էկի։

ԳԻՔՈ։

Վա՜, օխնած հոքի, վախեցայ, նա ի՞նչ խիղտվելու ահ ունէ։ Էն ի՞նչ Քուռը պիտի ըլի, վուր նրան ախտէ։

ՇՈՒՇԱՆ։

Բաս ի՞նչ խաբար էիր ասում։

ԳԻՔՈ։

Ինչ խաբար։

ՇՈՒՇԱՆ։

Հա, մէ չուստ ասա, թէ Աստուած կու սիրիս։

ԳԻՔՈ։

Մուլտի է, մէ քիչ համբերութիւն ունեցի, հէր օխնած։ Աստուած շատ բանիր է գրի մարթու ճակատին, վախտ կայ ուրախութիւն, վախտ կայ տխրութիւն։ (Գրպանից հանում է բուռնոթանան։)

ԿԷԿԷԼ, առանձին։

Ինչկլի կօսէ, իմն ինձ կու հանի։

ՇՈՒՇԱՆ։

Միզ ամա խօ զարթնի տխրութիւնը Աստուած ուրիշ բան չէ տվի։

ԳԻՔՈ։

Ի՞նչ անիս Շուշան, Աստծու ձեռին է ուրախութիւնն էլ, (Ցորանջում է։) տխրութիւնն էլ, (Կրկին յորանջում է եւ բուռնոթի քաշում։) հրմ...էէ, վունցօր Աստուած գուցէ, էնէնց կուլի մարթու բանը։

ՇՈՒՇԱՆ։

Նրա կամքն ըլի, ինչ անինք։

ԳԻՔՕ։

Էտէնց է, էտէնց, Շուշան։ Ախար էս օր առուտեհան լաւ բան չիմացայ. էլ չը գնջացայ, ինչրու չը գնացի ու ձիր փեսի հիդ դէմուդէմը չը խօսեցայ։ (Կէկէլին։) Շատ հարց ու բարով արաւ քիզ այ, Կէկէլ։ (Կէկէլը Թեթեւ գլուխ է տալի, առանձին աչքերը սրբում եւ կարը շարունակում։) Խիսա իմ կարօտի, կօսէ, (Բուռնոթի բաշելով։) հըմ...էէ։

ՇՈՒՇԱՆ։

Հալեցիր ու մաշեցիր խօմ, Գիքօ, մէ ասա ու պրծի էլի։

ԳԻՔՕ։

Էս սհաթիս, էս սհաթիս, Շուշան, (Բուռնոթին բաշելով։) հըմ... հըմ... վօխակ... Աստուձ, վուր մարթուն ստիղծիլ է, համիիրութինն էլ հիդն է տվի։

ՇՈՒՇԱՆ, առանձին։

Քու աչկն էլ։

ԳԻՔՕ, կրկին բուռնոթի բաշելով։

Հըմ... էն էի ասում, վուր, (Կամենալով փռշտալ։) վուր, վուր, վուր, (Փռշտում է։) ըա հըա, (Կրկին կամենալով փռշտալ։) ըա ըա ըա... (Փռշտում է։) ըա հըա։ Օհօ, հօ, հօ, հօ, ի՞նչ բուռնութի է, խէր էկաւ այ։

ՇՈՒՇԱՆ։

Առուխչ ըլիս։

ԳԻՔՕ։

Վուրթիքդ (Կամենալով փռշտալ։) ա ա ա ապրին (Փռշտում է։) ըա հըա։

ՇՈՒՇԱՆ, առանձին։

Այ չոռ ու ցաւ, թէ խօսիս։

ԳԻՔՕ։

Էս խէր ու կէս, (Կամենալով փռշտալ։) էս էլ, էլ (Կրկին փռշտում է։) ըա հըա. էս էլ ջուխտ խէր, կուլի վիրչը խէր ըլի։

ՇՈՒՇԱՆ։

Քունը վունց խէրն իմացայ ջէր ու վունց շառը։

ԳԻՔՕ։

Խէրն էլ ու շառն էլ Աստծու ձեռին է, Շուշան։ (Բուռնոթամանը գրպանը դնելով։) Օհ, խիսա թէժ բուռնութի է էլի անիծածը. հապըէնը մէ ջէր չի պատահի, վուր բուռնութու վրայ փռշտամ։ ամա էրեվում է իմ սովոր բուռնութին չին տվի. ^ղալբացաւ *) աշխարքը, Շուշան, ի՞նչ անիս։ (Բուռնոթամանը կրկին հանելով գրպանից եւ բաց անելով։) Իմքին խօ չկայ մէչը խառը։ (Տնդղելով։) Չէ, վունչինչ չէ էրեվում։ Աբա, Շուշան, քու աչկը կուլի ուփրօ լաւ ըլի կարում։

ՇՈՒՇԱՆ, առանձին։

Քու աչկի պիպիկն էլ կարիմ։

---

*) Ղ տառը այս ^ նշանով (^ղ) պէտք է արտասանել որպէս Պարսից կամ Թուրքաց ج կամ Վրացոց ղ։

ԿԷԿԷԼ, առանձին։

Պատիժ է։

ԳԻՔՕ։

Մէ ախ է, թէ Աստուած կու սիրիս։

ՇՈՒՇԱՆ, առանձին։

Ղաղաք է, (Անելով բուռնոթամանը եւ մնդղելով։) լաւ բուռնուԹի է էրեվում. ամա, մէ ասա թէ Ստիղծողը կու սիրիս, ի՞նչ խաբար իս բերի։ Հոքէներուս իսօ հանեցիր. (Բուռնոթամանը Գիրօի մօտ է դնում։)

ԳԻՔՕ։

Տօ, ի՞նչ խիստ իս շտապում։ Մուլաի տանը, էդէ-բա Պէպօն էլ վրահասնի, նրա բանն ուփրօ է։ (Քիթը շարունակ սրբում է թաշկինակով։)

ԿԷԿԷԼ, առանձին։

Ճաշն էլ էստի է ուղում անուշ անի, մինք իսօ խիստ շատ ունինք ուտելու, ճնացիլ էր սա։

ՇՈՒՇԱՆ, առանձին։

Բարիբան ննդնի քնԹումը։ (Գիրօին։) Ախար մէ խօսկ էլ է մայինց ասա։

ԳԻՔՕ։

Գիդիս ի՞նչ է, Շուշան, (Ձայնը ցածրացնելով։) մէ ախչիկատ դուս ղրգէ ախար է։

ՇՈՒՇԱՆ, ցածր։

Նա իր բանին է, ի՞նչ կու իմանայ, ցածր ասա։

ԳԻՔՕ։

Վուր իմանայ լաւ չէ, Շուշան, է. չիս գիդի թէ

Խիկարն ինչեր է ասում էստու վրայ։

ՇՈՒՇԱՆ,

Խիկարն ոնՀ է, քա, նա էլ խառն է էստումը։

ԳԻՔՕ, ծիծաղելով։

Հը, հը, հը, հը, (Ծիծաղը դառնում է հաղ։) հո՜, հո՜, հո՜, հո՜։

ՇՈՒՇԱՆ, առանձին։

Այ Աստծու կրակ, թէ ասիս ու պրծնիս։

ԳԻՔՕ, հաղը շարունակելով։

Խիկարը, հո՜, հո՜, հո՜, հո՜, փիլիսոփայ...հո՜, հո՜, հո՜։ (ՊԷՊՕՆ, կուլիսի ետեւից երգում է՝

«Շարաթը Շամ շուդա ասթ,
Շուբհի նադարադ,»)

ԿԷԿԷԼ, առաջ վազելով եւ ուրախ։

Այ, Պէպօն։

ՏԵՍԻԼ Գ

ՆՐԱՆՔ ԵՒ ՊԷՊՕ։

ՊԷՊՕ, երգը շարունակելով ներս է մտնում միջի դռնից գլխարկով, հասարակ սեւ հագուստով, թեւերը յետ ծալած, դամբը (ուրկան) ուսին եւ առաջեւը գոտկից կապած կարմիր թաշկինակում կենդանի ձկներ։

«Արաղի քիշմիշ ասթ,
Բարդար փիալա,
Գեալ այլաշ։» *)

*) Պարսկերէն՝ Գինին Դամասկոսի է եղել,

ԿԷԿԷԼ։

Աչկէներուս խօ ջուր կարեցիր, Պէպօ։

ՇՈՒՇԱՆ։

Ի՞նչի գիդիս, տօ, կէհաս ու կու կորչիս։

ՊԷՊՕ, ուրախ։

Վա, էսէնց վուր չանիմ, Աստուձ մանանայ խօ չէ դէվէր ղրդում միզ ամա։ Օ՜, Գիքօ, լաւ վուխտն իս էկի. մէ մուրծէք ուտեցնիմ քիզ էս սհաթիս, վուր քէփըդ գայ. ամա թէ քնթէտ բուռնութի իս կաթէցրի վըէն, էլ մէ թիքայ չիմ տուր տա, հա՜։ (Հանելով մի մեծ ծուկ։) Աբա, (Զկան պոչով Գիքօի Ֆշերին խփելով։) օ, շէնի կի ձիրիմէ, մէ թամաշա արա՛ էհ։

ԳԻՔՕ։

Զանէս, չանէս, տօ։ (Կէկէլը ծիծաղում է։)

ՇՈՒՇԱՆ, ժպտալով։

Մէ մուլափ, տօ, ըմպրօս հանաք է. բան էր խօսում։

ՊԷՊՕ, Ֆաշկինակը հանաքելով եւ ծիծաղելով։

Բա՛ն էր խօսում, աւտաս խօսկը խօսկին կարկտի պէս վըատայ։ (Գիքօի ձախ կուռը բռնելով եւ ամուր շարժելով։) Վո՞ւնց իս, վո՞ւնց, Գիքօ։

Կասկածանք չը կայ,
Հիւթը քիշմիշի է,
Վեր ա՛ռ փիալայ,
Թուրքերէն՝ Եկ նստի՛ր։

ԳԻՔՕ։

Կուռըս, կուռըս, տօ, էրկաթ է՞ մաջէտ։

ՊԷՊՕ, ծիծաղելով։

Բաս չէ ու քի պէս փափա կուլի։ (Ֆաշկինակով ձկները տալիս է Կէկէլին։) Աբա, Կէկէլ, էս տար մէ էնդի ջուրն ածա ու մէ կրակ էլ չաղ արա՛... (Ցածր ձայնով։) Փէտ խօ ունի՞նք։

ԿԷԿԷԼ, ուրախ եւ ցածր։

Մէ էրկու վառելու էլի կայ։ (Առնում է Ֆաշկինակը։) Մորթօսիմ էլ։

ՊԷՊՕ։

Զէ, չէ, չէ, Կակուլին աղանչաք արաւ, վուր նրան մուլափ տանք. խիստ է սիրում ձգան մորթիլը։ (Ցնդղելով ծուկը, Կէկէլի ձեռքին, Ֆաշկինակում։) Մէ մանիկ էս բէձաթին վուրդի է կուչ էկի է։ Տա՛ր, տար էս սրանց հոքուն մեռնիմ։ Էս էլ վուր առանց փուղ չըլի ճարվում, ո՞վ արժանի կօնէր միզ։ (Ծոցին խփելով եւ Կէկէլին ցածր։) Փուղ էլ ունիմ, Կէկէլ, այ. մի՛ վախենա, հինգ մանէթի ծախեցի։

ԿԷԿԷԼ։

Էնդուր էլ ուշացմա՛ր։

ՊԷՊՕ։

Վա՛... բաս.. Մէ էս գիշեր էլ գնամ։ Աստուձ աչկը քաղցրացրիլ է ինձ վրայ։

ԿԷԿԷԼ։

Ա՛խ, Պէպօ ջան, եարաբ քանի չարչըրվիս միզ

ամա։ (Դուրս է գնում ձախ դռնից, տանելով հետը Թաշկինակով ծուկը եւ կարը։)

ՏԵՍԻԼ Դ

ՆՐԱՆՔ ԱՌԱՆՑ ԿԷԿԵԼԻ։

ՊԷՊՈ։

Ուրիշ, Գիքօ, ասա՛ է, փուղը լաւ է թէ ջանը։

ԳԻՔՕ։

Էրկուսը մէտի լաւ է, Պէպան, թէ Աստուա՛ծ կուտայ։

ՊԷՊՈ։

Տօ, էտո՛ղդա տարի է ապրում իս աշխարքումն ու չիս գիդի, վուր փուղը Աստուա՛ծ չէ բաժնում։ Թո՛ղ Աստուա՛ծ մէնակ ջան տայ մարթու, փուղ է ու փուղ։ (Դամբը բացանելով։) Փուղով իմ առի էս, (Իր կրծքին խփելով։) ա՛յ սաղ ըլի։ (Կապած դամբը տնդղելով։) Օհո՛, հո՛, հո՛, հո՛, ի՞նչ դամբ է. էնդա՛ղդա գցեցի, էլի սաղ սալամաթ է մնացի։ Պէտրէ մօրէվի պէս տիդ չի ըլի. փռում էի թէ չէ, գրմ, գրմ, դուս էին գալի լօթիքը խլպլտալի։ Խալխը վուր խիլք ունենայ, էսանց էլ բան ու գուրձ չի ունենայ։ Էն վուր գցում իս... ու ինչրու դուս քաշելը, սիրադ դընգ, դընգ. կօսիս թէ մահ ու կինքդ պիտի բաժնին։ Թէ մութ դիշեր էլ է, հէնց գիդենաս աստղերը հիդրդ մասլահաթ ըլին անում, ու թէ լուս է խօմ, կօսիս լուսնիակը գլխիս փարվընի պէս կանգնած է լօթին. էշխու

էլ վուր տուն իս գնում ու վուտնիրս էլ թաց է ըլում, ու մէ բաշ փրում իս, օհ, շէնի կի ձիրիմէ, (Գցում է դամբը Գիքօի գլխին, Գիքօն մնում է մէջը։) օհ,օհ, Գիքօ, ի՞նչ ձուգն իս, արդի պղինձ պիտի քիզ։ (Ծիծաղում է։)

ՇՈՒՇԱՆ, ծիծաղելով։

Տօ, բաղրօս էտունք է։

ԳԻՔՕ, ազատուելով։

Տօ, վախեցայ էլի, էս ի՞նչ հանդի հանաք է։

ՊԷՊՈ, դամբը հաւաքելով։

Բաս դիփ մէ գլուխ խօ չիմ լաց ըլի։ Սիրտս վուր դարդին տուր տամ, լուրի պէս կու տրաքի։

ԳԻՔՕ։

Զէ, մայինց, մէ քիչ անդնջում իս։

ՊԷՊՈ, դամբը Թօկի վերայ փռելով։

Բաս չէ ու քի պէս հում հում խաշլամա կուլիմ. բուռնութին քնթէմէս ծլծլալի դէվէր ըլի գալի ու ինչրու մէ բան ասիմ, ուխտի լօխմի պէս խօսկիրը բերնումս ծամում ըլիմ, (Ծիծաղում է։) հա՛, հա՛, հա՛, հա՛։

ԳԻՔՕ։

Հէյ գիդի, Պէպան։

ՇՈՒՇԱՆ։

Տօ, բաղրօս էտունք է, մէ անգամ դի՛ ախար է, սիրտս շուռ էկաւ։ Ինչօր փիս խաբար է իմացի միր փեսի դէմիր։

ՊԷՊՈ, վախենալով։

Ի՞նչ փիս խաբար։

ԳԻՔՈ։

Մէ նստի, Պէպան, հէնց ապրիս։

ՊԷՊՈ։

Էսէնց էլ լաւ իմ, ասա։

ԳԻՔՈ։

Չէ, վուր նստիս ուփրօ լաւ կուլի։

ՊԷՊՈ, նեղանալով։

Տէր օղորմած Աստուած։ (Մօտ է քաշում մէկ ածու եւ նստում Գիքօի ձախ կողմը։) Հը, էս էլ նստեցայ։

ԳԻՔՈ։

Մուլափ էր, տաքնալով բան չի դառնա ախար։ Պիտի փիքը անինք, թէ վունց օտկինք բանին։ (Բուռնոթամանը որոնում է։) Ինչ էլաւ, տօ, էստի էր։

ՊԷՊՈ, գտնելով եւ տալով նրան։

Հը, բռնէ, ինչրու չը քաշիս, խօ չիս կանա խօսի։

ԳԻՔՈ, քաշելով բուռնոթին։

Ա՛յ, ախպէր, էսօր առուտեհան մէ փիս հուտ իմացայ։ (Քաշում է բուռնոթին։) Ը՞մ, միթամ ձիր փեսի համա ուրիշ ախչիկ ին լուս գցի։

ՇՈՒՇԱՆ։

Վա՛յ քոռանամ ես։

ՊԷՊՈ, վախեցած։

Էր։

ԳԻՔՈ։

Բա՛ս, միթամ խիստ լաւ ախչիկ է, կօսէ, ու փուղ ու բաժինքն էլ ձիր խոստացածի վրայ ուփրօ շատ։ (Կրկին քաշում է։) Ը՞մ։

ՊԷՊՈ, բարկացած։

Ը՞մ, ը՞մ, տօ քաշէ ու պրծի էլի։ (Բուռնոթամանը զարդակում է Գիքօի ձեռքում, որը բռնած մօտ է տանում նրա՞՞ քթին։) Հը՛, կշտացի։

ԳԻՔՈ։

Վա՜, վա՜, բուռնուլթիս։ Ի՞նչ գիժ մնղին իս, տո՜։ (Բուռնոթին կրկին ամանն է ածում։

ՊԷՊՈ։

Արիվս գիդենայ, Գիքօ, էլ սաղ չիս պրծնի, թէ դիփ մէտի էս սհաթիս չիս յիդ ասի։

ԳԻՔՈ։

Տօ, ախար վուր դաթար չիս տալի։

ՇՈՒՇԱՆ։

Դուն ուփրօ շշկլեցրիր, քա՛։

ՊԷՊՈ։

Դէ չուստ։

ԳԻՔՈ։

Հա, էն էի ասում։ Ի՞նչ էի ասում, մտէս ննգաւ։

ՊԷՊՈ, կիսածայն, առանձին։

Ա՛յ զահրումար։

ԳԻՔՈ, շարունակելով։

Հա՛, վուր առուտեհան, էն հանդի բան իմացայ։

ՊԷՊՈ։

Ը՛հ, քու մարթ ասողին ինչ ասիմ։ տո, էտ խօմ ասիր, իժում։

ԳԻՔՈ։

Այ, իժում, գնացի դէմուդէմը ձիր փեսի մօդ, տեսայ տանը չէր։ Էնը՞նց գնացի դուքանը, տեսնիմ էն ալդեղաշտի Նաթէլը հիդը քչփչում է։ Էն սհաթին ձկլտկիս կծեցի, (ձկլտը բերանն է դնում։) ասի՝ բանը բանի նման է։ Մէ քիչ մնացի։ Էն սատանի կնիկը վուր քաշվեցաւ, մօդ գնամ մէ լաւ ծանր ու բարակ հիդը խօսիմ էս միր պարնի հիդ։

ՊԷՊՈ, անհամբերութեամբ։

Ի՞ժում, ի՞նչ ասաւ։

ԳԻՔՈ։

Այ էս սհաթիս, կարքով գալիս իմ էլի։

ՊԷՊՈ, վերկենալով եւ քուռնցը բարձրացնելով։

Ը՛հ, Գիքո, էկաւ Աստուած դիդենայ։

ԳԻՔՈ, յետ քաշվելով։

Տօ, մի՛ խառնի էհ։

ՇՈՒՇԱՆ, բոլոր խօսակցութեան ժամանակ անհամբերութեամբ ծնկները տրորում է։

Վա՛, լաղաղէմարթա, Պէպո։

ԳԻՔՈ։

Չէր անգամը բաղմնչու արաւ, ամա վերչը կոտրվեցաւ ու իմացաց զուրթ դուս էկաւ։ Կինաղամ լեզուս փուրը ննգաւ, էսօրվայ անմահ պատարաքը գիդենայ։

ՇՈՒՇԱՆ։

Վոյ, գեղինը պատռէ ու նրան դէվէր տանէ, վուչ։

ՊԷՊՈ, բարկանալով։

Վա՛, գժվել իս, թէ հանաք իս անում։

ԳԻՔՈ։

Իմ հոքին գիդենայ։

ՊԷՊՈ։

Տօ, իժում նա ի՞նչ ասաւ։

ԳԻՔՈ։

Նա էլ էն ասաւ, վուր ես ձիր Կէկէլին խիստ իմ ուզում, կօսէ. ամա բանը վուր գլուխ չէ գալի, կօսէ, ես ի՞նչ անիմ, կօսէ։

ՇՈՒՇԱՆ, երկու ձեռքը ծնկներին խփելով։

Մտի՛կ էն աննամուսին էհ։

ՊԷՊՈ, բարկանալով։

Վո՞ւնց թէ գլուխ չէ գալի։

ԳԻՔՈ։

Էնէնց էլի, ասում է, ի՞նչի ինչ խոստացիլ իք, չիք տալի, կօսէ։ (Առանձին ոգոց է հանում։) Էհ, Աստուած։

ՊԷՊՈ։

Վո՞ւնց թէ չինք տալի... տօ, գանա ինքը չի գիդի բանի զօրութինը։

ԳԻՔՈ։

Ես ինչբու վո՞ւր մէ օրը մնամ, կօսէ։

ՇՈՒՇԱՆ։

Ո՞ւր է մնում, ո՞վ է ասում նրան վուր մնայ։ Թող

ուզէ, խոստացածն էնդի չէ։ Եփօր դուս դու քայ, իրն է ու իրը։ Աստուձ անէ քու դիւանն, ԱրուԹին։

ԳԻՔՕ։

Նա էլ էտ է ասում, Շուշան, էֆ. ես, ասում է, ախ-չիկ իմ ուզի, կօսէ, դաւի դառաբա խօմ չիմ առ-նում, կօսէ։ (Գրուխը շարժում է։)

ՊԷՊՕ։

Տօ, էտունք դիփ մէտի խօ հարուր ջէր խօսիլ ինք, հիմի նուր չար, նուր բարի։

ԳԻՔՕ։

Բանն էլ էն է, Պէպօ ջան, վուր նա ասում է՝ էտ բանն, ասում է, տարիք կու քաշէ, կօսէ, ու ես էլ չիմ կանա համփիրի, կօսէ. կնիկ ուզելը խիստ իմ ուզում սրտով, կօսէ։ (Աղաղակում է։) Միղայ քիղ Աա-տուձ, միղայ... էս իմ միխկի պատիժն է դիփ...

ՇՈՒՇԱՆ։

Մէ խօսկով ասա, Գիքօ, վուր Կէկէլին թողնում է էլի։

ՊԷՊՕ։

Ու բանը մօշլա է ըլում։

ԳԻՔՕ։

Թէ էս սահաթիս փուղը չը ճարեցինք, մօշլա ա-բած է ու մօշլա ալած։

ՊԷՊՕ։

Ինատակ։

ԳԻՔՕ։

Խատակ, խատակ։

ՊԷՊՕ, չարաղած վերկենալով եւ ձեռքը ձեռքին խփելով։

Վա՜յ քու տղիս տղայ։ (Դառնում է դէպի Գիքօն եւ ձեռ-ները առաջ տանում։) Տօ, իժում ի՞նչ ասիր։

ԳԻՔՕ, յետ քաշուելով, վեր է կենում տեղից։

Դուն ինձ ասա, էլ ի՞նչ պիտէի ասի։

ՊԷՊՕ, առաջ գնալով։

Տօ, ախար չը հասկացրիր իրան, վուր չինք խափում։

ԳԻՔՕ, յետ քաշուելով։

Վա՜, բաս չը հասկացրի։

ՊԷՊՕ, առաջ գնալով։

Իժոնում։

ԳԻՔՕ, յետ քաշուելով։

Իժում էլի էն ասաւ էլի, վա՜։

ՊԷՊՕ, առաջ գնալով։

Ու դուն էլ ղաբուլ արիր։

ԳԻՔՕ, յետ քաշուելով։

Վա՜։

ՊԷՊՕ, առաջ գնալով։

Զէ, մէ ի՞նչ խիլք բանեցրիր, ի՞նչ...

ԳԻՔՕ, հասնելով բեմի աջ կողմը եւ ճանապարհ չը գտնելով։

Վա՜, հէր օխնած, ես ի՞նչ անիմ, թէ կի էն մարթն էնէնց է ասում։

ՊԷՊՕ։

Տօ, դուն ի՞նչ ասիր, դոնն։

ՇՈՒՇԱՆ։

Պէպան, դժվիլ ին, թէ ինչ խաբար է։ Ախար էտ

հանգի խօսիլ կուլի՞։

ԳԻՔՕ։

Տօ, ես էլ էն ասի, ինչօր գիդիս էլի։ Ասի՝ եա ճնա՛ ինչրու աղա ԱրուԹինի փուղը դուս գայ, էնչախն ուզէ՛, ասի, եա ԹԷ չէ, ասի, հիմիսկէվէտ ուզէ՛ ու ԱրուԹինիմէն փուղը դուն ա՛ռ, ասի։

ՊԷՊՕ։

Իժ.ՒԼՄ։

ԳԻՔՕ։

Իժում էն, վուր նա կտրական ասաւ, ԹԷ ես դաւի դառաբի գլուխ չունիմ, կօսէ։ Գուզէք փուղը էս օր բերէ՛ք, ես էս զիշերէվէտ պսակվիմ, կօսէ։ Ես իմ խօսկէմէն յիդ չիմ կանգնում, կօսէ։

ՊԷՊՕ։

Տօ, բաս էտ էլի՞ քօվլանում, ԹԷ խելօք մարԹ իմ, կօսէ։ Էտ էլի՞ ասում ԹԷ. Խիկար իմաստունը գլխէմէն ինչրու վուռքը դիփ կարԹացիլ իմ, կօսէ, էտ է էլի՞ քու շնուքը։

ԳԻՔՕ։

Ախար... (Հաղում է։) Հո՜, հո՜. ես ի՞նչ միղ ունիմ։ (Հաղը սաստկանում է։) Հու, հու, հու...

ՊԷՊՕ։

Այ, զահրումար ու չոռ ու ցաւ։

ՇՈՒՇԱՆ։

Պէպօ, Պէպօ, գժվիլ ի՞ս։

ՊԷՊՕ, հեռանալով Գիքօից։

Չէ՛, ես գնամ մէ էս սհաԹիս հիդը խօսիմ, տեսնիմ ԹԷ վո՞ւնց է Թողնում։

ՇՈՒՇԱՆ, վերկենալով տեղից։

Չէ՛, դուն կաց ջէր, Պէպօ, ես գնամ մէ էն կապ կտրած ՆաԹէլին տեսնիմ։ (Շտապով դաՀիրան հանում է նահալու տակից եւ գնում մինչեւ միջի դուռը։) Գիքո՛, մէ հիդս արի՛, ԹԷ քու Աստուա՛ծ կու սիրիս, էս քուչէն անցկացրու։ (Դուրս է գնում այն դռնով։)

ԳԻՔՕ, գնալով եւ հաղից խեղտուելով։

Ֆի՛ մօդ բան բռնիլը դաւի դառաբա է դրուստ։ (Դուրս է գնում Շուշանի ետեւից։)

ՊԷՊՕ, ետեւից։

Ֆու մարԹ ասօղէն էլ ինչ ասիմ։

ՏԵՍԻԼԵ

ՊԷՊՕ, մէնակ, մի՞փոքր լռութիւնից յետոյ։

Ուրիշ ախչիկ գուզէ՞ն, բաս Պէպօն մեռաւ էլի... տեսնիմ վո՞ւնց իս ուզում։ (Նորից լռութիւն։) Չէ՛, Պէպօ, դուն հալալ ողայ իս, հալալութինը սիրում իս, քու բանու

էլ հալալ կաց։ Ի՞նչով է սուտ քի մօդ քու փեսէն. խոստացիլ իս, պիտիս կատարի՛ քու խօսկը... ԹԷ գլխիտ գդակ ունիս պիտիս տա, ԹԷ-գուզ կաշիտ պլօկվի, ԹԷգուզ հոքիտ դուս գայ պիտիս տա... Ամա վո՞ւրդի ճարիմ էն զահրումար փուղը... Ոչ կու տայ ինձ էնդ՞ադա։ (Նայում է պատերին։)

ՈՉ՝ ինչ կու տայ էստուրը. դիփ մէտի վուր գրաւ դնիմ, դիփ մէտի վուր ծախիմ, տուն, տիղ, շուր... ի՞նչ կու տան... կիսի կէսն էլ չի դուս գա... էս էր վիրչն էլի, էս էիր ուզում էլի, ԱրուԹին, էստու համա էիր չարչարում էլի ինչրու հիմի... աշխրքումը պիտի խայտառակ ըլիմ էլի։ Էլ իմ ննդրտերանց էրեսին վո՞ւնց մտիկ անիմ.. ի՞նչ կօսին։ (Գլխարկը յատակին է խփում։) Փո՛ւ քու նամուսին...

ՏԵՍԻԼ Զ

ՆԱ ԵՒ ԿԷԿԷԼ։

ԿԷԿԷԼ, շփոթուած ներս մտնելով ձախ դռնից։

Էս ի՞նչ խաբար է, Պէպօ։

ՊԷՊՕ, գլխարկը վերցնելով։

Վունչիչ, ինչ խաբար պիտի ըլի։

ԿԷԿԷԼ։

Ի՞նչ իս ինձմէն Թախկացնում։ (Յաւալի։) Ես իմացայ, դիփ իմացայ, Պէպօ։

ՊԷՊՕ։

Ի՞նչ իմացար, Կէկէլ, ի՞նչ իս լաց ըլում։

ԿԷԿԷԼ, նոյնպէս։

Իմացայ, Պէպօ ջան, իմացայ... էս սհաԹիս դէդէն ու Գիքօն վուր գնացին... Նրանց խօսիլն իմացայ... ինձ Թողնում ին։

ՊԷՊՕ։

Մուլ՛ափ, մուլ՛ափ, Կէկէլ, ջէր էլի Աստուձ օղորմած է։

ԿԷԿԷԼ։

Աստուձ շատ վուխտ է խառով է կացի իմ գլխին, էլ ի՞նչ օղորմած է... Խալխումն ինձ պաչ անէ, դիփունքը շնահաւուրին, իժում ինձ Թողնէ ու գնայ ուրիշին ուզէ... Էնտու համա ստիղծից ինձ Աստուձ... միԹամ անմիղ փալաս էի, քուչէն գցեցին, միԹամ քուչէ ցիկս իմ, Թող վուտի տակը կոխչրտին։ Վա՛յ իմ նամուսին։ (Լաց է լինում։)

ՊԷՊՕ։

Ախար, ջէր անմիղ իս լաց ըլում, Կէկէլ, է՞։

ԿԷԿԷԼ, շարունակելով լացը։

Ի՞նչէ գեղինը չիմ մտնում էս սհաԹիս, էլ իմ տօլ ախչկերանց էրեսին վո՞ւնց պիտի մտիկ անիմ, դիփունանց խօսելու պիտի դառնամ, դիփունքը մասխարա պիտի գցին ինձ, դիփունքը պիտի վրէս ծիծաղին։ (Լաց է լինում։)

ՊԷՊՕ, փաՀաՀուելով։

Կէկէլ ջան, Կէկէլ։

ԿԷԿԷԼ։

Կէկէլի շինքին քար կապէ, Պէպօ ջան, ու տար Քուռը շպռտէ..... էլ ես վո՞ւնց պիտի ապրիմ աշխրքումը։

ՊԷՊՕ։

Մէ սիրտդ յիդ բի, Կէկէլ, է՞... փուղի բան չէ, վուրդիօր կուլի կու ճարինք... Թէ ԱրուԹինը չի տա. դիփ մէտի կու ծախծրխիմ, կէհամ ախկրտու-

Թին կանիմ, գլուխս գրաւ կու դնիմ ու քիզ էտէնց չիմ Թողնի։

ԿԷԿԷԼ։

Զէ, չէ, Պէպօ ջան, ես իմացայ, վուր էտ փուղը էսօրէվէտ է հարկավուր ու մէ օրումը միզ ոչ ինչ կու տայ, ոչ ինչ կու սիվցնէ. գլուխտ առանց էն էլ միզ ամա գրաւ իս դրի ու գրաւ։ Վուչ էր էլի էն փուղի անումը. էս բէդնամուԹինն էլ չէր գա գլուխս։ (Լաց է լինում. կուլիսից լսվում է ԿԱԿՈՒԼՈՒ ձայնը՝ Պէպօ։)

Գեղինը պատուէ ու ինձ դէվէր տանէ։ (Դուրս է վազում ձախ դռնով։)

ՊԷՊՕ, ծնկանը խփելով։

Վայ քու Պէպօին։ (Նեղացած նստում է տախտի վերայ։)

ՏԵՍԻԼ Է

ՊԷՊՕ ԵՒ ԿԱԿՈՒԼԻ։

ԿԱԿՈՒԼԻ, ներս գալով միջի դռնից, մէկ ձեռքին Թաշկինակում կապած պաշարեղէններ. իսկ միւս ձեռքին կէս Թունդանոց։

Մէ գինի իմ բերի, Պէպօ, մէ գինի, վուր էհ, դաւի չունիմ։

ՊԷՊՕ, զառնացած։

Քէփ կանինք էլի։

ԿԱԿՈՒԼԻ։

Վա՛, ի՞նչ է պատահի։

ՊԷՊՕ։

Վունչիչ։

ԿԱԿՈՒԼԻ։

Վա՛, չի՞մ տեսնում, էփած էլ կու ճանչնամ քիզ։

ՊԷՊՕ։

Էհ, մախլաս, կու խօսինք էլի իժում։

ԿԱԿՈՒԼԻ։

Էլի, էլի տեսիլ իս նրանցը։ Հիռու կացի Թէ ախպէր իս։

ՊԷՊՕ։

Թողնում ին վուր հիռու կենամ։

ԿԱԿՈՒԼԻ։

Արի մէ մէ ստաքան գցինք ջէր հալա, Թէ անդիկօրը չին կորչի ու կու տեսնիս։ Վաղ ու վաղ ինձ մոդ էլ խիստ չուստ չուստ էին գալի. ամա (Խփում է կէս Թունդանոցին։) դիղը գԹայ։ Հանց պուղերը տեսնում իմ Թէ չէ, շաբաշ։ (Վրայ է բաշում կէս Թունդանոցը, յետոյ երդում է բայաԹի։)

«Աղիզմ նաչար աղլամա,
Գիւն դրը գէչար աղլամա,
Բու ղարի Թարս բաղլիան»

ՊԷՊՕ, գլուխը շարժելով, կիսձայն եւ Թիւ։

Բիր գիւն աչար աղլամա։ (Վեր է կենում տեղից։)

ԿԱԿՈՒԼԻ, շարունակելով երդը, վերջացնում է բայաԹին։

«Բիր գիւն աչար աղլամա։» *)

---

*) Թուրքերէն՝ Սիրելիս անձար, մի՛ լար,
Օր է, կանցնի, մի՛ լար,
Այս դուռը Թարս կողպողը
Մէկ օր բաց կանի, մի՛ լար։

Աբա, (Տալիս է գինին Պէպոյին։) տիս, թէ թրի պէս չը կտրէ։

ՊԷՊՈ։

Է՛հ։

ԿԱԿՈՒԼԻ։

Զիսկում, տեսնում իմ խիսա մինձիրնին էկի է։ հը՜ վո՞ւնց ին (Թաշկինակը եւ գինամանը դնում է սեղանի վերայ եւ ձեռքերով պտղեր ներկայացնում։) էս էս ղաղա պուզկերը... հը՜... ջէր արթուրմէքը, սալքի՞լ ին թէ չէ։ Ախար կու ճանչնամ ինչ պտուղ էլ իս է։

ՊԷՊՈ։

Հանաքի վուխտը չէ, Կակուլի, թէ Աստուձ կու սիրիս, բօղաղներուս դուս է կտրվում։

ԿԱԿՈՒԼԻ։

Վա՛հ, ի՞նչ խաբար է։

ՊԷՊՈ։

Էլ ինչ խաբար պիտի ըլի, բէդնամ ինք ըլում, քվերս թողնում ին։

ԿԱԿՈՒԼԻ։

Փեսէ՞ն։

ՊԷՊՈ։

Բաս ուրիշ ո՞վ կուլի։

ԿԱԿՈՒԼԻ։

Էհ՛։

ՊԷՊՈ։

Աստուձ գիդենայ։

ԿԱԿՈՒԼԻ։

Վայ ես նրա... Արի գնանք ծեծինք, Պէպո. մէ ալեղուլի ծեփիմ էս սհաթիս, վուր սապօկի կընդի վրայ երիք ջէր վրայ ու վրայ պտուտ դայ։ Աբա, ես քիզ ասում էի, Պէպո, է՛, վուր կուպէծը միր բան չէ։

ՊԷՊՈ։

Բանը բանէմէն անց է կացի, Կակուլի, էլ էտուրը ինչ փայիդա. բանն էն է, վուր թէ ինչ խոստացիլ ինք, էս սհաթիս չը տվինք, էս գիշեր ուրիշի վրայ է նշնվում։

ԿԱԿՈՒԼԻ։

Դէ, քութահ արէ՛ք ու պրծէ՛ք էլի։ (Քամարը յետ է անում։) Թէ իմքին պակսի, էս էլ վրէն աւելցու, մէ հինգ թուման կու տան։ (Զախ ձեռքով քամարը բարձրացնում է։) Զարթնի էս, Պէպո ջան, (Աջ բռունցքը ցոյց է տալիս։) ու մէկել էս, էլ ուրիշ վունչիչ չկայ իմ մէջը։

ՊԷՊՈ։

Էտէնցութենով բան չի դառնա, Կակուլի ջան, դուն լաւ գիդիս, վուր հարուր թուման փուղ ինք խոստացի, ու էն անիծած Արութինը՛ էսօր էքուցն է գցում։

ԿԱԿՈՒԼԻ։

Օ՛հ, նա ապրանք, ես քիզ ասում իմ, ինչրու նրա փուրի վրայ էլ մէ դհօլ չածինք, վունչիչ չի դուս դա։

ՊԷՊՈ.

Էհ, Կակուլի, դուն էլ հէնց գիդիս ամէն բանը

մէնակ մուշտէ կռվով է շինած։

ԿԱԿՈՒԼԻ։

Բաս ի՞նչի չէ տալի, թէ ղուրթ պարտ է։

ՊԷՊՕ։

Վռնց թէ ղուրթ պարտ է, բաս սուտ իմ խոսում քի մոդ. ամա էն անիծած բարաթը վուր չէ գթնվում, ի՞նչ անիմ։

ԿԱԿՈՒԼԻ։

Ի՞նչ բարաթ, էտ չիմ իմացի։

ՊԷՊՕ։

Վա՛, բաս չիմ ասի քիզ։

ԿԱԿՈՒԼԻ։

Զէ։

ՊԷՊՕ։

Վուր բարաթ ունէիր նրանն ու էն բարաթը կորաւ։

ԿԱԿՈՒԼԻ։

Զէ, Պէպո, չէ. էն կի իմացիլ իմ, վուր էն բայ՝ղուշը փուղ է պարտեցի քու հօրը. ամա բարաթը առչի իմանալս է... իժում էտ վռնց կորաւ, տո՛։

ՊԷՊՕ։

Աստուած վուչ գիդէ միր գլուխը։

ԿԱԿՈՒԼԻ։

Թէ ախպէր իս։

ՊԷՊՕ։

Ասիմ, չասիմ, Կակուլի ջան, էլ ինչ կու օգկրվի։

ԿԱԿՈՒԼԻ։

Թէ լաթի իս, տո՛։

ՊԷՊՕ։

Ա՛յ, վունց էր, ախպէր. իմ հէրը փուղ է ունենում, տալիս է նրան շահով. լաւ շահվեցանք. բարաթն առնում է ու պահում է... Քանի սաղ էր իմ հէրը թէգուղ քսան ջէր իմ տեսի էն անիծած բարաթը, հէնց մեռնելու մէ շաբաթ առաջ... ձեռին ունէր խիղճը... Մահի էդնէն ղուրթին բաց անինք, էլ չկայ, չկայ, չկայ ու չկայ։

ԿԱԿՈՒԼԻ։

Էէէ՜... այ թուրմէ ինչ բան է էլի... Տօ, Պէպո՛, ինքն Արութինը չըլի գողցի էն բարաթը։

ՊԷՊՕ։

Է՜հ, ինչ իս սարսաղ սարսաղ դուս տալի, տո, միր ղուրթումը նա ի՞նչ դաւի ունէր։

ԿԱԿՈՒԼԻ։

Բաս ոմ կու գողնէր, Պէպո՛։

ՊԷՊՕ։

Վուր գիդենամ խօ միգ ամա էլ լաւ կուլի։

ԿԱԿՈՒԼԻ։

Կռնլի քու հէրը հիդը տարաւ, տո։

ՊԷՊՕ։

Մինք էլ էտէնց ինք ասում, կուլի շուր հաքցնելս հիդը գնաց։

ԿԱԿՈՒԼԻ։

Մտիկ է՛, արա էն կինքումը թամաշա արա, Պէպօ, թէ ինչ կօնին աղա ԱրուԹինին. չուրս չուրս սատանէն վուր բարաԹն առչիւը կու ձքին. վայ, վայ, վայ, վայ, դէդի ծծիր դուն բարեխօս։ Նէտայի մէ թամաշա անիլ տան, թէդուզ հէնց էտու խաթիր կէհամ դժուխքը։ (Ծիծաղում են։) Տօ, հանաքը դէնը, էլի լաւ պտռտեցէք, կուլի գԹնվի։

ՊԷՊՕ։

Տակն ու վրայ ինք արի տուն ու տիղը, ինչս ասում։

ԿԱԿՈՒԼԻ։

Իժում էն գօմշի գլուխն էլ գիդէ, վուր բարաթը կորիլ է։

ՊԷՊՕ։

Գիդէ, վուր չէ տալի է։

ԿԱԿՈՒԼԻ։

Տօ, խօ գիդէ վուր պարտ է։

ՊԷՊՕ։

Բաս չի գիդի։

ԿԱԿՈՒԼԻ։

Դէ տայ է։

ՊԷՊՕ։

Անկձիտ բամբակը հանէ, տօ, էն մարԹն ասում է թէ՝ միտս չէ, կօսէ, դաւԹրներումն չիմ գԹնում, կօսէ, բարաթը բի՛, ասում է, ու փուղը տա՛ր, կօսէ։

ԿԱԿՈՒԼԻ։

Աստուձ գիդէնայ, Պէպօ, զարԹնի դնքսիլը ուրիշ ձար չկայ։ Դուն ինձ թո՛ղ, էն օրԹաձաղէմէն վուր յիդ է գալի, ձեռնիրը էհէնց դարսած, (Ձեռքերը յետեւն է դարսում։) հէստիկ շինիմ, հէստիկ շինիմ, վուր սէփիլի բայաթի կանչիլ տամ։

ՊԷՊՕ։

Էրանի քիզ, Կակուլի, վուր քուր չունիս մարԹու տալու։

ԿԱԿՈՒԼԻ։

Էտու համա էլ դարդ չէի անի, ձիդ պէս կուպէծներու էդնէն չէի ննդնի։ Վիրչի կինտօին կու փոխի՛մ նրանց հիդ։ Միզ վուր ստիղծիլ է Աստուձ, թռչունքի հանդն է ստիղծի, օր դաղինք, օր ուտինք, էլ մեռնելիս անդէրձի գլուխ ոչ ունէ։

ՊԷՊՕ։

Լա՛ւ է, լա՛ւ, խիլքիտ մի՛ զօռ տա, հէրիք է, գնա՛ էն մուրծէքը մորթօտէ. նստինք մէ մէ թիքայ չօռլամիշ ընինք, իժում տեսնինք Աստուձ ինչ է տալի։

ԿԱԿՈՒԼԻ։

Հա՜, էտ իմ խիլքի բան է, մէ սուփրէն վո՛ւրդի է, (Թաշկինակը բաց անելով։) էստունք յիդ դարսինք։

ՊԷՊՕ, Թարերից վայր բերելով հին ձեւի կապոցտ նախշուն սփռոց, փայտէ դեղին դդալներ եւ մի քանի Թէլիշի։

Ա՛յ, բի՛։ (Սփռոցը տախտի վերայ բաց է անում։)

ԿԱԿՈՒԼԻ, Թաշկինակից յետ դարսելով դօշի կտոր, մօթալ, կանանչի եւ լօշ։

Մտիկ էս ալաբալուխին է. էս էլ կանանչի, էս էլ լօշ, էս էլ մօթալ։

ՊԷՊՕ, մօթալը տնդղելով եւ տխուր։

Լաւն է երեվում։

ԿԱԿՈՒԼԻ։

Ի՞ժում էս կանանչուն ի՞նչ ասում։ (Վեր առնելով եւ Թափ տալով։) մտիկ է, կօսիս կանանչ մսխմուր ըլի։

ՊԷՊՕ, տխուր։

Ղօչաղ իս, Կակուլի, մէ ստաքնիր էլ բերիմ,

ԿԱԿՈՒԼԻ։

Վա՛, միկ չէ՞, էս հանգի գինին ստաքնով կու խմի՞ն. հոքուա՞ ի՞նչ իս ասում։ Տօ էն քիղանը բի՛, վուր խմելիս երէսհարքը մէջն երեվայ քրիստոնի պէս է։

ՊԷՊՕ, գնալով։

Գիդիմ, գիդիմ։ (Թարէքից վայր է բերում մէկ հատ քրեղան եւ մէկ քանի գինու բաժակներ։) Հը, էս էլ քու քիղանը, դէ գնա՛, էլ մի՛ ուշացնի. էստունք ես կարքի կու բերիմ։

ԿԱԿՈՒԼԻ։

Մէ ձուգն էփիմ, մէ ձուգն էփիմ, Պէպօ, (Գնալով։) քէփդ բաց ըլի։ (Մտնում են միջի դռնից Շուշանը դաՀիրայով եւ Գիքօն գլխարկով եւ ձեռնափայտով։)

ՏԵՍԻԼ Ը

ՆՐԱՆԲ, ՇՈՒՇԱՆ ԵՒ ԳԻՔՕ։

ԿԱԿՈՒԼԻ։

Բարով, դէպի ջան։ (Պէպօն անշարժ եւ հետաքրքրութեամբ նայում է Շուշանին։)

ՇՈՒՇԱՆ, Կակուլուն։

Ապրիս, վուրթի։

ԿԱԿՈՒԼԻ։

Օ՜, աղա՛ Գիքօ, բարով ես ու դուն։ (Առաջ գալով եւ ցածր Պէպօին։) Սրա վրայ լաւ ղօնաղ չը գթաՀր, տօ։

ՊԷՊՕ։

Մուլա՛փ, (Շուշանին։) ի՞նչ իմացաք։ (Կակուլին Գիքօի ետեւից նրա նման սուտ բուռնոթի է քաշում։)

ՇՈՒՇԱՆ։

Էլ ի՞նչ իմացայ, գեղինը պատռէ ու ինձ դէվէր տանէ։ Թէ էսօր չը ճարեցինք, Պէպան ջան, էս գիշեր դիփ մէտի մօշլա է ըլում։ Այ, երգնքէն առնիս մազիէրն, Արութին։ (Լամբրան վեր առնելով։) Նա խօ էսօր չի տայ ու ուրիշ տիղ ով ինչ կու աւտայ միղ։ Էլի հոքուն վրայ հասայ էն կապ կտրած Նաթէլին, թէ չէ էն է վերչի խօսկն էր տանում նուր ախչկայ տիրուչմէն էն միր սիւ էրես փեսի մոդ։ Սատանէն անէ նրա դիվանը, հրա։

ՊԷՊՕ։

Տօ, փեսիմէն ի՞նչ իս ուզում։ ինչ խոստացիլ ինք

պիտի տանք թէ չէ։ Նա էլ մարթ է, գլխին գդակ ունէ ծածկած, միզմէն էլ վռերդի խափվի, աշխարքն ալան թալան խօ չէ։ Էնղադա ասի, վուր մուլափ դէղի, ջէր փուղը դուս գայ իժում էինք նշնի. ամա ձիր օխտէմէն ոչ դուքայ. ինչ հաջաթ ու, ուր կու կորչի ու, Արութինը միր միխկն ի՞նչ կանէ ու, հաշա խօմ չի ուտի ու. դէ գնա առ, տեսնիմ վռունց իս առնում։

ԳԻՔՕ, նստելով սեղանի մօտ եւ երկար ոտոց հանելով։

Ա՞խ, իմ գօղալ բարաթ... եարաբ վռունց կորար։

ՊԷՊՕ։

Ձէնը՛տ, Գիքօ, թէ չէ մասաբս դիդենայ, ինչ ջիզրն ունիմ, դիփ քիզ վրայ կու հանիմ էս սահաթիս։ Դուն վուր չէիր խառնըվի էս բանումը, էս խայտառակութինը չէր գա միր գլուխը. ջհանդամը փուղի գլուխը, նրա մոգանօղի գլուխն էլ փթի։

ԿԱԿՈՒԼԻ։

Մուլափ, մէ բան ասիմ ես, Պէպօ, օքմին վկայ չկա՞ց, վուր վրահասու ըլի էտ պարտքին։

ՊԷՊՕ։

Միթամ դուն էլ խիլքիդ գօռ ավիր, էտով վուր բան էր դարի, խօ էս խաթաբալէն էլ չէր ըլի։

ԳԻՔՕ։

Այ, վկայ չիմ, բաս ինչ գահրումար իմ... ամա վուր չէ ըլում։

ԿԱԿՈՒԼԻ։

Վա՛հ, ի՞նչի։

ՊԷՊՕ, Կակուլուն։

Էս բանումը վկայ մկայ չի ըլի, կօսէ, չիս իմանում։

ԿԱԿՈՒԼԻ, առանձին գլուխը շարժելով։

Զէ, ես Նրան պիտի հարիմ։

ՇՈՒՇԱՆ.

Ախար էն օրը, էն սիւ սրտովը ի՞նչ ջուղաբ էրիտ կտրական։

ՊԷՊՕ։

Միթամ ջէր չիս իմացի, ասաւ՝ ես միտս չունիմ, կօսէ, դաւթրներումն չէ էրեվում, կօսէ, թէ բարաթ իմ ավի ձիզ, բերէք ու փուղը տարէք, կօսէ։

ՇՈՒՇԱՆ։

Բաս միթամ հաշա է ուղում ուտի. էտ վռունց կանէ, Պէպան, աբա քիմէն չիմ արմնում։ Էնէնց հարուստ մարթը լայիղ պիտի անի էտ հանգի բանն։ Նրա համա հարուր թումանը ի՞նչ—մէ գրօշ, վուր ուզենայ բախշելով էլ կու բախշէ։

ՊԷՊՕ։

Վունց չէ, դէմ է բերում։

ՇՈՒՇԱՆ։

Այ, կու տեսնիս թէ չէ. (Լացի ձայնով։) կէհամ, առչիւը կու չոքիմ, լաց կուլիմ, իր վուրթկերանց արիւ սաղաղա գուղիմ, օրթում կուտիմ, վուր թէ միր մէջը բարաթ լուս ննգնի, թիքայ թիքայ անէ միզ, բաթըլնամա կու տամ, տասը վկի ձեռք կու քաշիլ տամ, մէ օր հոքի ունէ տալու, իր հոքէմէն ձեռը

վո՞ւնց կու վիկալնէ։

ՊԷՊՕ։

Մուլ՛ափ, մուլ՛ափ, դէդի, ես կէհամ, էս սհաթիս յիդ գու.քամ, ինչբու դուք նստեցէք։

ՇՈՒՇԱՆ։

Ջէր մէ թիքայ հաց կի՛, մէ սահաթ առաջ ըլի, յիդ ըլի, դիփ մէկ է։

ՊԷՊՕ։

Ջէ՛, ինչբու չը տեսնիմ, բօղաղումն հաց չի դէվէր գնա, շուրիրս վո՞ւրթէնն է։

ՇՈՒՇԱՆ։

Էրեգ զանդուկը դրի։

ԿԱԿՈՒԼԻ։

Ես էլ գա՞մ, Պէպօ։

ՊԷՊՕ։

Ջէ՛, դուն գնա, բանըդ տիս, էս սհաթիս գալես իմ։ (Դուրս է գնում աջ դռնից։)

ԿԱԿՈՒԼԻ։

Դուն գիդիս, (Խփում է կրծքին։) ախ, Արուրթի՛ն։ (Դուրս է գնում միջի դռնից։)

ՏԵՍԻԼ Թ

ՇՈՒՇԱՆ ԵՒ ԳԻՔՕ։

ԳԻՔՕ, նստած սեղանի մօտ, բուռնոթի քաշելով։

Է՞Հ Աստուա՛ծ, օրհնվի Քու դաղաստանը։

ՇՈՒՇԱՆ, նստում է տախտի վերայ եւ ձայնը երկարացնելով։

«Ա՛խ Աստո՛ւա՛ծ, վախ Աստո՛ւա՛ծ, վուրին կու տա՞ս սէ-լով փէտ, վուրին չիս տա՞ ցախ, Աստո՛ւա՛ծ։»

ԳԻՔՕ։

Հա՞, հա՞, Շուշա՛ն։

ՇՈՒՇԱՆ,

Էհ, օրհնվի Նրա դարգահը, վուրին էնդ՞ադա դօվ-լաթ է տալի, վուր իր դօվլաթը չէ կանացի մարսի ու վուրիմէն օրվան թիքէն խլում է ու էն էլ դօվ-լըթավուրին է տալի. փառք Իրան, Իր կամքն է, հալբաթ միր ճակատին էս էր գրած։

ԳԻՔՕ, մօտենալով սփռոցին։

Էլի Աստուա՛ծ օղորմած է, Շուշա՛ն, (Վերցնելով դօշը եւ դլուխը շարժելով։) ի՞նչ դ՞իամաթ իմքին է։ (Դօշը կրկին իր տեղն է դնում։)

ՇՈՒՇԱՆ, առանձին։

Քու աչկն էլ, (Գիրօին։) էլ ի՞նչ օղորմած է, ջուրն էկիլ է ու միդ տարիլ է. էն անաստուա՛ծը վուր էլի մէ բան մնգանէ ու փուղը չը տայ էսօր, եարաբ ի՞նչ կուլի միր չարէն։ Ճլէրը կու ննդնի խիղճ ախչիկս, թավաթ օրն օրվան վրայ հալվում է, էլ ի՞նչը կու ապրեցնէ Նրան։ (Լացով։) Խիղճ իմ Կէկէլ, նօրչի արիվրդ պիտի փչանայ էլի, թագի մնդիէր սիւ գերեզմանը պիտի մնանիս... (Լաց է լինում։)

ԳԻՔՕ, լացի ձայնով։

Օ՛հ, օ՛հ, օ՛հ... (Դուրս է դնում ձախ դռնից աչքերը սրբելով։

իսկ աջ դռնից մտնում է Պէպօն զարդի հագուստով, գլխարկը ծածկած, արխալուխի մէկ քանի կօճակները բաց, քամբը կապած եւ նրա վերայ դօտիկ կապելով։)

ՏԵՍԻԼ Ժ

ՇՈՒՇԱՆ ԵՒ ՊԷՊՕ։

ՇՈՒՇԱՆ։

Տօ, *ախար ջէր մէ Թիւքայ հաց կուտէիր։*

ՊԷՊՕ։

Հաց չէ զահրումար ուտիմ, ի՞նչ կօնիմ հաց. գանա հացի արժանի իմ։ (Դօտիկը կապելով։) *հացը վուր ստիղծած է, գանա ինձ ամա է ստիղծած. հացը վուր ես ուտիմ, ԱրուԹինը ի՞նչ ուտէ։ Նա էլ հաց ուտէ, ես էլ հաց ուտիմ,* (Դառը ծիծաղով։) *հը՜ա, հը՜ա, հը՜ա։*

ՇՈՒՇԱՆ։

Սիվցիլ էր իմ օրը, ահա՜։ (Աչքերը սրբելով դուրս է գնում ձախ դռնից։)

ՏԵՍԻԼ ԺԱ

ՊԷՊՕ, *մէնակ կօճակները կապելով։*

Գնա, Պէպօ, զեղին լզէ, խալխի վուտնէրուն պաչ արա, նրանց վուտի ցիխը լկէ։ Ո՞վ իս դուն, ի՞նչ իս դուն, ի՞նչ մարԹահէսաբուն իս դուն, ի՞նչ անում ունիս դուն. եփօր գուզին վուտի տակը կու գցին քիզ, վրէտ կու ման գան, զեղնի հիդ կու հաւարին. ի՞նչ հաջաթ, ջիանձվէլի վրայ ի՞նչով իս աւել։ Դուն

խօ մարթ չիս, մարթկերանց համա կերակուր է ստիղծի քիզ Աստուա։ Գիշեր չարչրվի, ցերեկ չարչրվի, երգնքի տակը լուսացրու, անձրըվի ու քամու հիդ կռիւ տու, ձմեռը ցրտէմէն կօնկօռնա. ամառը արեգագի շուքումն էրվի ու խորվվի. գնա էնէնց մէ Թիւքայ հաց ճարէ ու էն Թիւքայ հացով դէդիտ ու քվիրրտ պահէ... Էս ի՞նչ, ի՞նչ մարթուԹին... էսէնց շունն էլ է ճարում մէ Թիւքայ, վուր տունը պահում է, միԹամ դուն էլ շուն իս. քանի աշխրքիս էրեսին ման իս գալի, դուն էլ շան պէս կերակրվի. էս ի՞նչ մարթուԹին է։ Մարթ էիր ուզում դառնա՞, կէհէ-իր մարթիք կու Թալնէիր, գուզուԹին կօնէիր, իմ նման խղճերուն կու զընէիր, քսանու հինգ հազար տիզ արէն արտրսունք կու Թափիլ տէիր, էն արտրսունքնիրը փուղ կու շինէիր ու էն փուղով օսկէ տնիր. մէջը փառավուր ման գու քէիր. դրօշկա, կալասկա, ձիանիր կու սարքէիր, քսան ու հինգ ինձ պէսին գլխիտ դարավաշ կու կանգնեցնէիր. ա՜յ, էն չախը կօսէի քիզ մարթ իս, Պէպօ, ինչ մարթուն պիտի. ի՞նչ քէփրտ գուզէր էն սահաթին կու ճարէիր. էն չախը դիփունքը քիզ գլուխ կու տէին, կու մեձրէին, պատիւ կու տէին ու մէկս մէկու գլուխ կու կոտրէին, վուր քու աչկը նրանց վրայ քախցը ըլի։ (Դուրս է գնում միջի դռնից։)

ՎԱՐԱԳՈՑ։

ԱՐԱՐՈՒԱԾ Բ

Հարուստ զարդեր Արուեթինի տանը։ Աջ, ձախ եւ մէջ տեղը դռներ, ամենաշքեղ դրապարներով զարդարած։ Ձախ կողմը մեծ հայելի, յետոյ դիւան, որի առաջ ամենաթանկագին սիւռոցով ծածկած սեղան եւ նրա վերայ հանգած լամպայ։ Աջ կողմը կուշէտկա. իսկ մնացած տեղերը, ուր հարկն է, բազկաթոռներ եւ աթոռներ։ Դահլիճի մէջ տեղում առաստաղից կախած է ոսկէզօծ ջահ, հանգած մոմերով։ Բեմի խորքում դէպի ձախ, վառարանի վերայ դրած ժամացոյցի սլաքները որոշ կերպիւ ցոյց են տալիս ժամը երկուսից քառորդ պակաս։ Ժամացոյցը բանում է։ Ակզբումը բեմը փոքր ժամանակ դատարկ է։

ՏԵՍԻԼ Ա

ԳԻԳՕԼԻ, ՅԵՏՈՅ ՍԱՄՍՕՆ։

ԳԻԳՕԼԻ, երեւալով միջի դռներում մէկ մշակի հետ, որի ձեռքին կայ մէկ մեծ զամբիւղ զանազան իրեղէններով, այն է՝ շամպանիայի գինիներ, կասիս, սարդինկաներ, զուրգիել, Ֆունտբայի արկղիկով խաւեար, վարունգներ, մէկ Ֆղֆով ընտիր կեռաս, միւս Ֆղֆով շաբարէ հաց։

Լա՛ւ, թո՛ղ։ (Զամբիւղը ձեռքից առնում է, մշակը գնում. իսկ ինքը զանբիւղը ներս է բերում եւ դնելով զետնի վերայ, ցածր ձայնով կանչում։) Սամսո՛ն, Սամսո՛ն, (Մօտենալով աջ դռանը, նորից կանչում է։) Սամսո՛ն։ (Սամսոնը դուրս է գալիս նոյն դռնից արխալուխի կրծքի կօճակները բաց, ձեռքին շամպանիայի գաւաթ, երկար սպիտակ Ֆաշկինակով սրբելիս։) Աբա, զէթաղվա, Սամսո՛ն

ջան, գնա՛ չուստ ախչիկ պարնին իմաց արա։

ՍԱՄՍՕՆ։

Էկամը, ի՞նչի ուշացար, կրակ է վեր ածում ախչիկ պարուանը։

ԳԻԳՕԼԻ։

Վա՛յ, ես ի՞նչ անիմ, հէստի բան ասաւ, վուր սաղ աշխարքը մանն էկայ, չը ճարեցի։

ՍԱՄՍՕՆ։

Վա՜։

ԳԻԳՕԼԻ։

Ումը հարցրի, վրէս ծիծաղեցան, կակլի տալ էլ ասում է, կլուբնիկ կուլի, կասէ։

ՍԱՄՍՕՆ։

Հալբաթ կուլի, վուր ասաւ, (Ծաղրելով զամբիւղը։) մնացածը դիվի բերիր։

ԳԻԳՕԼԻ։

Դիվի, դիվի, ամա էն մանդրէկ կլուբնիկը չը ճարեցի։ Էքուցուքթին կի մէ տիղ խոստացան, կուլի ճարինք, կասէ։

ՍԱՄՍՕՆ։

Հոքուն կու վրահանի, ղօնաղլուղուքթինը էս օր է, էքուց լաս չէ։

ԳԻԳՕԼԻ,

Բաս ի՞նչ անիմ, Սամսո՛ն ջան։ Զի ըլի, վուր առանց էն եօլա գնայ բանը։ Հէստի բալիք իմ բերի, վուր ամէն մէկը կասիս գոմշի աչկն ըլի։

ՍԱՄՍՈՆ։

Թէ ինձ կու հարցնիս, Գիգոլի, առանց էտ բալին էլ փուրը լաւ կու կշտանայ. ամա ախչիկ պարնի խասիաթը գիդիմ, վուրդիօր ըլի պիտի ճարիս. Կաւլնիումը, նէմէցներու բաղերումը, էնդի հարցրու։

ԳԻԳՈԼԻ։

Հոքիս դուս էկաւ, ի՞նչս ասում։

ՏԵՍԻԼ Բ

ՆՐԱՆՔ ԵՒ ԷՓԷՄԻԱՑ։

ԷՓԷՄԻԱՑ, դուրս գալով ծախ դունից ամենաշքեղ հագուստով եւ ակնեղէններով զարդարուած։

Օ՛հ, չարա էլաւ. էսէնց ուշանալն էլ ի՞նչ է։ Հօրէս գնաղները մոդ կուլին. եփը պիտի վրայ բերիմ, էլի աշխարքի բան կայ։

ԳԻԳՈԼԻ։

Հէնդարա ման իմ էկի, ախչիկ պարուն, Աստուած գիդենայ, էլ ծնդներումն ջան չկայ։

ԷՓԷՄԻԱՑ։

Ջանըս դուս գայ, ման արի, բաս ես մանգամ։ Աբա յիդ դարսէ, տեսնիմ ինչ իս առի։

ԳԻԳՈԼԻ, զամբիւղի իրեղէնները ցոյց տալով։

Այ ախչիկ պարուն՝ էս շանփանսկիքը, տասնուԹ աբասէն պակաս չը տվին բուԹիլկէն. էս էն կարմիր լեկօրը, Ֆրանցուզկէն առայ, չուրս ու տաս շահի առաւ անիծածը. էս սարդինկէքը, էս Գօնու զուր-

գիէլ էս կարօրկումը ժիտկա, օրԹում հաւատ ա-լաւ, վուր էստու վրայ լաւը չի ըլի, կօսէ. էս նէմէնցու բալին, էրկու ռանգն է այ, ամէն մէկը մէ գրվանքա դու քայ. էս խիար, ի՞նչ շուշէքն է, տիս ախչիկ պա-ռուն. էս պիրօժնի, կանդիարի շինածէմէն վէր չի գա. բուլկիքն էլ հօրէս կու բերին։

ԷՓԷՄԻԱՑ։

Վռնց Թէ վէր չի գա, աբա էստի շանց տու, բաս վռուրդի առար։

ԳԻԳՈԼԻ։

Միչի փողոցումը։

ԷՓԷՄԻԱՑ, իր Ոշին ձեռք դնելով։

Աբա էտ արարմունք է՞, Գիգոլի, ես քիզ չասի Թէ Ֆրանցուզի մոդ առ։

ԳԻԳՈԼԻ։

Դիպ մէկ է, ախչիկ պարուն, Աստուած գիդենայ, գրվանքումը մէ աբասի անմիզ աւելի ռուբ էի տվի։ Տիս ի՞նչ լաւն է։

ԷՓԷՄԻԱՑ, տնդղելով։

Աբա վիՆ էկաղրէբա, նրանց հատն ու կտուրն է. էսէնց բէդասլուԹինն էլ ի՞նչ է։ Տար, տար էս սա-հաԹիս յիդ տու։ Ինչ ասում իմ քիզ լսէ, դուն քու գլխէմէն բանիր մի մոգոնի։ Ուրիշ, (Մտածելով։) ու-րիշ ի՞նչ ասի, միտս չէ գալի։

ԳԻԳՈԼԻ, ամօԾով։

Կլուբնիկա։

ԷՓԷՄԻԱՑ։

Հա՛, ղուրթ, վռուրդի է։

ԳԻԳՕԼԻ։

Զը ճարեցի, ախչիկ պարուն։

ԷՓԷՄԻԱՑ, Ծուշը վեր բերելով։

Վոյ քոռանամ ես։

ԳԻԳՕԼԻ։

Վուր չկայ, ի՞նչ անիմ։

ԷՓԷՄԻԱՑ։

Գժվել ես, թէ ինչ ասում։ Երեգ իմ աչկով տեսայ ու իմ բերնով կերայ Դանդումանինց տանը. ի՞նչ կօսէ խալխը, ներանց տանն ըլի ու իմ տանը չէ։ Գնա՛, գնա՛, էս սահաթիս բաղէ բաղ ննգի, դրօշկա բռնէ ու վուրդիօր ըլի էս սահաթիս ճարէ, թէ չէ էլ հոքով ու մարմնով ինձմէն չես պրծնի։ Ի՞նչ իս կանգնի, չի՞ն իմանում, քիզ իմ ասում։

ԳԻԳՕԼԻ։

Գնում իմ, գնում իմ, ախչիկ պարուն։ (Շարարէ հացը վայր է դնում գամբիւղում եւ կամենում է գնալ։)

ԷՓԷՄԻԱՑ։

Գժվել ես, թէ ինչ Աստուձ է խռովի, էս պիրօժնին էլ տար էՀ։

ԳԻԳՕԼԻ, շարարէհացը վերցնելով։

Տանում իմ, տանում, ախչիկ պարուն, (Մրմնջալով։) ես էլ չիմ իմանում ինչ իմ անում։ (Շտապով դուրս է գնում միջի դռնից։)

ՏԵՍԻԼ Գ

ԷՓԷՄԻԱՑ ԵՒ ՍԱՄՍՕՆ։

ՍԱՄՍՕՆ։

Իստակ շշկլեցրիր, ախչիկ պարուն։

ԷՓԷՄԻԱՑ, յօնքերը կիտած։

Քիզ ո՞վ է հարցնում, էրնէկ գիդենամ։ դուն տար էստունք կարքի բի՞ ու չալիշ արի՞ ինձ չամանչեցնիս էս օր, Սամսօն, թէ չէ էլ ինձմէն չես պրծնի։

ՍԱՄՍՕՆ։

Դիփ լաւ կուլի, ախչիկ պարուն։

ԷՓԷՄԻԱՑ։

Ինչ ասիլ իմ լաւ միտրդ պահէ. դիփ լաղաթով ըլի, ամէն բանը իր վուխտը մօտ գայ, մէ խօսկով մաղը մաղէմէն չանց կացնիս։

ՍԱՄՍՕՆ։

Դիփ, դիփ, ախչիկ պարուն։

ԷՓԷՄԻԱՑ։

Ու դուն էլ էնէնց հոքի, վուր դիփուանց աչկիրը քոռանայ՝ սօսանի առլաս ախալուխը, սիպտա չերքէզկէն, մաջէքը կարքով յիդ կու ծալես։

ՍԱՄՍՕՆ, խօսքը կտրելով։

Խանջալն էլ կապիմ, ախչիկ պարուն.

ԷՓԷՄԻԱՑ, շարունակելով։

Բա՛ւ, քա՛, էնդուր խօ չը բախշեցի վուր զանդումդ պահիս, խանջալն էլ կապէ ու (Զախ ծեռքը աջ ուսից կրծքի

վերայ տանելով մինչեւ ձախ կողքը։) սապիրիս ծամէն էլ շինէ։ Մէ խօսկով դիփունի մոդ լաղաթի էրեվա, վուր դիփունքն ասին, վուր մարթ իս ու մարթու տանն իս ՝ղուլուղ անում։

ՍԱՄՍՕՆ։

Վո՞ւր օրը լաղաթով չիմ էլի, ախչիկ պարուն։

ԷՓԷՄԻԱՅ։

Քու գլխի պատովիը դիդենայ, մէկ էլ հիմի իս լաղաթով. աբա էտ ի՞նչ կարք է, լէվրէլէլ մանն իս գալի։ Քանի ջէր իմ քիզ ասի, վուր էտէնց ինձ մոդ մի՝ տուն գա, օքմին տեսնէ ինչ կօսէ. չէ՞իր կանա դօշնտ կօձկնիրը կապի։ Լաքիէն պիտի լաքիա ըլի. աչկիրդ բաց արա՛ էլի՛, տեսնում իս խալխի լաքիէքը վունց ին ժաժ գալի, դուն էլ էնէնց ժաժ արի էլի՛. նրանցմէն պակաս մարթու վուրթու մոդ իս, թէ ի՞նչ է։

ՍԱՄՍՕՆ։

Ձեռիս բան ունիմ, ախչիկ պարուն, խօ տեսնում իս։

ԷՓԷՄԻԱՅ։

Տուտուց տուտուց մի՝ խօսի. ես քիզ ինչ ասում իմ, դուն իմը լսէ։ Մէ խօսկով՝ իստակ, կարքի, քաղաքավարի տուն ու դուս կօնիս, թող տեսնին ու ճըղկըվին. լաքիէրու աբով չը թողնիս, փարվանի պէս մանն գու քաս սուփրի բոլորքը, մէ տիղ իքմին մաշուր արիր թէ չէ, էն սհաթին դրստէ։ Բլուղնիրն էլ առչի գամն ինձ մոդ մոդ կու բերիլ տաս։

ՍԱՄՍՕՆ։

Ի՞նչ կօսին ՝ղօնաղնիրն, ախչիկ պարուն։

ԷՓԷՄԻԱՅ։

Է՛լի... մոդէն դուն լաւ դիդիս թէ ես. թո՛ղ տեսնին ու սորվին։ (Մտածելով։) Էլի ի՞նչ էլի ուզում ասի.... (Մտաբերում է։) Հա՛.... (Շտապով դուրս է գնում ձախ։)

ՏԵՍԻԼ Դ

ՍԱՄՍՕՆ, մենակ։

Էս հանդի էլ ախչիկ պարո՞ւն. դաղդըղանի իմ էկի էլի՝ էս կօձակըտ կապէ, էս էսէնց հաքի, էս էնէնց մանն արի, չիմ գիդի թէ ինչ է ուզում ինձմէն.... Փիէ՜, դաւի է դրուստ էլի.... Տօ, քիզ ի՞նչ, ես խօ իմ բանը շինում իմ։ (Լռութիւն։) Օհ, հօ, հօ, շատ ախչիկ պարնիր իմ տեսի, շատ նրանց բույիւրմիշնիր իմ լսի. ամա սա չափէմէն անց կացաւ։ Մէ տէր հարցնող ըլի, թէ ո՞վ է, ո՞ւմ վուրթի է. իր հօրանց տանն, ասում ին, շապիք չունէր հաքնելու... ու հիմի փառասիրութենէմէն տրաքվում է։ (Ձեռքը ձեռքին է խփում։)

ՏԵՍԻԼ Ե

ԱՐՈՒԹԻՆ ԵՒ ՍԱՄՍՕՆ։

ԱՐՈՒԹԻՆ, ներս մտնելով միջի դռնից, գլխարկը ծածկած։

Ի՞նչ խաբար էր, ի՞նչ ձէն էկաւ։

ՍԱՄՍՕՆ։

Վունչիչ, աղա՛։

ԱՐՈՒԹԻՆ։

Վռունց թէ վունչիչ, իմ անդճովս իմացայ, ով էր էստի։

ՍԱՄՍՈՆ։

Օչով, աղա, ախչիկ պարունն էր։

ԱՐՈՒԹԻՆ։

Ախչիկ պարունը՞... Ի՞նչ էր ասում։

ՍԱՄՍՈՆ։

Ա՛յ, աղա, Գիգոլին էստունք էբի էս սահաթիս, էլի ինչի համա էլ ղըզից նրան ու ինձ հրամառում էր, վուր էստունք տիղավուրիմ։

ԱՐՈՒԹԻՆ։

Հա՞... Դէ՛, տիղավուրէ՛ էլի, էլ ի՞նչ իս շինում։ Ի՞նչիր է էտի։

ՍԱՄՍՈՆ։

Խմիչկ է, մրքեղէն է, զակուսկէք է։

ԱՐՈՒԹԻՆ, զամբիւղում տնդղելով։

Օհ, օհ, օհ, օհ, կօսիս շահ զաղի վուրթիք ուենենանք մեձրած։ Դէ՛, տոր. (Սամսօնը վերցնում է զամբիւղը եւ կամենում է տանել։) ինչ իմ ասում, քանի պրիբօր իս պատրաստում։

ՍԱՄՍՈՆ։

Ախչիկ պարունը հրամայից, վուր դրուստ քսան ու չուրս պրիբօր ըլի դարսած, կօսէ։

ԱՐՈՒԹԻՆ։

Ախչըկաս մոդ խօ չը ղըզից քիզ։

ՍԱՄՍՈՆ։

Զէ՛, աղա, վունչիչ չէ ասի։

ԱՐՈՒԹԻՆ։

Բա՛ս էրկու պրիբօր էլ աւելցու ու էս սահաթիս գնա՛ ախչըկաս էլ ու փեսիս էլ խնդրէ, վուր շնուրհ բերին, ու իմ մաղիէր կօսիս թէ չին գա, խիստ բէդամաղ կուլիմ, ասա՛. դէ՛, գնա՛ չուստ, բանդ տիս, մի՛ ուշանա։

ՍԱՄՍՈՆ, վերցնում է զամբիւղը։

Էս սահաթիս, աղա՛։ (Դուրս է գնում աջ դռնից զամբիւղը ձեռքին։)

ՏԵՍԻԼ Զ

ԱՐՈՒԹԻՆ, մէնակ, գլխարկը վեր առնելով եւ դնելով սեղանի վերայ։

Սհաթի երիքին էլ ճաշ կուլի՞։ Է՛հ, մախլաս։ (Հայելումը տնդղվում է։) Զէ՛, ջէր էլի լաւն իմ, ի՞նչս է պակաս. բոյիս շիմշատ է հէնց գիդենաս, էրեսիս ռանգը, կօսիս, կարմիր վարթ ըլի, մաղերս էլ սիւ սաթ, ի՞նչ անիմ թէ ներկած է. ով ինչ գիդէ ինչ խաբար է։ (Նստելով կուշետկի վերայ։) Զէ՛հէլ կնգայ պէս մարթու ջէ՛հէլացնօղ վունչիչ չի ըլի աշխարքումս. մարթու տարին էլ, քէփն էլ, դիփ կնգամէն է։ Օղորմած հոգի իմ առչի կնիկն էլ լաւ աթմորթի էր. ամա բանի լաղաթը չէր գիդի։ Ի՞նչի նման էի էն չախը, հիմի մարթ իմ էրեվում, ինչ մարթուն պիտի։ Նատ ջէ՛հէլ Ֆրանտ աղայ էրնէկ կուլի տալի ինձ... (Շապկի մանժետները տնդղելով։) Փլա՛հ, սիպաս

ձուն է, վո՞ւրդի էր էստունք։ (Ոգոց հանելով։) Ամա էս մէ բանը կի լաւ չէ ըլում, վուր էսղադա փուղեր է մխսիլ տալի ինձ... ես, վուր մէ գրոշի համա հոգիս տալիս իմ... Փառք քիզ Աստուած, փառք... էս էլ հալբաթ քու դիրք է... Գէպ արա, քէպ արա, Փէփէլ, ու դուշմնի աչկը հանէ։

ՏԵՍԻԼ Է

ՆԱ ԵՒ ԷՓԷՄԻԱՑ։

ԷՓԷՄԻԱՑ, տուն դալով ձախ դռնից։

Աբա էս օրէնք է՞։

ԱՐՈՒԹԻՆ։

Ի՞նչ է։

ԷՓԷՄԻԱՑ։

Միթամ չիս գիդի, ուզում իս մէրաշ թուլանամ, խայտառակ ըլիմ խալխումը։

ԱՐՈՒԹԻՆ։

Ի՞նչ է, վա՛։

ԷՓԷՄԻԱՑ, շարունակելով։

Դիփունքը վրէս ծիծաղի՞ն, մէ մատը միղը դառնամ աշխրքումը։

ԱՐՈՒԹԻՆ։

Տօ, ախար ի՞նչ է, մէ ասա՛ է։

ԷՓԷՄԻԱՑ, սուտ լաց լինելով։

Էս է քու օրթում հաւատը, վուր ինձ սիրում իս։ (Աչքերը սրբում է։)

ԱՐՈՒԹԻՆ, ձայնը բաղցրացնելով եւ վերկենալով տեղից։

Ախար սատանայ խօ չիմ, մէ խօսի է։

ԷՓԷՄԻԱՑ։

Էլ ի՞նչ խօսիմ, մէ բանը մէ ջէր կօսին, հազար ջէր խօմ չին ասի։

ԱՐՈՒԹԻՆ։

Տէր օղորմած Աստուա՛ծ։

ԷՓԷՄԻԱՑ։

Ախար փեսիտ ու ախչկատ վուր կանչում իս էսաի, աբա ըլելու բան է։

ԱՐՈՒԹԻՆ։

Է՜, լա՛ւ է քու հօրն օղորմի, Փէփէլ. ախար քինթն էրեսէմէն վէր դու քա՛յ։

ԷՓԷՄԻԱՑ։

Ես ինչ միղ ունիմ։

ԱՐՈՒԹԻՆ։

Է՜հ, հակառակ իս։

ԷՓԷՄԻԱՑ։

Ես իմ հակառա՛կ. ինչ ասիս էրեսիս ասում է քու ախչիկը, վրէս քինթը վեր է քաշում, մասխարա է դցում, ու հակառակը ես իմ... Մէ խօսկին տասը ջուղաբ է տալի, ինչ շառիր ասիս վրէս է մնգնում, խուղի հիդ հաւսրիլ է ինձ, ու հակառակը ես իմ... իմ մամին, ասում է, էլ խիլք չունէ, կօսէ։

ԱՐՈՒԹԻՆ։

Վա՛։

ԷՓԷՄԻԱՑ, շարունակելով։

Միթամ դիպել իմ քիզ, խիլքէտ արիլ իմ, բուրթու պէս վուրթէնն ուզում իմ, էնթէնն իմ դցում քիզ... վուզչ կայինքըտ ուզում իմ զավթի ես, ու հակառակը ես իմ... էլ կանամ ես նրանց էրեսը տեսնի։ ամեմերթին կու համիփիրէ էատռինք։

ԱՐՈՒԹԻՆ։

Էլի դուն պիտի համիփիր իս, հեր օխնած, էս սհաթիս ծնող իս յիշվում նրանցը։

ԷՓԷՄԻԱՑ։

Ես իմ ծնող յիշվում։ Նրանց համա ես ծնող կի չեմ, դուշման իմ, գէլ իմ, շունն իմ, կատու իմ... (Լաց լինելով։) Սիվցիլ էր իմ օրը ու էս աուն վուտրս աուն չէի դրի։ Ի՞նչ կանիմ էս փառքը, էս պատիւը, էս շուրիրը, էս ակնեղէննիրը. թող էլի իմ տանը ննգած էի էլի, քաղցած, ծարաւ, հացի հասրաթ ու էս օրը չէի տեսի ես։ (Լաց է լինում։)

ԱՐՈՒԹԻՆ։

Լաւ է, լաւ, Փէփէլ ջան. (Լացի ձայնով։) սիրտս մի պատռտի... ես էլ լաւ գիդիմ ինչ պատուղնիր ին. ամա ասում էի, միթամ խալխի խօսելու չը դառնանք։

ԷՓԷՄԻԱՑ։

Խալխն ինչ դուզէ ասէ, նրա խօսելու հիդ վուր մարթ ննգնի, ոնր կէհայ. խալխն էն էլ է ասում, վուր հաշաքար իս միթամ, շատ օքմնու իս զընի

միթամ։ աբա էս աւտալու է։

ԱՐՈՒԹԻՆ։

Վրէս շառիր ին մոգօնում։

ԷՓԷՄԻԱՑ, շարունակելով։

Վուր միթամ պառաւ իս դուն։

ԱՐՈՒԹԻՆ, նեղանում է եւ հաղում։

Հո՜։

ԷՓԷՄԻԱՑ, շարունակելով։

Միթամ մաղերդ ներկում իս...

ԱՐՈՒԹԻՆ, կրկին հաղում է։

Հո՜, հո՜։

ԷՓԷՄԻԱՑ, շարունակելով։

Միթամ ինձ խափում իս։ ՈՉ կու աւտայ. թող խալխն ինչ դուզէ ասէ։

ԱՐՈՒԹԻՆ, հաղից խեղտուելով։

Խալխը տուտուց է, Փէփէլ. դուն չիս գիդի վուր ջէհէլ իմ։ վո՞ւր ջէհէլը կուլի ինձ վրայ ղօչաղ։

ԷՓԷՄԻԱՑ։

Աբա, վուր մէկին հասկացնիմ։

ԱՐՈՒԹԻՆ։

Տօ, դուն էն սարսաղներուն ասա, վուր պառաւ ղօչաղը լաւ է, կանց ջէհէլ դամբլէն։ (Իր մազերը բռնելով եւ գլուխը մօտ տանելով։) Աբա էս ներկած է։

ԷՓԷՄԻԱՑ, ԱրուԹինի գլուխը բռնելով եւ ժպտալով։

Դուշմանը շատ բան կօսէ, Արտուշկա ջան։ (Պաչ անելով գլխին։) Մանուշակի հուտ է գալի։

ԱՐՈՒԹԻՆ, փաթաթվելով։

Ա՜յ կուդիան, քու մէ պաչը մէ թաքաւուրութին աժէ։ (Փաղաքշելով։) Ղուրթ վուր խիլքէմէս հանում իս. ի՞նչ ասիս, վուր քու խօսկը չը կատարիմ։

ԷՓԷՄԻԱՅ։

Բաս չինք կանչում էլի։

ԱՐՈՒԹԻՆ։

Ո՞ՀՄ։

ԷՓԷՄԻԱՅ։

Փեսիտ ու ախչըկատ։

ԱՐՈՒԹԻՆ։

Է՜։

ԷՓԷՄԻԱՅ, սուտ լաց լինելով։

Ափսուս իմ գլուխ։

ԱՐՈՒԹԻՆ, բաղցր։

Լաւ է, լաւ, քու քէփին ըլի։

ԷՓԷՄԻԱՅ, փաթաթուելով։

Իմ սիրուն, իմ խօխօր, իմ ջէյրան, իմ ակռաւ։

ԱՐՈՒԹԻՆ։

Ակռաւ.... վա՜հ, էտ լաւ էր։

ԷՓԷՄԻԱՅ, ծիծաղելով։

Վա՜յ քոռանամ ես, ուզում էի ասի, իմ աղունակ։

ԱՐՈՒԹԻՆ։

Հա՛, աղունակը լաւ է։

ԷՓԷՄԻԱՅ, փաթաթուելով։

Բաս ի՞նչ իս, վուր աղունակ չիս։

ԱՐՈՒԹԻՆ։

Երիշս էլ կուլի նման աղունակինը.... Աղունակն էլ դուն իս, Փէփէլ (Փաթաթուելով։) վարթն էլ ու մանուշակն էլ։

ԷՓԷՄԻԱՅ։

Ես վարթ իմ ու դուն էլ բլբուլ, Արտուշկա ջան։

ԱՐՈՒԹԻՆ

Հա՜, գիթա՛ր. դուն վարթ իս ու ես էլ բլբուլ. խիստ իմ սաղ գալի։ (Էփէմիայի Թշին մատով խփում է եւ Թիւ։)

«Կոկոբս վարդս, ար դամագդս, վար մնա շէնի։»

ԷՓԷՄԻԱՅ, նոյնպէս Թիւ։

«Պիրղէդ գաքվս խալի, շաւ շաւի թվալի, տուրփաթ մշվէնի շէն։»

ԱՐՈՒԹԻՆ։

Վա՜հ, հէր օխնած, ասում իս ասա՛, վուր ջանումն նստի է։

ԷՓԷՄԻԱՅ։

Է՛հ, բաղրոս է, էրնէկ գիդենամ, աշխարքի բան ունիմ։

ԱՐՈՒԹԻՆ։

Գէթակղվա, Փէփէլ ջան։

ԷՓԷՄԻԱՅ։

Ուհ, քիմէն խօմ չիմ պրծնի ու, հրա՜։ (Երգում է ԱրուԹինին շողոքորԹելով։)

«Կոկոբս վարդս, ար դամագդս, վար մնա շէնի,

Պիրզեդ գաքվս խալի, շաւ շաւի թվալի, նախվա մնուրս շէնի։ » *)

ԱՐՈՒԹԻՆ,

Օ՞հ, քու հոքուն մեռնիմ, Փէփէլ Ջան։

ԷՓԷՄԻԱՅ։

Գիդիս ինչ ասիմ, Արտուշկա Ջան, (Ձեռքը Արուքինի ուսին դնելով։) միր հալելէքն էլ պէտկ չէ, մոդէն անց է կացի, մէ տիզ տեսիլ իմ, ջուխտը քառասուն ու հինգ թուման ին ասում.... (Արուքինը առանձին դէմքը ծռում է։) ուզում էի բէհը տա, ամա առանց քի հարցնելու գաբէդվա չարի։

ԱՐՈՒԹԻՆ, Էփէմիայի Ձշին ձեռը տալով։

Շատ օյինբազն իս։

ԷՓԷՄԻԱՅ։

Գէթաղվա, Արտուշկա Ջան։

ԱՐՈՒԹԻՆ, մոտածելով եւ բարձր։

Քառասուն ու հինգ թումանն։

ԷՓԷՄԻԱՅ։

Էն շէնքի իմքինը բաս պակաս կռնլի, քա...

ԱՐՈՒԹԻՆ։

Էնդու վրայ հիմի քիչ ցածրն ըլի, ի՞նչ հաջաթ։

ԷՓԷՄԻԱՅ։

Աբա վիս էկադրէբա, էնդու վրայ ցածր խօմ միրին է... ամա վուր պէտկը չէ... Խաչը գիդենայ, ամանչում իմ, վուր էրեսս մէչը տեսնում իմ։

ԱՐՈՒԹԻՆ։

Տօ, հոքիս հանեցիր խօմ... դիփ տակն ու վրէն արիր էսղանցօրէն. ախար՝ էս զալէն պէտկը չէ... էս մէրիլը պէտկ չէ, էս զանավէսկէքն էսէնց չէ.. էս գդակդ փոխէ... էս դիմիկիտօնի մագիէր պլատնօ հաքի...

ԷՓԷՄԻԱՅ։

Թէ, ինձ կու սիրիս, Արտուշկա Ջան։

ԱՐՈՒԹԻՆ։

Գիդ վուր չիմ սիրի, բաս ո՞ւմն իմ սիրում. ամա դուն էլ ղուրթ խիսա ին սիրում ինձ, Փէփէլ։

ԷՓԷՄԻԱՅ։

Զարթնի քիզ ո՞վ ունիմ աշխարքումը. իմ հոքին ու մարմինը դուն իս, իմ շունչն ու կենթանութինը դուն իս։

ԱՐՈՒԹԻՆ։

Օչով աչկումդ չէ գալի՞։

ԷՓԷՄԻԱՅ։

Աբա միխկ չէ, Արտուշկա Ջան, ի՞նչս ասում։ Ախչիկը քի պէս մարթ ունենայ ու նրա աչկումն էլի օմքին գու քոյ աշխարքումը։

ԱՐՈՒԹԻՆ։

Բերիլ տու, բերիլ տու հալելէքը, (Համբուրելով։) գէնացվալէ սուլշի։

*) Վրացերէն՝

Կոկոն իմ վարդիկ, մի՛ Ծողնիր ինձ, քո ստրուկն եմ ես,
Երեսիդ խալի, սեւ աչերիդ կարօտն եմ ես։

ԷՓԷՄԻԱՑ, փաթաթուելով։

Աբա ոմ կանայ ասի, վուր դուն գուփոդ ու գջլոդ իս։

(Արուեթինի փողապատը եւ շապիկը ուղղում է։

ԱՐՈՒԵԹԻՆ։

Խիստ իս Ֆրանտացնում։ ամա քու կարմիր բանտի պէս չի ըլի, Փէփէլ։

ԷՓԷՄԻԱՑ, շարունակելով։

Մուլափ։ (Աւարտելով փոքր ինչ հեռանում է։) Աբա վռուր Ֆրանտը կուլի քի պէս։

ՏԵՍԻԼ Ը

ՆՐԱՆՔ ԵՒ ԳԻԳՕԼԻ։

ԳԻԳՕԼԻ, ներս մտնելով միջի դռնից մէկ ձեռքին փոքրիկ զամբիւղով ելակ, կանաչ տերեւներով ծածկած եւ միւս ձեռքին թղթով շաքարէ հաց։

Ա՛յ, ճարեցի, ախչիկ պարուն։ ամա էլի կակլի տօլ չէ կլուբնիկէն։ թէ գուշ սպանէ, էլ էստու վրայ մինձ չի ըլի, կօսէ։

ԷՓԷՄԻԱՑ, տնդղելով ելակը։

Ա՛յ, հէնց էս էլի ասում։

ԳԻԳՕԼԻ, ուրախ։

Հէնց էն է դրօշկէն ուղում էի բռնի, տեսնիմ մէ կինտօ վուրդիօր ճարիլ էր։ Ախար աւուտեհան էլ օչով չը թողի, դիփուանցն ասի։

ԷՓԷՄԻԱՑ, չարանալով։

Ախ, Գիգօլի, քու բէդասլութինը խօմ ինձ իստակ

սպանում է։ աբա վուր օրն իմ ես կինտօիմէն իքմին առի, վուր հիմի էս էլ իս մոգօնի։ չէիր կանա դուն ինքդ գնա բաղը։

ԳԻԳՕԼԻ, շփոթուած։

Ախչի՜կ.... պարուն....

ԱՐՈՒԵԹԻՆ, Էփէմիային։

Վա՛, հէր օխնած, էլի բաղի կուլի։ ախար կինտօն ինքը խօ չէ շինում։

ԷՓԷՄԻԱՑ։

Աբա վիս էկադրէբա։ Նրանց կիխտուտ ձեռնիրը, (Զզուանքով։) թը, թը, թը, թը։ Վա՛յ վուր ղօնաղնիրը պիտի դան հօրէս, թէ չէ էս սհաթիս ակօշկէն կօծէի դիփ մէտի... (Դառնալով դէպի Գիգօլուն։) Ուրիշ էտ ի՞նչ է։

ԳԻԳՕԼԻ։

Էս էլ պիրօժնիքն է, փոխեցի։

ԷՓԷՄԻԱՑ։

Հա՛, (Տնդղելով շաքարէ հացը, կանչում է։) Սամսո՛ն, Սամսո՛ն։

ԱՐՈՒԵԹԻՆ, Գիգօլու ձեռքում ելակը տնդղելով։

Գնա՛ ու գնա, Փէփէլ, խիստ թաղէն է, կօսիս ձեռով չէ քաղած։ (Մէկ հատ ելակ բերանն է դցում եւ ծամելով։) Լաւն է։ իմ մամա Կիրակուսն էլ առանց էս եօլա չէր գնում։

ԳԻԳՕԼԻ։

Էլ խօ բան չունիք, ախչիկ պարուն։ (Աչ դռնից մտնում է Սամսօնը արխալուխի կօճակները բաց, ինչպէս առաջ։)

ՏԵՍԻԼ Թ

ՆՐԱՆՔ ԵՒ ՍԱՄՍՈՆ։

ԷՓԷՄԻԱՅ, Գիդոլուն։

Բաս բան չունիմ, մուլափ էսոի։ (Սամսոնին։) Էս կլուբնիկը տար սարդափն ու էս պիրօժնին էլ վաղերումը լաւ բաբաթ շինէ։ (Սամսոնը վերցնում է։) Էլի դոշնտ կոճկնիրը բաց տուն էկար ինձ մոդ։ Աստուած գիդենայ, վերչի գամն իմ ասում, թէ մէկ էլ տեսիլ իմ քիզ էտէնց, էլ մէ սահաթ չիմ պահի քիզ։

ԳԻԳՕԼԻ, առանձին դլուխը շարժելով։

Օհ, օհ, օհ, կրակի կտուր է։

ՍԱՄՍՈՆ։

Բանումն էի, ախչիկ պարուն։

ԷՓԷՄԻԱՅ, բարկանալով։

Զուղաբ էլ է տալի։ (Արութինին։) Աբա պահելու է։ (Սամսոնը դլուխը շարժելով դուրս է գնում աջ դռնից զամբիւղը եւ շաքարէ հացը ձեռքին. իսկ Գիդոլին առանձին եախէն Ֆափ է տալիս։)

ԱՐՈՒԹԻՆ։

Ախար ձեռին բան ունէ խիղճը, տեսնում իս քրտնքումը ծրլծլում է, բաս էմարթլէրի։

ԷՓԷՄԻԱՅ։

Չ'է, խիստ է խարաբ ըլում ախար է։ Էսօր դոշը բաց տուն էկաւ, էքուց առանց ախալուխ կու տուն դայ։ Բջի համարցակութինը վի՞ն էկադրէբա։ Մէ մէ ախչիկ պարուն էլ կայ, իրանց բջի հիդ մասլահաթ-

նիր ին անում։ Խօ դիդիս ես էս հանդի բանիր չիմ սիրի։ Լաքիէն պիտի լաքիա ըլի։

ԱՐՈՒԹԻՆ։

Լաւ է, լաւ, էս մէկը բախշէ. ես կու խրատիմ իրան։ (Գնալով համբիչը ձեռքին, կէս ճանապարհից կիսածայն երգում է։) Պիրզէդ դաքվս խալի, շաւ շաւի թվալի... (Դուրս է գնում ձախ դռնից։)

ՏԵՍԻԼ Ժ

ԷՓԷՄԻԱՅ ԵՒ ԳԻԳՕԼԻ։

ԷՓԷՄԻԱՅ։

Չէ, մէ հէնց ապրիս, Գիդոլի, հասկացրու էն լկստածին, վուր քաղաքավարի կենայ, իմանում իս ի՞նչ իմ ասում։

ԳԻԳՕԼԻ։

Իմանում իմ, իմանում, ախչիկ պարուն, բաս չիմ իմանում. ուրիշ ի՞նչ էիր հրամաում։

ԷՓԷՄԻԱՅ։

Ա՛յ, Գիդոլի, էս սհաթիս գնա, Թաղլիթինց մաղազինումը հալվէք իմ տեսի, ջուխտը քառասուն ու հինդ թուման ին ասում, էս սհաթիսէվէտ վաղեցնիլ տու. թէգուշ չուրս մնակ բռնէ, էդէբա ինչրու ՝օնաղներու գալը վրահասցնինք։

ԳԻԳՕԼԻ։

Էս սհաթիս, ախչիկ պարուն. ամա աղէն ասիլ է։

ԷՓԷՄԻԱՅ, բարկացած։

Հիմի դուն, աղէն ես իմ, հրամառում իմ էլի։ (Դուրսը լսվում է աղմուկ։)

ԳԻԳՕԼԻ։

Էս սհաթիս, էս սհաթիս ախչիկ պարուն։ (Միջի դռան մօտ դրսից լսվում է ՅԱՄՍՕՆԻ ձայնը՝ *Կացի, գնամ ասիմ է...* ՊԷՊՕԻ ձայնը՝ *Կացի մացի չիմ գիդի, թող թէ չէ էս սահաթիս։*)

ՏԵՍԻԼ ԺԱ

ՆՐԱՆՔ ԵՒ ՊԷՊՕ։

ՊԷՊՕ, ներս մտնելով միջի դռնից գլխարկը ծածկած եւ զարդի հագուստով։

Փիէ։ (Գլուխ է տալիս։)

ԷՓԷՄԻԱՅ։

Ի՞նչ իս ուզում, ով իս։

ՊԷՊՕ։

Ով իմ, ղօնաղ իմ, վա՛։

ԷՓԷՄԻԱՅ։

Դուն, միր ղօնաղ։

ՊԷՊՕ։

Հէնց ես։

ԷՓԷՄԻԱՅ, ծիկա տալով։

Օտկեցէք, օտկեցէք, ով է քրիստոնայ։ (Դուրս է վազում ձախ։)

ՏԵՍԻԼ ԺԲ

ՊԷՊՕ ԵՒ ԳԻԳՕԼԻ։

ՊԷՊՕ, առաջ գալով, առանձին։

Ա՛յ, քնթէմէն դուս գայ էն հացը, ինչ մարթ ձիր հացն ուտէ, հրա՛։

ԳԻԳՕԼԻ։

Ի՞նչ իս ուզում, ախպէր, ի՞նչ բան ունիս։

ՊԷՊՕ։

Հալբաթ, բան ունիմ, վուր էկիլ իմ էլի, վա՛։

ԳԻԳՕԼԻ։

Չի ըլի՞, վուր մինք էլ իմանանք։

ՊԷՊՕ։

Ի՞նչ կու աւելնայ քիզ, դուն գնա՛ աղա Արուրթինին իմաց արա՛, վուր ես էստի իմ։

ԳԻԳՕԼԻ։

Ախար դուն ով իս։

ՊԷՊՕ։

Ես... (Նստելով կուշետկաի վերայ։) *Ես իմ։*

ԳԻԳՕԼԻ։

Վա՛։

ՏԵՍԻԼ ԺԳ

ՆՐԱՆՔ ԵՒ ԱՐՈՒԹԻՆ։

ԱՐՈՒԹԻՆ, ներս վազելով ձախ կողմից։

Ի՞նչ խաբար է, ի՞նչ խաբար։ (Տեսնելով Պէպօին մնում է սառած։)

ՊԷՊՕ, վերկենալով տեղից, գլխարկը վեր է առնում եւ գլուխ է տալիս։

Բարի աչողում, աղա ԱրուԹին։

ԱՐՈՒԹԻՆ, Գիգօլուն ցածր։

Դուն գնա բանդդ տես։

ԳԻԳՕԼԻ, առանձին։

Ղուրթ, հալելէքը։ (Դուրս է վազում միջի դռնից։)

ՏԵՍԻԼ ԺԴ

ՊԷՊՕ ԵՒ ԱՐՈՒԹԻՆ։

ԱՐՈՒԹԻՆ։

Հը, ոնը իս էկի, ախպէր։

ՊԷՊՕ։

Այ, համեցէք նստի։ (Ինքը մօտ քաշելով մի աթոռ նստում է։)

ԱՐՈՒԹԻՆ, նստելով կուշետկաի վերայ, առանձին։

Իմ տանը սա է մօհբաթ անում ինձ։ (Պէպօին։) Ախար էս չանն ոնը իս էկի։

ՊԷՊՕ։

Կուշտը քախցածին ի՞նչ է հարցնում... բօղաղս մի՛ դուս կտրի, աղա ԱրուԹի՛ն. ԹէԷ էս սահաթիս չէս տա, վարցկ կօնիս, վուր ինձ սպանիս էստիէվէտ։

ԱՐՈՒԹԻՆ։

Թէ իմքին պարտ իմ, ախպէր, բաս գէմարԹէրի։ ՈՉՄ փուղն իմ կերի, վուր քու փուղն ուտիմ։ Ինչօր բարաթ էիր ասում, գԹաՀ, բերիլ ին։

ՊԷՊՕ, առանձին կրծքին խփելով։

Ը՞մ, (Բարձր։) բարաթը չկայ, իսօ գիդիս, դուն քու դաւԹրնեերումը գԹաՀ Թէ չէ։

ԱՐՈՒԹԻՆ։

Իմ դաւԹրնեերումը շատ պտռտեցի, հախ Աստծուամա մէ ասօ էլ չը գԹայ ձիդ ամա։

ՊԷՊՕ։

Բաս ի՞նչ անինք հիմի։

ԱՐՈՒԹԻՆ։

Ի՞նչ պիտի անինք, դուն քիզ ամա, ես ինձ ամա։ (Գրպանից հանում է սաթէ համրիչը եւ գցում։)

ՊԷՊՕ։

Վո՞ւնց Թէ դուն քիզ ամա, ես ինձ ամա։ Բաս քու մտկումը պարտ չի՞ն ինձ։

ԱՐՈՒԹԻՆ։

Ախպէր, ի՞նչ պիտի պարտենամ։ բարաթ դուն չունիս, դաւԹրումն ես վունչիչ չունիմ գրած, ի՞նչ պիտի պարտենամ քիզ։

ՊԷՊՕ։

Բաս քու սրտի դաւԹրումն էլ վունչիչ չկայ գրած։

ԱՐՈՒԹԻՆ։

Սրտի դաւԹարը վոՀրն է։

ՊԷՊՕ։

Բաս քու խաՀպտանքը վունչիչ չէ ասում քիզ էլի. իսօ գիդիս վուր պարտ իս։

ԱՐՈՒԹԻՆ։

Վուր գիդենամ խօ կու տամ էլի, էլ ոնր իմ խօսեցնում։

ՊԷՊՕ։

Բաս Գիքօն ոնր է ասում։

ԱՐՈՒԹԻՆ։

Մելամ, ասում է, Թավլիսի կուդի մօիղվանա մօծամէթ։ *)

ՊԷՊՕ։

Աղա ԱրուԹին, վերիւը խօ Աստուած կայ ու քու սիրտն էլ է կարԹում, իմ սիրտն էլ, արի՛ Աստծէմէն ձեռը մի՛ վիկալնի։

ԱՐՈՒԹԻՆ։

Ի՞նչ շառիր իս մօգօնում գլխիս, ախպէր, օքմին լսէ հէնց կու գիդենայ ղուրԹ իս ասում։

ՊԷՊՕ։

Դուն գիդիս վուր ղուրԹ իմ ասում։ Քու վուրԹկերանց արիւ սադաղա, խղճա՛ միզ։ Էտ փուղը ես ինձ ամա չիմ ուղում։

ԱՐՈՒԹԻՆ, խօսքը կտրելով։

Տէր օղորմած Աստուա՛ծ։

ՊԷՊՕ, շարունակելով։

Մուլա՛փ, մուլա՛փ, ինչրու վիրչն անգաձ դի՛. էտ փուղով իմ քուրը նշնաձ է, խոստացիլ ինք, պիտինք տա ու ԹԷ էս սահաԹիս չը տվինք, քվերս Թող-

*) Վրացերէն՝ Աղուէսն իր պոչը վկայ բերեց։

նում ին, ուրիշ ախչիկ ին ուղում էս գիշիր։ Ախար մէ Աստծու այեաղ դադաստանը միտրդ բի՛ է՞... խօ քիզ էլ կու խօսեցնին էնդի, ինձ էլ. ի՞նչ ջուղաբ կու տաս, վուր չիս տալի։

ԱՐՈՒԹԻՆ։

Փիէ՞... (Մտածմունքի մէջ է ընկնում։) Այեաղ դադաստանը գիդենայ, վուր դրուստ միտս չէ էտ պարտկը։

ՊԷՊՕ։

Ես ասում իմ դրուստն էլի՞, ինձ չի՞ս աւատում։

ԱՐՈՒԹԻՆ։

Վա՜, էտ վո՞ւնց կուլի, Պէպան. ամէն մարԹ վուր դայ ու էտէնց խօսի, տասը միլիօն էլ վուր ունենամ մէ օրումը կու հատնի։ Զէ՛, ախպէր, միր առուտրի հէսաբը էտէնց չէ։

ՊԷՊՕ, վերկենալով տեղից եւ գլխարկը ծածկելով։

Բաս չիս տալի էլի՞։

ԱՐՈՒԹԻՆ։

Պարտկով կի վունչիչ տալացու չիմ, ախպէր. ամա քուր իս մարԹու տալի, ջուխտ աչկիս։ (Ծոցից հանում է պօրտմոնէ։) Ը՛հա, (ԹղԹադրամ տալով.) վարցկ բան է, բռնէ՛ ախպէր։

ՊԷՊՕ, գլխարկը վեր առնելով գլուխ է տալիս։

Այ Աստուա՛ծ վուրԹիքդ զօրացնէ։ (Առնում է փողը եւ գլխարկը ծածկում։)

ԱՐՈՒԹԻՆ։

Է՛տ հինգ Թուման, համբրէ՛, դրուստ հինգ Թու-

ման է, հինգ թուման էլ, դուքնոքս անց կացի, էն-դի կու տան, էս սահաթիս օքմին կու ղրգիմ։ Գնա ախպէր, Աստուձ բարի վայելումը տայ։

ՊԷՊՕ, փողին նայելով եւ շփոթուած։

Հինգ թուման՝ ու հինգ թուման՝... Ճնացածը։ Ախար իմ քվէր համա հարուր թուման ինք խոստացի։

ԱՐՈՒԹԻՆ։

Ես ի՞նչ անիմ, վուր խոստացիլ իք. բէհէսաբ նամաղուլ իք արի վուր խոստացիլ իք. ո՞ւմ փուղն էիք խոստանում, վուր խոստացիլ իք։ Մարթ լէհէրի դօրա կու ձքէ վուտը։ Դուք էլ վուր հարուր հարուր թուման նիր իք խոստանում, էլ ուրիշն ի՞նչ անէ։ Էս ի՞նչ խաբար էլաւ աշխարքն, ախպէր, էլ օչովու համա չափս ու ձիւ չկայ։

ՊԷՊՕ։

Միր բանը մինք դիդինք, պարուն, ձիր բանը դուք. խոստացիլ ինք միր փուղն ինք խոստացի, քիզ ի՞նչ դաւի։

ԱՐՈՒԹԻՆ։

Խոստացիլ իս ու տար իրան տու էլի, էլ ի՞նչս ուզում։

ՊԷՊՕ։

Ես տու, վուր տամ է՝. ախար էս վուր տալիս իս, մասխարա իս գցում, թէ ի՞նչ խաբար է։

ԱՐՈՒԹԻՆ։

Արի ու սրապէխներուն վարցկ արա։ Տօ, ինչով

չիս իմանում, վուր վունչիչ պարտ չիմ ես ձիզ ու էտ էլ ինչօր տալիս իմ, հոգուս համա բախշում իմ։

ՊԷՊՕ։

Բախշում իս... Գանա ես ախկատ իմ, էկիլ իմ օ-ղորմութին իմ ուզում քիմէ՞ն. ես իմ հ՛ախն իմ ու-զում, ի՞նչ կանիմ ես քու բախշիչը։

ԱՐՈՒԹԻՆ։

Չիս ուզի ու էստի տու, ինձ պէտկը գու քայ։ Ախկատ ու հմպառտ, վուր կօսին, էս է այ։ Բի՛ էլի, բի՛, ինչիս թամաշա անում։

ՊԷՊՕ։

Բաս թամամ չի՞ս տալի էլի։

ԱՐՈՒԹԻՆ։

Տօ, դժվիլ իս, թէ ի՞նչ խաբար է, ի՞նչս ուզում ինձմէն։ Զօռով պարտկ կո՞ւլի աշխարքումը, շլինքս իս գցում։

ՊԷՊՕ, առաջ գնալով։

Աբա օրթում կի՛ թէ պարտ չիս, օրթում կի՛ էլի, մարթ կուլիս օրթում կուտիս։

ԱՐՈՒԹԻՆ։

Օրթում, հաւատ, Աստուձ, երդինք, իմ վուրթկե-բանց արիւը դիդենայ, վուր վունչիչ պարտ չիմ։

ՊԷՊՕ, ջարացած։

Այ Աստուձ ու երդինք խառով կենայ գլխիդ։ (Խփելով փողը ԱրուԹինի երեսին։) Հը՛, բռնէ, աչկըդ դի՛, կնգատ համա իմքին կունենաս առնելու։

ԱՐՈՒԹԻՆ, աղաղակելով եւ տեղից վեր թռչելով։

Օտկեցէ՛ք, ղ՞ալաուլ, սպանեցին, մորթեցին։ (Ներս են թափվում ձախ դռնից Էփէմիան, աջ դռնից Սամսօնը հաքնուած եւ զարդարուած ինչպէս պատուիրել էր Էփէմիան երրորդ տեսիլում. իսկ միջի դռնից երկու այլ ծառաներ ֆրակով եւ սպիտակ ձեռնոցներով։ Տեսարան։)

ՏԵՍԻԼ ԺԵ

ՆՐԱՆՔ, ԷՓԷՄԻԱՑ, ՍԱՄՍՕՆ ԵՒ ԵՐԿՈՒ ԱՅԼ ԾԱՌԱՆԵՐ։

ՊԷՊՕ, ձախ ձեռքով ցոյց տալով ծառաների վերայ։

Էս է քու մարթութիւնն էլի՞... (Երկար լռութիւն։) Այ հառամ ըլլի քիզ քու հարստութիւնը։

ԱՐՈՒԹԻՆ, սաստիկ շփոթուած ծառաներին։

Տօ, օտկեցէ՛ք էհ, ի՞նչ իք թամաշա անում, տեսնում իք ուզում է սպանի ինձ։ (Սամսօնը եւ ծառաները մօտենում են Պէպօին։)

ՊԷՊՕ, ծառաներին մղելով։

Մուլա՞ի, դէնը՞... (Արութինին։) Էս օսկէ պատիրը, վուր սարքիլ իս, ռնմ փուղով... հաղար ինձ պէսնեռուն թալնիլ իս գա՞նա, քար ու կիրը միր արնով իս շաղըղի գա՞նա. դիփուռնանց աչկիրը աբլանդուա իս արի ու հիմի ծանդր ու բարակ քիզ ամա նստած քէֆ իս անում էլի՞։

ԷՓԷՄԻԱՑ։

Դո՛ւս արէք, դուս արէք

ԱՐՈՒԹԻՆ։

Դո՛ւս, դո՛ւս ասում իմ։ (Ծառաներին։) Դո՛ւս արէ՛ք, չի՞ք իմանում։ (Ծառաները յարձակվում են Պէպօի վերայ։)

ՊԷՊՕ։

Դո՞ւս... (Ծառաներին նորից մղելով։) դէնը՞, դէնը՞։ (Ծառաները փորր ինչ հեռանալով կանգնում են միջի դռան առաջ։ Արութինին։) Փուղերս հաշա իս ուտում, ու դուս էլ իս անում էլի՞։ Դո՛ւս կէհամ, դուս կէհամ, չարէս ինչ է, զօռը քունն է. ամա լաւ գիդացի, պարուն Արութին, էս արարմունքը քիզ չի մնա... վերիւն Աստուա՛ կայ, քնթէմէտ կու հանէ քու անօրէնութինը։ (Ծառաներին հրելով։) Դէնը՞, դէնը՞։ (Դուրս է գնում միջի դռնից։)

ԱՐՈՒԹԻՆ, Պէպօի ետեւից ծառաներին։

Գնացէ՛ք, գնացէ՛ք հիդը, վունչիչ չը տանէ, վունչիչ չը փախցնէ։ (Ծառաները դուրս են վազում Պէպօի ետեւից։) Էսէնց էլ լպստաճ։ (Կռանում է եւ փողերը հաւաքում։)

ՏԵՍԻԼ ԺԶ

ԱՐՈՒԹԻՆ ԵՒ ԷՓԷՄԻԱՑ։

ԷՓԷՄԻԱՑ։

Գլի՞ժ է էն մարթը, թէ էս ինչ խաբար է։

ԱՐՈՒԹԻՆ, փողերը ծոցը դնելով։

Արի ու սրապէսներուն վարցկ արա հիմի։

ԷՓԷՄԻԱՑ։

Էս ի՞նչ բան է ախար, չի՞ն ասի։

ԱՐՈՒԹԻՆ։

Աստուձ վ՛ուչ գիդէ նրա գլուխը, քուր իմ մարթու տալի, կօսէ. ես ի՞նչ անիմ վուր մարթու է տալի։

ԷՓԷՄԻԱՅ։

Բաս էն ի՞նչ էր ասում, թէ փուղերս հաշա իս ուտում, կօսէ։

ԱՐՈՒԹԻՆ։

Աբա քիմէն չիմ արմնում, Էփէմիա՛յ. փուղ հաշա ուտիմ ու էնէլ նրա պէս մարթունը, չի՞ ճանչնում ինձ։

ԷՓԷՄԻԱՅ։

Էտ փուղերը վուր ծուցդ դրի՛ր, նրանը չէ՞ր բաս։

ԱՐՈՒԹԻՆ։

Նրա հօրն օղորմի. վուխչ իմ կայինքն էլ նրանը կուլի բաս։ Էկաւ, թէ խիղճ մարթ իմ, կօսէ, քվերս համա բաժինք չունիմ, կօսէ, քու վուրթկերանց արիւ սաղաղա օտկէ՛ միզ, կօսէ. ես էլ ախմախ ախմախ հանեցի ու բախշեցի։ (Նեղանալով։) Շնորհակալութինի մագիէրն էր, վ՛ինկալաւ ու ճակտիս խփից, քիչ է, կօսէ։

ԷՓԷՄԻԱՅ, Ծուշը վեր բերելով։

Վ՛ոյ քոռանամ ես, ղուրթ իս ասում, Արութին ջան։

ԱՐՈՒԹԻՆ։

Բաս սուտ իմ ասում։

ԷՓԷՄԻԱՅ, չարացած։

Քու հախն է, խիստ լաւ էլ է արի, էտ էն գիդենայ, վուր ժամէմէն դուս գալիս, հարուր ախկատ վուր ըլի դռանը, դիփունանց ձեռին (Գործողութինը ցոյց տալով։) «բռնէ, բռնէ, բռնէ։» Իժում էտէնց քու թողնին էտ անպատվութինը։

ԱՐՈՒԹԻՆ։

Ի՞նչ պիտի անիմ։

ԷՓԷՄԻԱՅ։

Աշխարքի լափը գլխուտ ածաւ....

ԱՐՈՒԹԻՆ։

Ի՞նչ անիմ։

ԷՓԷՄԻԱՅ։

Վ՛ոյ քոռանամ ես, էլ բան չը մնաց, վուր քիզ չասաւ, ու էնղաղա բէաբռութինը դուն կո՞ւտիս։ Ի՞նչ կօսին խալխը։

ԱՐՈՒԹԻՆ։

Խալխն ի՞նչ գիդէ, գլուխը քարը տայ, թող խիղճ մարթ է։

ԷՓԷՄԻԱՅ։

Վ՛ոնց թէ խալխն ինչ գիդէ. էնղաղա բջերանց մոդ չէ՞ր, վուր վրէտ բղաւեցաւ ու ճղաւեցաւ։ Աշխարքը ու երդիր իս թալնի, կօսէ, քսան ու հինգ հազար խղճի տուն իս քանդի, կօսէ, էս արարմունքները քիզ չի մնա, կօսէ. ու էստունք պիտի մարսին դուն։ Բջերանց բերնումը իքմին կու կանգնի։

չե՞ս գիդի, վուր էքուց ինչկլե էս վախտը վուխչ քաղաքը կու իմանայ։ Մարթ ըլիմ, գլխիս գդակ ունենամ ու ղաբուլ անիմ, վուր էս հանգի պաժարնին իմ տանը ինձ անպատիւ անէ՞, ասէ վուր նրա փուղերը հաշա իմ ուտռիմ։ Թաւաթ ինչ ասիս ասում ին քիզ վրայ ու հիմի պակասը թամամ ըլի՞։

ՏԵՍԻԼ ԺԷ

ՆՐԱՆՔ ԵՒ ԳԻԳՕԼԻ։

ԳԻԳՕԼԻ, ներս մտնելով։

Հալելէքը բերի. ախչիկ պարուն։

ԷՓԷՄԻԱՅ։

Հալելէ՞քը… (Շտապով դնում է. կէս ճանապարհից Արութինին։) Մէ արի, մէ արի, Արտուշկա Ջան, տես թէ ինչ հալելէք է։ (Դուրս է վազում միջի դռնից։ Գիդօլին հետեւում է նրան։)

ՏԵՍԻԼ ԺԸ

ԱՐՈՒԹԻՆ ՄԷՆԱԿ։

Տօ, ղուրթ ի՞նչ ոյին էկաւ գլխիս էն լօթի պաժարնին… էլ մինձ ու պստիկ չկայ աշխարքումը։ Էն հանգի ախկատ ղադօն վրէս էնէնց բղաւի՞, (Ման դալով։) էն հանգի խօսկիր ասէ՞։ (Հայելումը ուղղվում է։) Բօշացաւ, բօշացաւ աշխարքի բանը։ (Հեռանում է հայելիից։) Պարտ իս, կօսէ… գժվի՞լ է. ի՞նչ պարտք, ի՞նչ փլաւ, ի՞նչ փստան։ Ո՞վ ասաւ վուր պարտ իմ, ո՞վ գիդէ

վուր պարտ իմ… թէ պարտ իմ, ի՞նչի ինչկլե էսօր յիդ չիմ տվի, եա նրան վուր տամ… մէկէնտերուն ի՞նչ ասիմ, նրանք ի՞նչ գէթ ին արի…… Չէ, (Նստում է։) վունչիչ պարտ չիմ, սուտ շառիր ին մոգօնում։ Թէ պարտ իմ, ի՞նչի բարաթ չունէ. վո՞ւրդի է… ո՞վ ունէ… ի՞նչ բարաթ… բարաթ չկայ… գնացիլ է… ջնջվիլ է… թէ չէ էլ ի՞նչ օրութին է… ամա էն լօթի պաժարնին պիտի ամէն տիղ բղաւի, վուր փուղ իմ պարտ ու յիդ չիմ տալի՞… (Վեր է թռչում տեղից։) Չէ՛, չէ՛, Էփէմիէն դրուստ է ասում, պիտի ես բղաւիմ, ես պիտի հարայի տամ, աշխարք ու երդիր զարթեցնիմ, վուր ինձ, ինձ պէս աղա մարթուն, էսէնց անպատիւ արին, էսէնց շառիր ին դցում վրէս… Մուլափ, ես քիզ կու շանց տամ, լօթի պաժարնի։ (Դուրս է դնում ձախ դռնից։)

ՎԱՐԱԳՈՅՐ։

ԷՐԷՐՈՒԷՆԾ Գ

Առաջին արարուածի սենեակ, միեւնոյն ձեւով կարգաւորած եւ դամբը Թոկի վերայ փռած։ Առաւօտ է։

ՏԵՍԻԼ Ա

ԿԷԿԷԼ, մէնակ տախտի վերայ նստած, մի փոքր ժամանակ լուռ կարում է, յետոյ սկսում է երգել։

«Սիրելիդ ինձ ատել ես,
Ատել ես նախատել ես,
Ջիգարը կտրատել ես,
Արնաշաղաղ ես արել։»
(Աչքերը սրբում է։)
«Ինձ տեսնելիս տուր բարով,
Խորհուրդդ ասա գրով,»
(Լացի ձայնով։)
«Ինձ խօ մորթել չես սրով,
Անսուր մատաղ ես արել։»
(Լաց է լինում։)

Ա՛խ Աստուա՛ծ, ես էլ կօսիմ թէ ա՞թմորթի իմ։ Ի՞նչի ստիղծեցիր ինձ, ի՞նչացու իմ աշխրքումը, անմիղ գեղնի էրե սին տիղ իմ բռնում։ Էն ուվիրօ լաւ չի՞ ըլի, վուր գեղնի տակն ըլիմ ու գերեզմանս վուտի տակը կոխչրտում ըլին։ Ի՞նչի չիս սպանում ինձ Աստուա՛ծ...

Դուն խօ լաւ գիդիս, վուր մահն ուվիրօ հիշտ է ինձ համա, կանց շունչ քաշելը։ (Լռութիւն։) Ջուրը նստնիմ, թոկով խիխավիմ, դանակ ցցիմ սրտումը, ի՞նչ ջուղաբ տամ Քիզ։ (Լաց է լինում։) Աստուա՛ծ, Աստուա՛ծ, ես կէծակ վեր գցէ գլխիս, ես կարմնջի վրայ անցկենալիս կարմունջը փուլ ածա՛ վուտիս տակը, ես գեղնին ման գալիս, գեղինը պատռէ ու ինձ դէվէր տա՛ր։ (Լաց է լինում։)

ՏԵՍԻԼ Բ

ՆԱ ԵՒ ՇՈՒՇԱՆ։

ՇՈՒՇԱՆ, ներս մտնելով ձախ դռնից։

Էլի լաց ի՞ն ըլում, Կէկէլ։

ԿԷԿԷԼ, աչքերը սրբելով։

Զարթնի լացը, ի՞նչ է մնացի ինձ, դէդի։ Էս արտրսունքն էլ վուր չըլի տվի Աստուա՛ծ, սիրտս ի՞նչով հովցնիմ։

ՇՈՒՇԱՆ։

Ախար էտղաղա արտրսունք կա՞ելի, վուրթի, խօ քամվեցար իստակ։

ԿԷԿԷԼ։

Բաս ի՞նչ անիմ, դօշիս հէնց գիդիմ աղաքար է պարկած։ Էս արտրսունքն է ինձ օտկում, մէ քիչ թէ չէ դարդու խիխտրվում իմ։

ՇՈՒՇԱՆ։

Դարդ ցաւի գայ ու Աստծու պատժի էն սիւ

սրտովը։ Աժէ՞ վուր էտղադա դարդ իս անում՝ նրա համա։

ԿԷԿԷԼ։

Աշխրքումը բէդնամ էլայ, գլուխս դուս կորվեցաւ, էլ տալի ու սծօրի էրեսին չիմ կանացի մոիկ տա, էս ապրիլ է։

ՇՈՒՇԱՆ։

Մի՛ դիսրդ անի, ԿԷԿԷԼ ջան, մի՛ դարդ անի, Աստուձ օղորմած է, կուլի նրա վրայ լաւ մարթու է ռաստ բերում քիզ։

ԿԷԿԷԼ։

Մարթու աչկն էլ կարիմ. նրանք խնճպտանք ունի՞ն, նրանք հոքի ունի՞ն։ Ինձ պաչ արաւ ու իմ պաչը տարաւ ուրիշին էրիտ։ (Գլխին խփելով։) Դեղինը պատռէ՛ ու ինձ դէվէր տանէ։ Էլ ես երգնքի էրեսը վո՞ւնց պիտի տեսնիմ։

ՇՈՒՇԱՆ։

Աբա դուն վուր էտունք իս անում, ԿԷԿԷԼ ես ի՞նչ անիմ։ (Լաց լինելով։) Միխակը չի՞մ, բաս ես վո՞ւնց դիմնամ իմ սիւ ու մութ օրին մէ կուռը, քիզ մէ-կէլին... էտ հանդի օրինակնիր շատ է էլէ, վուրթի, մէնակ միզ ամա խօ չէ ստիղծած աշխարքը։ Քանի միզպէսնիրը կան, քանի միզ վրայ վաղթարն ասա, հացի հասրաթ ածած ին, մէ թիքայ հացին էրնէկ ին տալի, դունէ դուռը ախկրտութին ին անում ու էն թիքայ հացը, թէ հաղրէնը մէկը տալիս է, մնա-

ցածնիրը կինձումը խփելով դուս ին անում. միզ խօ Աստուձ մէ թիքայ տվել է, փառք Իրան, ինչ անիս, հալբաթ միր ճակտին էս էր գրած։ Էլի փառք տանք Իրան, աղանչաք անինք, վուր էստու վրայ վաթար օրին չը ռաստ բերէ միզ, իմ Պէպօին ջան տայ, վուր ինչ թիքայ միզ տալիս է նրա ձեռով, էն թիքէմէն էլ չը ղրդէ միզ։

ԿԷԿԷԼ։

Էրնէկ Աստուձ ինձ մահ տայ, ուրիշ վունչիչ չիմ ուզում։

ՇՈՒՇԱՆ։

Մի՛ ասի, մի՛ ասի, ԿԷԿԷԼ ջան։ (Գրկելով ԿԷԿԷԼին։) Միխակ է Աստծու մոդ, դէնացվալօս դէդէն։

ԿԷԿԷԼ, Շուշանի գրկում։

Ախ, դէդի ջան։ (Լուռ լաց են լինում։ Տեսարան։)

ՏԵՍԻԼ Գ

ՆՐԱՆՔ ԵՒ ԳԻՔՕ։

ԳԻՔՕ, ներս մտնելով միջի դռնից գլխարկով եւ ձեռնափայտով։

Վա՜, օխնած հոգիք, զարթնի էտ բան ու գուրձ չունի՞ք։

ՇՈՒՇԱՆ, թողնելով ԿԷԿԷԼին։

Ուրիշ ինչ բան ու գուրձ պիտի ունենանք, թէ գուզես դուն ծափ տու, մինք խաղանք։

ԿԷԿԷԼ, վերցնելով կարը։

Ախ... (Շտապով եւ աչքերը սրբելով դուրս է գնում ծախ դռնից։)

ՏԵՍԻԼ Դ

ՇՈՒՇԱՆ ԵՒ ԳԻՔՕ։

ԳԻՔՕ։

Է՜, լաւ է, ձիր հօրն օղորմի, ամիսրթին էլ մէ քիչ համբերութին պիտի ունենայ։ Ախար մէ գլուխ դիպ լաց լէք ըլում, խան մէկն ու խան մէկէլը, էտէնց վռնց կուլի։

ՇՈՒՇԱՆ, նստելով տախտի վերայ։

Ի՞նչ անիս, ինչ միր գլխին բան էկաւ, Աստուած միր դուշմնին էլ չը տայ։

ԳԻՔՕ։

Աստծու բանը դուն չիս գիդի, Շուշան, ուրիշ հանգն է սարքի աշխարքը, ուրախութենի հիդ դարդ է տալի մարթու ու դարդի էդնէն — ուրախութին։ (Նստելով աջ կողմը սեղանի մօտ, բուռնոթի է քաշում։) Հըմ է։ (Երկու ձեռքի ցուցամատները միմեանց կպցնելով։) Էսէնց է ա՛յ, քուր ու ախպէր։ Վունցօր քուր ու ախպէր մէկմէկէմէն չին բաժնվի, էնէնց էլ ուրախութինն ու տխրութինը։

ՇՈՒՇԱՆ, առանձին։

Քու աչին էլ։

ԳԻՔՕ։

Շատ լաւ է շինի է։ Ասում է մարթուն՝ էս քիզ ուրախութին, գնա, քէփ արա, ասում է. իժում էն քէփումը մէկ էլ տեսնիս մէ դարդ է լուս գցում միզ ամա,

վուր ինչ է, հըրը... Իրան չը մոէն գցինք։ Գոհանամ Քիզ, Աստուած։

ՇՈՒՇԱՆ։

Էրնէկ գիդենամ բաղրօս քարոզի վուխտ է։

ԳԻՔՕ։

Մուլլափ, Շուշան, մուլլափ, ախար դուն չիս գիդի թէ խօսկս վուրդի է գալի է։ Ինձի ինձ էրվում իմ, խորվըվում իմ։ ամա էլ ինչ կանամ օտկի։ Մէկ փիքը իմ անում, վուր կուլի դժուխկը գնամ։ ամա մէկէլ ասում իմ, վուր հալբաթ էս Աստծու բան էր։ Հիմի գուղէք ինձ սպանեցէք, գուղէք Աստծուն փառք տվէք, վուր հոքիս բերնում է ու խօսում իմ։

ՇՈՒՇԱՆ։

Վախտ իս գթի դուն էլ, Գիքօ, առանց էն էլ դարդու տրաքվում իմ։

ԳԻՔՕ։

Ես էլ էտ իմ ասում, Շուշան, է։ Տիս հիմի էտ դարդի հիդ ինչ ուրախութին է գալի։ (Շուշանը զարմացած նայում է։) Արմնում իս դանա, Շուշան։ Վուրն էն չախը թամաշա արա, եփօր դիպ կօսիմ։ (Գրպանից ծալած Ծուղթ հանելով եւ աջ ձեռքով բարձրացնելով։) Ա՛յ։

ՇՈՒՇԱՆ։

Էտ ի՞նչ է։

ԳԻՔՕ։

Ի՞նչ է... էն է, էն, Շուշան։

ՇՈՒՇԱՆ։

Վուր չիմ իմանում։

ԳԻՔՕ։

Ա՛յ, կու իմանաս. համբերությունը բաժնելիս Աստուած քիչ վայրկենական էրիտ։ Հիմի ինչ համբերությունն տվել է քիզ Աստուած, դիպ մէտի մոդ արա՛ ու ծանդը ու բարակ ինձ անգամ դի՛, վուր լեզուս չը խառնվի։

ՇՈՒՇԱՆ, առանձին։

Եարաբ էս հանգի մարթ կռնվի։

ԳԻՔՕ, շարունակելով։

Գիդիս ի՞նչ է, Շուշան։ Օղորմած հոքի քու մարթը...

ՇՈՒՇԱՆ, երկար ոդոց հանելով։

Ը՞հը՞հ...

ԳԻՔՕ, զրպանից Թաշկինակը հանում է եւ աչքերը սրբում. Լացի ձայնով։

Աստուած օղորմի, Աստուած հոքին լուսավուրէ, լաւ մարթ էր, անուշով մարթ էր խիղճը։ Քանի ջէր է ձիով Գանջա գնացի ու էկի օղորմած հոքին։

ՇՈՒՇԱՆ, ոդոց հանելով։

Ախ, ախ, ախ։

ԳԻՔՕ։

Էհ, փուչ աշխար, Շուշան։

ՇՈՒՇԱՆ։

ԻժոՒմ։

ԳԻՔՕ։

Հա... (Հանդիստ։) մահէմէն մէքանի օր առաջ, ես խօմ դիպ կշտին էի գիդիս, օթախի դռնիրը կոխպիլ էրիտ, ճնացինք ես ու օղորմած հոքին։

ՇՈՒՇԱՆ, տխուր։

Միաս է։

ԳԻՔՕ, ձեռքով իր բերանը ծածկելով։

Մուլ՛ափ... ջիբէմէն բալնքնիրը հանից ու էն ձիր սիւ պստի ղուլթին ուղից, ես էլ մոդ տարայ. սա բաց արաւ, էս թուխաը հանից ու ինձ էրիտ։ Անդէրձ արաւ, վուր ինչրու վիրչի ժամանակը վունց քիզ խմաց անիմ, վունց Պէպօին։ Պէպօս, ասում է, ջէհէլ է, կօսէ, վա՛յ թէ փչացնէ, կօսէ, ու իմ Շուշանը կնիկարմատ է, կօսէ, վա՛յ թէ Պէպօի ճանդը դցէ, կօսէ։ Ինչրու վուխաը չը գայ, կօսէ, վունց մէկին մի՛ ասի, թէ դուն ունիս, կօսէ։ (Թափելով Թաշկին, լացի ձայնով եւ բարձր։) Իմ կէկէլի բաժինքը էստու

է, կօսէ։

ՇՈՒՇԱՆ, վեր թռչելով։

Էտ ի՞նչ է թուխաը գանա։

ԳԻՔՕ։

Ի՞նչ թուխաա... Արութինի բարաթը։

ՇՈՒՇԱՆ, մօտ վազելով։

Ի՞նչս ասում, Գիքօ... (Խլելով Թաշկին ձեռքից։) ուզում իս հոքիս հանի՞ (Բաց է անում Թաշկին եւ ճանաչում։) Էս է... օտկեցէ՛ք... սիրաս գնաց... (Գնում է իր տեղն ընկնում. զարմացած միմեանց նայում են. երկար լռություն։) կլինաղամ մե-

ուայ... Իժում, անաստուած, ինչրու հիմի ոնլր էիր պահում: Կէկէլիս սպանեցիր ու հիմի...

ԳԻՔՕ։

Ես միդ չունիմ, Շուշան, գիդէ Աստուած, վուր միդ չունիմ։

ՇՈՒՇԱՆ, շտապով։

Այ, Աստուած անէ քու դիվանն ու դադաստանը։ Էտէնց կատարեցիր անդէրձը։

ԳԻՔՕ։

Ախար մէ անգամ դի՛ է...

ՇՈՒՇԱՆ, խօսքը կտրելով։

Անգամ ցաւի դաս ու Աստծու պատիժի, էս օրէնք է՞, վուր դուն արիր։

ԳԻՔՕ։

Ախա՜ր, Շուշան...

ՇՈՒՇԱՆ, անդադար Գիքօի խօսքը կտրումէ մինչեւ նրա վեր կենալը։

Ախար քիզ ու... (Առանձին։) չոռ ու ցաւ։ (Գիքօին։) Լօքի։

ԳԻՔՕ։

Փիէ՜...

ՇՈՒՇԱՆ։

Ախար, ի՞նչի պահեցիր, ի՞նչի ինչրի էսօր։ Քու Աստծուն ի՞նչ էս ասում, քու հոքուն ի՞նչ ջուղաբ կու տաս։

ԳԻՔՕ։

Տօ, մէ անգամ դի՛ է...

ՇՈՒՇԱՆ։

Աբա ասա՛ էլի։

ԳԻՔՕ։

Այ, Շուշան...

ՇՈՒՇԱՆ, շարունակելով։

Ասա՛, ասա՛։

ԳԻՔՕ։

Օ՜վէ...

ՇՈՒՇԱՆ։

Տեսնիմ ի՞նչ էս ասում։

ԳԻՔՕ։

Ախար...

ՇՈՒՇԱՆ։

Մէ տուտուց բան պիտի ասիս էլի։

ԳԻՔՕ։

Տօ, խօսքս բերնէմէս մի՛ խլի է...

ՇՈՒՇԱՆ։

Աստծու պատիժի դաս էլ։

ԳԻՔՕ, վերկենալով եւ գլխարկը Ֆափ տալով։

Էլ վունչիչ չիմ գիդի... (Գնալով։) կնիկարմատի պէս էլ անդնջում։

ՇՈՒՇԱՆ, բարձր։

Մուլա՛փ, մուլա՛փ, Գիքօ։

ԳԻՔՕ, յետ դառնալով։

Ախար, օխնած հոքի, մէ քիչ համբերութիւն ունեցի, ասում իմ է։ Ես խիստ ուրախ իմ, վուր էսէնց

էլաւ բանը. ամա Աստծու դարսողութիւնին վրէնց հակառակվի մարթ։ (Նստում է միեւնոյն տեղը եւ բուռնոթի է քաշում։) Հրմ...

ՇՈՒՇԱՆ, առանձին։

Կրիմ քու գլուխը։

ԳԻՔՕ, բիթը սրբում է։

Զիս դիպի, թէ ինչ օյին էկաւ գլուխս։

ՇՈՒՇԱՆ։

Էլ մի ծռծռեցնի, թէ քու Աստուած կու սիրիս։

ԳԻՔՕ։

Զէ, աֆ, էս սահաթիս, քիչ է մնացի... Էտ բարաթը վուր տալիս էր օղորմած հոքին, շատ ասի, թէ իմ բան չէ, էտ հանդի ծանդը բիռն, ասի, վրէս մի շալկի, ասի, էլ դնջութին չիմ կանա ունենա, ասի. ամա չարաւ։ Հալալ մարթ իս Գիքո, կոսէ, (Լաց է լինում։) զարթնի քիզ ճար չունիմ, կոսէ։ Է՛հ, չարէս ինչ էր, դուն ինձ ասա. վիկալայ բարաթն ու մէ երիք չուրս օրվան էդնէն հոքին էրիտ խիղճը. Աստուած հոքին լուսաւորէ, (Աչքերը սրբելով եւ լացի ձայնով։) բարեխօս ըլի իր Կէկէլի համա։

ՇՈՒՇԱՆ, աչքերը սրբելով երկար ոգոց է հանում։

Ը՞հ, հը, հը, հը...

ԳԻՔՕ։

Է՞հ, մախլաս, դիպ մահի վուրթիք ինք.... Վուրդի էի։

ՇՈՒՇԱՆ։

Վուր բարաթն էրիտ ջրատարը։

ԳԻՔՕ։

Հա՛, էրիտ։ Առայ, տարայ տուն, պահեցի..... Մէ մէ մարթ կայ խաղնա է պահում. եարաբ նրա քունը վրէնց է տանում գիշերով... պահեցի։ Էին սիդէլնիր ունէի էրէկլէ պարնի վախտվա։ Ես խօ զարթնի մէ քօխին ուրիշ վունչիչ չունիմ. ամա էնէնց պահում էի էն սիդէլնիրը, մարթու խանդիխան կարթացնել էի տալի, դուր էր գալի խօսկիրը։ Դուն չիս տեսի, Շուշան, ջէր Աստծու անուն է գլխին գրած, իժում Քրիստուսինը, իժում Հոքի սուրբը. գալիս է աղա Ջան, իժում աւետարանիչնիրը, սրբիրը, դիպ մէ մէկ, մէ մէկ, էնչադա օրհնանք, էնչադա բանիր. էհ, գնաց դիպ մէտի, հայիպ, հայիպ միր ժամանակ։

ՇՈՒՇԱՆ։

Էտ խիստ հիռու գնացիր, Գիքո։

ԳԻՔՕ։

Հիռու կի չէ, խիստ մոդ կացայ, ախար հէնց էն սիդէլներումը պահեցի էտ բարաթը։ Կապեցի, դրի զանդկիս քունջը, բանիքն էլ ջիրէմէս չէի հիռացնում։ Ամիս չէր անց կենայ, վուր մէ երկու ջէր զանդուկս չէի բաց արի ու կապուցքս չէի տնդղի։ Ամանաթի պէս դժար վունչիչ չկայ աշխարքումը.... Աստուած, Աստուած էի անում, վուր Կէկէլի բախտը մէ վախտի բաց ըլի, ու բաց էլ արաւ խօմ։ Մէ օր էլ

բաց անիմ զանդուկս, տեսնիմ սաղ կապուց.քը չկայ։ Հայ դէս, հայ դէն, չկայ, չկայ, չկայ։ Զարթնի էս մէ քանի հատ էլ հնուց, շատ հնուց այ, սի՛ փուղ ունէի, էն սի՛ փուղն էլ հիդը գում՝ ու կլան է էլի՞... Մէկ էլ բանիրը կի զանդկումը իր տիղը անշարժ, սաղ սալամաթ դարսած է։ Ախպէր, թէ գուղ էկաւ, կանց հին գրօշնիրն էր տանում, թաղա փո՛ւղն էր տարի՞, էրկու թուման աւել դիփ թաղա Նիկալաի ղղղան մանէթնիր ունէի. թէ սատանայ մտաւ զանդուկս, էն վունց տուն գնաց ու դուս էկաւ, վուր մէ սիղ ծակ չէթօղ զանդկումը. թէ չէ զանդուկը կոխպած, բաշնիքը ջիբումն, վո՞ւնց հանդաւ էնդունք։ Ի՞նչ իմ հալն էր, Շուշան, էն Աստուա՛ գիդէ, մէ օր հոքի ունիմ տալու։ Գարի ասիս, ես իմ գցիլ տվի, էվէմերդի ասիս, ես իմ բացանիլ տվի, չոքած էգեղեցու բոլորքն ասիս, ես իմ աղօթկ արի։ Իշտահս կապվեցաւ, քունս կոտրվեցաւ, ջում ջումի դառայ։ Էստի լաւ քանի ձիզ տեսնում էի, քանի ձիր լացն ու սուքը իմանում էի, սիրտս կրակ էր ենդնում։ Քանի ջէր ուզում էի բաց անիմ էս բանը. ամա իմ ահու վունչիչ չէի կանացի ասի, լիզուս չէր զօռում, ինչ անիս։ Ամա չասիս, Շուշան, թէ ձիր միկը կու տանէի. իմ աղանչաքը դիփ էն էր, վուր ինչրու էս պարտքը չը պրծնիմ, Աստուա՛ հոքիս չը հանէ։ Պարծանքսով չիմ ասում, Շուշան, Աստուա՛ գիդենայ, քօխիս գրաւ դրի ձիզ ամա ու փուղերը

էս էրկու օրումը պիտի տան. ամա ինչ փայիդա վուր իր վուխտը չը վրահասաւ, հալբաթ էսէնց պիտէր։ Փառք Քիզ, Աստուա՛ծ, փառք, մեռնիմ Քու ամենակարող զօրութենին։

ՇՈՒՇԱՆ։

Իժում վո՞ւնց գթար ախար էս բարաթը։

ԳԻՔՕ։

Վո՞ւնց գթայ.... ես լաւ չը գթայ, Շուշան, իրան իրան էկաւ։ Հիմի ասա՛ թէ վո՞ւնց։

ՇՈՒՇԱՆ, առանձին։

Հալից ու մաշից։

ԳԻՔՕ, շարունակելով։

Էս իմ սատանի սրուց քվիր տղէն....

ՇՈՒՇԱՆ։

Հիմի վուր Ռուսէթ է՞։

ԳԻՔՕ։

Հա՛, հէնց էն աղա գաղէս։ Մէ օր, քանի ջէր էստի էր, շատ աղանչաք արաւ, վուր էտ սիգէլնիրն, ասում է, ինձ տու, կօսէ, իմ ուսումին պէտկը գու.քայ, կօսէ, չունքի հին բանիր է, կօսէ։ Քիզ դրուստն ասիմ չը տվի, ասի չը պատրաստէ, դէն չաՃէ, ասի։ Ախար, թէ թաղա ուսում ին ստանում, հին բանիրը ի՞նչին է պէտկ։ Անց կացաւ գնա՞ց։ Գնալու վուխտը....

ՇՈՒՇԱՆ։

Նրա գնալը մէ երիք ամիս կուլի գա՞նա։

ԳԻՔՕ։

Հա էտէնց է։ Սա, մի՛ ասի, բալնիքը ջիբէմէս կու հանէ, ես ոչ գիդէ ինչ էրազումն էի էնչախը, աղաւարի զանդուկս բաց կօնէ, կապուցքն ու հին փուղները կու ծպըպէ, յիդ կու կոխպէ, բալնիքը ջիբը կու դնէ ու հայդէ։ Արի՛ ու հիմի դուն ինձ լօբի ասա, տեսնիմ թէ ինձ վրայ ղօչաղն ձեռնէմէն ի՞նչ կու դուս դէր։ Ախար մարթու խօսկը կու իմանան ջէր, Շուշան, իժում ղնամիշ կօնին, թէ ղնամիշ անելու է. թէ չէ լօբին ի՞նչ անէ, վուր ինձ լօբի իս ասում, Շուշան։

ՇՈՒՇԱՆ։

ԻժոՒմ։

ԳԻՔՕ։

Իժում էլ էն, վուր էս բարաթը էս օր փօշով ղրգիլ է ու մէ կարաբաղին էլ մասխարութիննիր է գրի վրէս։ Քու սիգէնիրը, կօսէ, Փռանգատուն ղրգեցի, կօսէ, ու սի՛ փուղներու համա, ասում է, թէ գուզես մէ մէնդալ կու ղրգին քիզ ամա, կօսէ, ու էս բարաթն էլ, ասում է։ Յիդ քիզ փէշքաշ ասում է։

ՇՈՒՇԱՆ։

Գեղինը պատուվ ու նրա սատանին դէվէր տանէ վուչ ըհրա։

ԳԻՔՕ։

Աբա, Շուշան, ես ի՞նչ միդ ունիմ։

ՇՈՒՇԱՆ։

Կէկէլս կի մեռնում է ու ինչ անիմ թէ միդ չունիս։

ԳԻՔՕ։

Աստուձ օղորմած է, Շուշան, Աստուձ օղորմած է։

ՇՈՒՇԱՆ։

Աստուձ միր աչկը հանից ու պրծաւ, էլ ինչ օղորմած է։

ԳԻՔՕ։

Մի՛ ասի, Շուշան, մի՛ ասի, Նրա դարսողութինը օչ ով չի կանա իմանա։ Հալբաթ Նրա կամքն էսէնց էր։

ՇՈՒՇԱՆ։

Փառք Իրան, ի՞նչ անինք։

ԳԻՔՕ։

Լաւ մարթ վուր էլիլ էր, խօ փուղի համա չէր թողնի Կէկէլին։

ՇՈՒՇԱՆ։

Ես էլ միթամ էտ իմ ասում դիփ. ամա էլ ինչ փաիդա, նամուսներուս կորվեցաւ, սիրաթներուս գնաց, աշխարքի համա ղէնօ ու մասխարա ինք դառի։ Էլ ոչ գուզէ իմ Կէկէլին, խիղճ իմ Կէկէլ։ (Լաց մնելով։) Նորչի արիւը փչանում է։

ԳԻՔՕ,

Է՜, հերիք արա՛, քու հօրն օղորմի, Շուշան։

ՇՈՒՇԱՆ, լացով։

Ախ, Կէկէլ ջան, Կէկէլ։

ԳԻՔՕ, աչքերը սրբելով եւ լացի ձայնով։

Օ՛հ, օ՛հ, օհ, օ՛հ։

ՏԵՍԻԼ Ե

ՆՐԱՆՔ ԵՒ ԿԱԿՈՒԼԻ։

ԿԱԿՈՒԼԻ, ներս մտնելով միջի դռնից։

Էստի մտիկ, քու պտռտելէմէն ջանը գնաց, դուն կի էստի ծանդը ու բարակ նստած իս։

ԳԻՔՕ։

Հը՛, ի՞նչ խաբար է։

ԿԱԿՈՒԼԻ, Գիքօի կուռը բռնելով։

Վիկա՛ց, վիկա՛ց, չուստ արա՛։

ՇՈՒՇԱՆ։

Ի՞նչ է պատահի։

ԿԱԿՈՒԼԻ։

Աստուա՛ծ վուչ գիդէ խիղճ մարթու գլուխը։

ՇՈՒՇԱՆ, վախեցած։

Ի՞նչ է։

ԿԱԿՈՒԼԻ։

Պէպօին տարան էս օր առուտեհան։

ՇՈՒՇԱՆ։

Ո՞ւր տարան, ի՞նչ իս ասում։

ԿԱԿՈՒԼԻ։

Այ էն գժուխկի մաշխալէն ինչօր գանգատ է տուն տարի։

ՇՈՒՇԱՆ։

Ո՞վ, ի՞նչ գանգատ։

ԿԱԿՈՒԼԻ։

Այ, էն շէյթան ԱրուԹինը, ձիզ վուր փուղ պարտ է։ (Կրծքին խփելով։) Թէ մէ ճանգը կու ննդնի։

ՇՈՒՇԱՆ։

Վո՛յ քոռանամ ու կուրանամ իս։ իժում ի՞նչ կօնին Պէպօիս։

ԿԱԿՈՒԼԻ։

Ո՞վ գիդէ, դէդի, ինչօր չանին միզ, արմնելուն էն է։ (Գիքօին։) Դէ, մի՛ ուշացնի, Գիքօ, էհ, առուտվան դէսն է քիզ իմ պտռտում։ աստաս չը վըահանինք էլ։

ՇՈՒՇԱՆ։

Փուղը նա է պարտ ու էլի նա է գանգատ անում։ Այ, Հախմիան Տէրն անէ քու դադաստանը, ԱրուԹին։ (Գիքօին։) Վիկա՛ց էլի, ա մարթ, չիս իմանում։ Տա՛ր, տա՛ր էս բարաթը, սիվցրու նրա էրեսը։ (Գիքօն առնում է բարաթը։)

ԿԱԿՈՒԼԻ։

Ի՞նչ բարաթ։

ՇՈՒՇԱՆ։

Այ, ճամփին կօսէ։

ԿԱԿՈՒԼԻ, Գիքօին վեր բաշելով։

Տօ, միխած լիս էտի։

ՇՈՒՇԱՆ։

Ախ, Աստո՛ւա՛ծ, Աստո՛ւա՛ծ։

ԳԻՔՈ, վերկենալով։

Ա՛յ, գնանք, գնանք, (Պատրաստվում է բուռնոթի քաշելու։)
տեսնիմ թէ վո՞ւնց է հաշա ուտում հիմի։

ԿԱԿՈՒԼԻ, ձեռքից խլելով բուռնոթամանը։

Տօ, արի՛ ճամփին քաշէ էլի, վա՛։ (Բռնի դուրս է տանում։)

ԳԻՔՈ, դուրս գնալով։

Ո՞ՇՀ, ո՞ՇՀ, ո՞ՇՀ։

ԿԱԿՈՒԼԻ, դուրս տանելով։

Զահրուղ՞ըթի, (Դուրս են գնում միջի դռնից։)

ՏԵՍԻԼ Զ

ՇՈՒՇԱՆ, մէնակ կանգնած։

Եարաբ ի՞նչ իս ուզում միզմէն Աստուա՛ծ, ի՞նչ գէթ ունիմ Քի մոդ։ Զէր աչքս հանեցիր, մարթուս խլեցիր, իժում ախչկաս բախտը քար ու քանդ արիր, հիմի էլ ի՞նչ իս պատրաստում իմ սիւ ու մութ օրի համա։ Խղճա՛, Աստուա՛ծ, խղճա՛, վունչիչ չիմ ուզում Քիմէն, վո՛ւնց փառք, վո՛ւնց դօվլաթ, վո՛ւնց պատիւ, օղնդ էս դառն օրվան վրայ ուփրօ դառն օր չը շանց տաս։ Դուն փրկէ ու ազատէ իմ Պէպօին։
(Նահալու տակից հանում է դանթիրան եւ բացանելով դուրս է գնում ձախ դռնից։ Բեմը մի փոքր ժամանակ մնում է դատարկ։)

ՏԵՍԻԼ Է

ՊԷՊՕ, ներս է մտնում միջի դռնից գլխարկով եւ զարդի հագուստով։

Էսէնց էլ աշխարք։ (Գլխարկը վերցնում է, աջ ձեռքի ցուցամատով ճակատի քրտինքը սրբում եւ գլխարկը կրկին ծածկում։)
Մարթ գլխէմէն ինչքու վու

ԿԷԿԷԼ.

Ո՞ւր իս գնում, ի՞նչս ասում։

ՊԷՊՕ, հեգնումենով եւ ժպիտն երեսին։

Տաք տիղ, մայինց մինք փէտ չունինք ու...

ԿԷԿԷԼ.

Չիմ իմանում ինչս ասում, Պէպօ։

ՊԷՊՕ, վերկենալով։

Բիրթն ին տանում ինձ, Կէկէլ։

ԿԷԿԷԼ, վախեցած։

Ի՞նչի։

ՊԷՊՕ.

Էնէնց, խաթրիչուն։

ԿԷԿԷԼ.

Վա՛, Պէպօ ջան, ի՞նչ իս ասում։

ՊԷՊՕ.

Հանաք չիմ անում, Կէկէլ. մի՛ վախենա, վունցօր ըլի եօլա կէհաք։ Ո՞ւր է դէդէն, տանը չէ՞։

ԿԷԿԷԼ, աջ եւ ձախ նայելով։

Չիմ գիդի... տանն էր... հալբաթ համբուրելու գնաց էսաի։

ՊԷՊՕ.

Խրդճ դէդա...

ԿԷԿԷԼ.

Ախար մէ դրուստ խօսի, Պէպօ, էհ, բիրթումն ի՞նչ բան ունիս։

ՊԷՊՕ.

Վունչիչ, (Դառը ժպիտով։) շատ դամբ գցելէն կուռդդ դաթրեցաւ, կօսէ, գնա՛ հիմի մէ քիչ դնջացի, կօսէ։

ԿԷԿԷԼ.

Ախ, Պէպօ ջան, ջիգարս մի՛ պատռոի, թաւաթ էրած իմ ու խորված։

ՊԷՊՕ.

Հինգ հազար էլ էրվիս ու խորվըվիս, ոչ է հարցնում։ Վճռած բան է պիտի գնամ բիրթը։

ԿԷԿԷԼ.

Ի՞նչի, ռամ խաթիր, ի՞նչ իս արի։

ՊԷՊՕ, դառնումենով։

ԳուղուԹին։

ԿԷԿԷԼ.

Դոնն, գուղուԹի՞ն։ Չէ՛, չէ, Պէպօ, ասա՛ ի՞նչ բան է, խօ հոգիս դուս էկաւ։

ՊԷՊՕ.

Թող դուս գայ, ինն էլ հիդը, ումն ի՞նչ կաւ պակսի. շատ հարկավուր է՞ խալխին քու հոգին, եա իմը։

ԿԷԿԷԼ, աչքերը սրբելով եւ լացի ձայնով։

Ախ, Պէպօ ջան, խօ սպանէցիր ինձ։

ՊԷՊՕ.

Սպանօղը սպանից, ես ինչ անիմ։

ԿԷԿԷԼ.

Ոչ ախար։

ՊԷՊՕ։

Ո՞վ, աղա ԱրուԹինը։ (Դառը ծիծաղելով։) Հը, հը, հը...

ԿԷԿԷԼ։

Ի՞նչի։

ՊԷՊՕ։

Աստուա՛ծ վուչ գիդէ նրա գլուխը, իմ տանն ինձ անպատիւ արաւ, կօսէ. փուղ բախշեցի ու էրեսիս խփից, կօսէ։ Պատի բան չը գիդենաս, ԿԷԿԷԼ մինձ մարԹու ղէհին դիբչիլը։ Ինձ պէս խիղճ օղը ըմելին համարցակվի էն հանգի աղա մարԹու ճակատին իմքին խփէ։ Հանաք բան է։ (Դառը ծիծաղ։) Հը, հը, հը։ (Ձեռքերը բարձրացնելով։) Աստուա՛ծ, Աստուա՛ծ։

ԿԷԿԷԼ, մօտենալով եւ փսսփսալով։

Էտ խօ իմ խաԹիր, իմ խաԹիր, ՊԷՊՕ ջան, սիվ-ցիլ էր իմ օրն ու ինձ պէս բայիղուշ քուր չէիր ունեցի։ Ի՞նչ էիր ուզում ինձմէն, քիզ ո՞վ էր ասում, վուր էնէնց մինձ մարԹուն բէդամաղ անիս։ Մայինց էսէնց էր ու էսէնց իմ բանը, էլ ցաւիս վրայ ցաւ ա՞ր էիր աւելցնում։ Ի՞նչ անինք հիմի... դէդէն վուր իմանայ, ի՞նչ կօնէ, դամբլա կու ննդնի։ (Լաց է լինում։)

ՊԷՊՕ։

Դէդէն շատ ցաւի է դիմցի, էստուրն էլ կու դիմնայ։

ԿԷԿԷԼ, լալով։

Ա՜խ, Աստուա՛ծ, ի՞նչի բան հոգի չիս անում ինձ էստիէվէտ։ (Լաց է լինում։)

ՊԷՊՕ։

Հէրիք է, Թէ քու Աստուա՛ծ կու սիրիս։ Խօ տեսար վուր լացն էլ վունչիչ չօտկից... (Աղաղակելով։) Էս է Քու դադաստանն էլի՜, Աստուա՛ծ..... ԱրուԹինը Թալնէ, ԱրուԹինը զընէ, ԱրուԹինը հաշա ուտէ ու մինք տանջվի՞նք...նա խրինջայ ու մինք ախ քաշի՞նք... նա քէփ անէ ու զօղ անէ ու մինք դառը դառը լաց ըլի՞նք... (Դուս է գնում աջ դռնից։)

ԿԷԿԷԼ, լաց լինելով։

ՊԷպօ ջան, ՊԷպօ ջան։ (Դուրս է գնում ՊԷպօի ետեւից։ Բեմը մի փոքր ժամանակ մնում է դատարկ։)

ՏԵՍԻԼ Թ

ԱՐՈՒԹԻՆ ԵՒ ԳԻՔՕ։

ԳԻՔՕ, ներս գալով միջի դռնից։

Այ, Թէ սուտ իմ ասում։

ԱՐՈՒԹԻՆ, հետեւելով։

Աբա՛, աբա՛։

ԳԻՔՕ, առաջ գալով։

Մուլլա՛փ, համեցէ՛ք նստի, մէ տէրն էլ դայ։

ԱՐՈՒԹԻՆ։

Դիւփ մէկ է, Գիքօ, մէ տեսնիմ Թէ էտ ի՞նչ Թուխտ է։

ԳԻՔՕ։

Այ ի՞նչ Թուխտ է, աղա ԱրուԹին։ (Ձեռքը դրպանն է տանում եւ հանում բուռնոթամանը։) Զէ՛, էտ չէր. ամա դիւփ մէկ է, (Քաշում է։) հրմ... աՅ, (Պահում է բուռնոթամանը եւ հանում

բարաթը։) դուն մէ քիչ հիռու կանգնի, աղա ԱրուԹին։ (Ինքը հեռանում է դէպի տախտը։)

ԱՐՈՒԹԻՆ։

Վա՛, վախենում իս, վուր չը խլիմ։ աշխարքն աղան Թալան իսо չէ՞։

ԳԻՔՈ։

Չէ, չէ, աղա ԱրուԹին, էտ վունց կօնիս, գանա դուն էտ հանգի մարԹ իս. ամա էս Թուխտը խիստ փաԹէրակավուր իմքին է։ Ասում իմ ձեռքդ չը դիբչի։ (Բաց անելով բարաթը։) Ա՜յ, տի՛ս։ (Հեռուից ցոյց տալով։) Էս է՞։

ԱՐՈՒԹԻՆ, դլուխը մօտեցնելով։

Աբա՛, աբա՛։

ԳԻՔՈ։

Վա՜, ա՛յ, չեմի վալեա, *) ԱրուԹին Զիմզիմօվի։ (Զարմանք, տեսարան։)

ԱՐՈՒԹԻՆ, շփոթուելով եւ լեզուն կապկպուելով։

Է՞ռ, էռ... (Ձեռքը առաջ է տանում։) իմ... իմ... ձեռքն է՞։

ԳԻՔՈ, բարաթը մօտեցնելով։

Բաս ի՞նչ է՞։

ԱՐՈՒԹԻՆ, բարաթը ճանաչում է, յետոյ առանձին։

Էս ի՞նչ երդնուց պատիժ էր... (Ձեռքերը առաջ տանելով։) Մէ լաւ տեսնիմ...

ԳԻՔՈ, բարաթը հեռացնելով։

Մուլափ, աղա Ջան, է՜։ Ախար էնդադա վուր

*) Վրացերէն՝ իմ պարտքն է։

ասում էի Թէ ես վկայ իմ, վուր պարտ իս... սուտ էի ասում... ամա վուր քու օխտէմէն չէկայ, ես ինչ անիմ... (Աղաղակելով։) Գոհանա՜մ Քու դադաստանին, Աստուա՛ծ։

ԱՐՈՒԹԻՆ, կամենալով բարաթը խլել։

Մէ տեսնիմ, ասում իմ...

ԳԻՔՈ, դրպանը դնելով բարաթը։

Է՜, աղա ԱրուԹին, ձեռք վի՛կալ, քու հօրն օղորմի։ Ասում իմ վուր փաԹէրակի Թուխտ է է՜։ Էս սահաթիս գու քայ Պէպօն, Կակուլին մէ նմեուտումը կու գԹնէ նրան։ Դուն էստի մուլափ տու, մէ գնամ Շուշանին իմաց անիմ։ (Ճանապարհից յետ նայելով ԱրուԹինին, դուրս է գնում ձախ դռնից։)

ՏԵՍԻԼ Ժ

ԱՐՈՒԹԻՆ, մէնակ. երկար ժամանակ սառած կանգնած է, յետոյ ուշքի գալով։

Էս հանգի էլ ոյի՞ն... Շատ բան է էկի գլուխս. ամա էս Թահարը չէ էլի... Վո՞ւրդանց լուս ննդաւ էս անիծած բարաթը... վո՞ւնց լուս ննդաւ... Էրաղ է՞... չէ, վուրդանցի էրաղ է... Թէ էրաղ է, (Շուրջը նայելով։) էստի ի՞նչ իմ շինում... Էս... Պէպօի տունը ու Ճա... (Շոշափում է իրան։) ԱրուԹին Զիմզիմօվը էստի՞... Չէ, դրուստ Աստծու պատիժ է..... Չէլաւ էլի... էնդադա բանիրը մարսեցի ու կուժը էս մէկի վրայ է կոտրվում էլի. էս էր վերչն էլի.... Խալխը վուր իմանայ,

ինչ կոսին... էլ ոչ կու աւտայ ինձ..... Ագահութինը աչկիրս կապից, էլ սիւ ու սիպտակ չը ջոգեցի... Հէնց էս սահաթիս էլ էնդադա խալխուցն ասի... վուր ես վունչիչ պարտ չիմ ասի... Հիմի գնա, սիվցաւ էրեսդ... Ամուրթ քիզ, Արուրթին, ամուրթ քիզ, էս վռնց բերիր բանդդ, վռնց.... (Երկար լռութիւն։) Չէ, ուրիշ չարա չկայ, վունցօր ըլի պիտի էստիէվէտ աղատիմ բարաթս... Թէգուզ տաս թուման էլ գլուխս գնամ... Թէգուզ քսան, Թէգուզ եարսուն, Թէգուզ մէկն էրկու.... Իմ հաին է, թող ջանս դուս գայ։

(Վայր է ընկնում աթոռի վերայ, աջ կողմը սեղանի մօտ։)

ՏԵՍԻԼ ԺԱ.

ՆՈ. ԵՒ ՊԷՊՕ։

ՊԷՊՕ, ներս է գալիս աջ դռնից, առաջին արարուածի հասարակ հագուստով եւ գլխարկը ծածկած։ Տեսնելով Արութինին զարմանում է։

Վա՛յ, դուն էստի։

ԱՐՈՒԹԻՆ։

Հա, հէնց ես, ինչ իս արմնում։

ՊԷՊՕ։

Գանա դուն ինքդ չին արմնում, վուր էստի իս, ես վռնց չարմնամ։ Մէ ասա, ինչ քամին է բերի քիզ էսթէնը, եա ինչ բարի հրիշտակ է մոր սրտումդ, եա ինչ չար սատանայ բօթի քիզ դէսը։

ԱՐՈՒԹԻՆ։

Ղօնաղի մոհբաթ չիս դիդացի, Պէպօ։

ՊԷՊՕ։

Դուն իմ ղօնաղդ, էրեսդ խէչը հանէ։ Քիզ վրայ մինձ դուշման չունիմ ես աշխարքումը, ու դուն իմ ղօնաղդ։

ԱՐՈՒԹԻՆ։

Նստի, հալա հէնց ապրիս։

ՊԷՊՕ։

Դուն նստած իս էլի, ես էսէնց էլ լաւ իմ։ Մէ ասա՛ ինչ իս ուզում։ Թէ ձուզն առնելու իս էկի, եանդլիշ իս, (Դառն ժպիտով։) ղադաղա է։

ԱՐՈՒԹԻՆ։

Պէպա՜ն... ալի, ախպէր, բարիշինք։

ՊԷՊՕ, ծաղրելով։

Օմքին խօ չէ՞ աղօթի քիզ, աղա Արուրթին։

ԱՐՈՒԹԻՆ։

Աղօթիլ ին թէ չին աղօթի, ես քիզ ասում իմ, ալի բարիշինք։

ՊԷՊՕ։

Իմ բարիշիլը ինչիտ է հարկավուր, աղա Արուրթին, դուն մինձ մարթ, ես մէ խիղճ օղորմելի, դուն հարուստ, ես ախկատ։ Վախենում ին, վուր իմ մաղիէր քիզ չը ղրղին բիրթը, թէ ճռնիրը դողում է ինձմէն։

ԱՐՈՒԹԻՆ։

Տօ, ես ուզում իմ քիզ լավուրթին անի։

ՊԷՊՕ։

Ինչ ձեռնէմէտ էկաւ խօ արիր՝ փուղ էիր պարտ

հաշա կերար, էկայ տունդ խնդրելու, տանէդ դուս արիր, վերչը բիրթն էլ իս ղրգիլ տալի, ուրիշ ի՞նչ լավութին պիտի դուս գայ ձեռնէմէտ, աղա Արուութին։ Էկիլ իս վուր մասխարա գցի՞ս ինձ։ Հէրի՛ք է, հէրի՛ք պարուն, գնա՛, գնա՛, Աստծուն փառք տու, վուր իմ տանն իս ու իմ օճորքի տակն իս գթնվում, թէ չէ էս էրած սրտիս վրայ, էլ սաղ չէիր պրծնի իմ ձեռնէմէն։ Միտդ է՞, իսո միտդ է ինչ հանգի դուս արիր ինձ քու տանէմէն... էն արարմունքը քիզ կու սաղ դէր, քիզ աղա Արուութին։ Ես քիզ խնդրում իմ, համեցէ՛ք, գնա՛, ջափա քաշէ՛, վիկա՛ց, հօրէս կու տանին ինձ, էլ վուխտ չկայ, ուզում իմ մօրս ու քվիրս բարովիմ։

ԱՐՈՒԹԻՆ։

Տօ, էտ բանը իմ ձեռին չէ՞։ Էլ չը ղրգիլ տամ քիզ բիրթը, ուրիշ ի՞նչ իս ուզում։ (Պէպօն զարմացած նայում է. իսկ դրսից լսվում է ԿԱԿՈՒԼՈՒ ձայնը՝ Էկա՛։)

ՏԵՍԻԼ ԺԲ

ՆՐԱՆԲ, ԳԻՔՕ ԵՒ ԿԱԿՈՒԼԻ։

ԳԻՔՕ, միջի դռներումը Կակուլուն։

Կորիլ լին, կորիլ օչով չկան։

ԿԱԿՈՒԼԻ, ներս գալով, Գիքօին։

Տօ, ա՛յ Պէպօն, ի՞նչ իս ասում։

ԳԻՔՕ, ներս գալով։

Էս վո՞ւնց էկար, Պէպան, վուր չը տեսայ։ (Արութինին։)

Ա՛յ, աղա Արութին, հիմի կու տամ, (Պէպօի վերայ ցոյց տալով։) թէ կօսէ։ Էտ դուն, էս սա։

ՊԷՊՕ։

Էս ի՞նչ խաբար է, չիմ իմանում։

ԿԱԿՈՒԼԻ։

Վա՛, աղա Արութինի մոդ դուն իս խօսում ու միզ իս հարցնո՞ւմ։

ՊԷՊՕ։

Սրա ասածը իսո ուփրօ չիմ իմանում։ (Հեղնութենով։) Էկիլ է, բարիշինք, կօսէ։

ԿԱԿՈՒԼԻ, ծաղրելով։

Հա՜... (Գլուխ տալով Արութինին։) Բաս մէ լաւ շնորհակալութին անինք։

ԱՐՈՒԹԻՆ, առանձին շփոթուած։

Մտի՛կ էս լըփին։

ԿԱԿՈՒԼԻ, Պէպօին։

Տօ, թէ ասում էիր, թէ լաւ մարթ չէ, կօսէ, աղա Արութինը։

ԱՐՈՒԹԻՆ, առանձին։

Անզգամ։

ՊԷՊՕ, ժպտալով։

Ինչ գիդիմ, խճպտանքը զարթիլ է։

ԿԱԿՈՒԼԻ, Պէպօին։

Իժում վո՞ւնց է բարիշում, կէսը տալիս է՞։ (Մօտենալով Արութինին։) Ե՞ս քու մարթ ասօղին... (Բռունցքը բարձրացնելով։) Դէ՛, հոքիտ պահ տու ու սէրթուկթ հանէ։

ՊԷՊՕ։

Կակուլի՛, Կակուլի՛։

ԳԻՐՕ, Պէպօին։

Տօ բան հոքի չանէ.

ԿԱԿՈՒԼԻ, Արութինին մէկ ձեռքով եախիրը բռնելով։

Ը՞ քու... (Միւս ձեռքով բռունցքը ցոյց տալով։) Դէ, գնա հիմի գանգատ արա...

ԱՐՈՒԹԻՆ։

Տօ, գժվիլ ի՞ս, էյ։

ՊԷՊՕ, հեռացնելով Կակուլուն Արութինից։

Մուլլա՛, Կակուլի, էտ մարթութին չէ։

ԱՐՈՒԹԻՆ, շորերը ուղղելով։

Արի՛ ու ձիսպէհներուն լավութին արա։

ԿԱԿՈՒԼԻ։

Լավութի՞ն, ինչ պտուղ է, դիվի հոքու էդնէն է ման գալի ա՛յ. աբա բարաթը չէր լուս ննդի, տեսնիմ թէ վո՞ւնց էր լավութին անում։

ՊԷՊՕ։

Ի՞նչ բարաթ։

ԿԱԿՈՒԼԻ։

Վա, բաս ջէր չի՞ գիդի. այ էս ադա պարնի բարաթը։ (Գիրօին։) Տօ բի՛ է։ (Պէպօին։) Էս սհաթիս ճամփին վուր իմացաւ, ռանգ ու ռունդը գնաց խաղինը։ (Գիրօին։) Դէ, չուստ արա։

ԳԻՐՕ, գրպանից հանելով բարաթը։

Մուլլա՛, մուլլա՛, տիրուչը տամ։ (Մօտեցնում է Պէպօին։)

ԿԱԿՈՒԼԻ, խլելով Գիրօի ձեռքից եւ տալով Պէպօին։

Վո՞ւնց է, վո՞ւնց լօթին։

ՊԷՊՕ, տնդղելով բարաթը հետզհետէ զարմանում է։ Տեսարան։

Էս էրաղ է՞....

ԿԱԿՈՒԼԻ։

Էրաղ ու կէս է։

ԳԻՐՕ։

Ղուրթ վուր էրաղ, Պէպօ ջան։ Չիս գիդի թէ...

ԱՐՈՒԹԻՆ, առանձին։

Էսղաղա էլ խայտառակութին։

ԿԱԿՈՒԼԻ, Պէպօին, Գիրօի վերայ ցոյց տալով։

Սրան թէ խօսեցրիր, Պէպօ, օխտը դիվի հէքիաթի վրայ էրգար է էտ բարաթի առակը։

ՊԷՊՕ։

Ախար էս վո՞ւրդանց լուս ննդաւ։

ԳԻՐՕ, նստելով տախտի վերայ եւ պատրաստուելով պատմելու։

Ա՛յ, Պէպան ջան, վունց էր....

ԿԱԿՈՒԼԻ, Գիրօի բերանը ձեռքով ծածկում է։

Սու, սու, դուն սուս։ (Պէպօին։) Էտ վունցօր լուս ննդաւ, իժում կօսինք. ամա դուն էտ անաստծուն թամաշա արա։

ՊԷՊՕ, բարաթը տնդղում է, գլխարկը վերցնում եւ աղաղակում։

Գոհանամ Քի Տէր, դիփունի դաղաստանի վրայ Քու դաղաստանն է էլի ղուրթ։ (Գլխարկը ծածկում է եւ Արութինին նայում։ Երկար լռութիւն. տեսարան։ Ծանր մօտենալով Արութինին եւ բարաթը ցոյց տալով։) Էս կու ճանչնա՞ս,

աղա Արուբթին.... (Երկար եւ լուռ նայելով երեսին, գլուխը շարժում է։) Հիմի իմ իմանում քու էստի գալը... լաիղ արիր հա։ Թէ կօսէ վունչիչ պարտ չիմ, թէ վուր օրթում հաւատ արիր, թէ վուր վուրթկերանցով օրթում կերար.... Էնտ է քու օրթումն էլի, էտէնց իս ամէն օր օրթում ուտում էլի. էնով իս աշխարքին խափում էլի, էնտ օրթումներով իս մոդ արի էտղ աղա փուղն էլի... Այ, խռով կենայ քիզ քու օրթումները. ամէն մէ քու օրթումը օրթունք կտրվի ջանումդ ու ջանդ ծակծրկվի, վուր հոքիդ էգէբա երգնքի լուս տեսնէ... (Մօտենալով։) Զէ, չիս ամանչում, խճպրտանքը խօ դարդակ քամի է քիզ ամա. (Բարաթը նորից ցոյց տալով։) էս ինչ է, ինչ, էստուրն ինչ կօսիս։ Էստումէն էլ չիս ամանչում։ էս քու կոտրած ձեռով չիս գրի։ Ասա չէ, էլի. ասա, քիզ ամա խօ հաշա ուտիլը հիշտ է.... Այ, գեղինը մանիս էտ քու պատվական շուրերով։

ԿԱԿՈՒԼԻ, գլխարկը վեր առնելով եւ նորից ծածկելով։

Հաջան, հաջան, աղա Արուբթին։

ԳԻՐՕ, առանձին։

Էս Շուշանն ինչ էլաւ։ (Գլուխը շարժելով դուրս է գնում ձախ դռնից։)

ՏԵՍԻԼ ԺԳ

ՆՐԱՆՔ ԱՌԱՆՑ ԳԻՐՕԻ։

ԱՐՈՒԹԻՆ

Տօ, ինչ ինս սարսաղ սարսաղ դուս տալի, վուր միտս էր էլի, խօ կու տէի էլի։

ՊԷՊՕ։

Միտդ չէր, խիղճ օղորմելի։ Եարաբ վոնց իս մէ թիքայ հաց ճարում ուտելու։ Ոնմն իս խափում ումը.... էս սահաթիս դատամէրի մոդ հաշա կերար, վուր քու օրումն էլ ինձ վունչիչ չիս պարտեցի, վուր սուտ շարիր իմ մոգոնում ես քիզ վրայ, էս սահաթիս ձեռք քաշեցիր էստու թխտիրը ու հիմի միտդ չէր.... ու հիմի բարիշինք.... էսղադա վուխտ չարչարեցիր, էսղադա գլուխդ անիծիլ տվեր ու հիմի լաւ մարթացար մէ բաշ։ Վախենում իս հա, վախենում իս վուր աշխարքը չիմանայ քու ղալթաբանդութինը հա, վախենում իս, վուր դատամէրի մոդ էրեսդ չը սիվնայ հա։ Քու մոկումը, թող միդ մոդ սիվնայ մէնակ, ինչ հաջաթ, մինք անմիդ օմքնիր ինք, ով ինչ կու իմանայ. օղոնդ խալիը չիմանայ, օղոնդ քու ննգրըտիքը չիմանան։ (Զայնը փոխելով։) Գնա, գնա, ասում իմ։

ԱՐՈՒԹԻՆ։

Խօ պրծար, ախպէր, ինչ ասելու ունէիր խօ ասիր, սիրտդ խօ յիդ էկաւ։ Հիմի մէ ինձ լսէ, ես քիզ ասում իմ՝ փուղերդ առ, բարաթս իս տու ու քու բիրթը մոշա անիմ էս սհաթիս։

ՊԷՊՕ։

Կէհամ բիրթը, կէհամ, ես քու օղորմութինը չիմ ուզի ու էս փուղերը առանց քու ասելու էլ կու առնիմ։

ԱՐՈՒԹԻՆ։

Գժուլթին մի՛ անի, Պէպան։ (Ձեռքը ծոցը տանելով։) Ա՛ռ էս փուղերդ, ասում իմ։ (Պէպոն դուխը շարժում է։) Ա՛ռ, մէ իմքին էլ աւելցնիմ։ Հը՛, ի՞նչ ղաղա... մէ հինգ թուման աւելցնիմ.... տաս.... քսան...

ՊԷՊՈ, որ արհամարհանքով նայում էր Արութինին, դառնում է դէպի Կակուլուն։

Մտիկ իս անում, Կակուլի, մտիկ իս անում սրան, ինչքու հիմի գլուխկն էլ չէր տալի ու հիմի աւելցնում էլ է.... էսէնց ին այ, դի՛ փ էսէնց ին, քանի օչով չի գիդի, հասն էլ ին կարում ու եփօր վախենում ին բանն աշքարանայ, էսէնց ին ժաժ դալի այ, էսէնց, վուր անուններուն չը կոտրվի միթամ։

ԿԱԿՈՒԼԻ, ցածր Պէպոյին։

Տօ ա՛ռ, աչկը հանէ, ու դրա ջիգրը (Բռունցքը ցոյց տալով։) ես գիդիմ։

ՊԷՊՈ, շարունակելով, Արութինին։

Ես քու բաշխիչը չիմ ուզում, աղա Արուլթին, տար աչկդ դի՛, ամա աչկդ կու հանիմ ու գլուխկը վուրդիօր ինձ էս սհաթիս սըտեցիր, էնդի կու առնիմ, էնդի, թող դիփունքը ճանչնենան ինչ մարթ էլ իս, թող դիփունքը իմանան քու արարմունքը։ Էստու համա բիրթը կի չէ, թէ գուդ հուրումը կու նստիմ, հուրումը։

ԿԱԿՈՒԼԻ, Պէպոյին։

Ը՞, ես քու խիլքին ի՞նչ ասիմ։

ԱՐՈՒԹԻՆ։

Բռնէ, իսուն թուման աւելցնիմ։

ԿԱԿՈՒԼԻ, մօտենալով Արութինին։

Բի՛ ես բարիշեցնիմ։

ՊԷՊՈ, Կակուլուն յետ մղելով։

Քու բան չէ, Կակուլի։

ԿԱԿՈՒԼԻ, յետ դնալով։

Այ սարսաղ։

ՏԵՍԻԼ ԺԴ

ՆՐԱՆՔ, ՇՈՒՇԱՆ ԵՒ ԳԻՔՈ։

ՇՈՒՇԱՆ, զաթիրպով միջի զոներումը Գիքոյին, որը հետեւում է նրան։

Վո՛յ քոռանամ ես, զուրթ իս ասում, Գիքո... (Առաջ զալով եւ զաթիրան վերցնելով։) Վո՞ւրդի է, վո՞ւրդի միր հոքէհանը... սա է՞...

ՊԷՊՈ։

Սա, սա դէդի, այ, միր բախտավուրօղը։

ՇՈՒՇԱՆ, Արութինին շտապով։

Ա՛յ, գէդինը պատռվի ու քիզ դէվէր տանէ։ Ի՞նչ իս ուզում միզմէն, ի՞նչ... Փուղէներուս հաշա կերար, ախչըկաս բօղաղը դուս կորեցիր ու հիմի Պէպոխա էլ բիրթն ին ղրգիլ տալի, ջիգր ին մտի միզ հիդ, ուզում ին վեր ջնջի միզ։

ԱՐՈՒԹԻՆ, առանձին։

Կարկուտ է անիծածը։

ՇՈՒՇԱՆ, շարունակելով։

Ա՛յ, վեր ջնջվի քու անուամը, քանդվի ու բրիշակ ըլի տուն ու տիղդ, քու անամութ կնգայ սըրտումը ննդնի էն կրակը, ինչ կրակ միր սիրտը գցեցիր։

ԿԱԿՈՒԼԻ, առանձին եւ կիսաձայն։

Ամէն...

ՊԷՊՕ։

Դէդի՛, դէդի՛։ (Կէկէլը ներս մտնելով աջ դռնից, անկիւնումը լուռ լաց է լինում։)

ՏԵՍԻԼ ԺԵ

ՆՐԱՆՔ ԵՒ ԿԷԿԷԼ։

ԱԲՈՒԹԻՆ, Շուշանին։

Խիլքի արի՛, խիլքի, ի՞նչեր իս ասում, դէդի։

ՇՈՒՇԱՆ, շարունակելով։

Ո՞ւր է, սիվորիք էրեսը, ո՞ւր է էն սիւ ու մութ բարաթը։ Հիմի էլ կօսի՞ս, վուր վունչիչ պարտ չիս միդ։

ԱԲՈՒԹԻՆ։

Պարտ իմ, պարտ իմ, ու տալիս իմ, ուրիշ ի՞նչ ի՛ք ուզում։

ՇՈՒՇԱՆ։

Բաս բիրթն էլ ո՞ւր իս ղրգիլ տալի։

ԱԲՈՒԹԻՆ։

Բիրթն էլ չը ղրգիլ տամ, փուղն էլ տամ, մէ իմ-

քին էլ աւելցնիմ։ ամա վուր չէ բարիշում, ես ինչ անիմ։ (Շուշանը զարմացած նայում է։)

ՊԷՊՕ։

Հիմի բարիշինք, հիմի... (Մօտենալով Կէկէլին։) իժում սրան ի՞նչ իս ասում... (Բռնում է Կէկէլի ձեռքը եւ առաջ բերում։) սրա մոդ վո՞ւնց իս բարիշում։ Սաղ սաղ գերեզմանը դրիր, օրն ու ումբրը խավրեցրիր, կինքը հառամ արիր, վո՞ւնց իս բարիշում սրա հիդ, վո՞ւնց... վո՞ւնց իս յիդ տալի սրան, ինչօր խլեցիր սրամէն, վո՞ւնց։ Քու վուխչ հարստութինն էլ չի կանա լավցնի էն եարէն, ինչ եարա բաց արիր դուն սրա սրտումը։ Գնա՛, գնա՛, էլ մինք բարիշելու վունչիչ չունինք։ Գնա՛, քանի սաղ իս աշխրքումը, սրա արտրսունքնիրը միադ բի՛, վուր էդէրա էլ մէկէնեռուն չանիս, ինչ սրան արիր։

ԿԷԿԷԼ։

Թո՛ղ, Պէպօ ջան, թո՛ղ... իրան սիվցո՛ւ իր բարաթը։

ԳԻՔՕ։

Տօ, հադիր բարիշիս։

ԿԱԿՈՒԼԻ, Շուշանին։

Ասա՛, դէդի, վուր բարիշի, հադիր աւել է տալի։

ՇՈՒՇԱՆ։

Իր աչկը դնէ աւելին, թաք Պէպօիս ձեռը չը տայ։

ԿԷԿԷԼ.

Բարիշե՛, Պէպօ ջան, բարիշե՛։

ԱՐՈՒԹԻՆ։

Արի՛ կոտրվե, Պէպան, բարիշենք։

ՊԷՊՕ։

Արի՛ բարիշենք, արի՛. արի՛ գնանք, վուրդիօր լինէ էս սահաթիս սրատեցիր, արի՛ մէկ էնդի էս բարաթը շանց տամ, մէ էրեվայ վուր սուտը ես չիմ, թէ-դուղ գլխկէմէն էլ մէ իմքին քիզ փէշ.քաշ։ Արի՛ էլի, արի՛։

ՇՈՒՇԱՆ։

Գնա՛, գնա՛, վուռնցօր մեր էրեսը սիվցրիլ իս, թող հիմի քու էրեսը սիվնայ։

ՊԷՊՕ։

Արի՛ էլի։

ԱՐՈՒԹԻՆ։

Էտ վուր ուղենամ, իսօ էսղատա էլ աղանչաք չիմ անի։

ՊԷՊՕ։

Ը՞ը, դուղ աւաղակ։

ԿԱԿՈՒԼԷ, առանձին, կիսաձայն եւ կրծրին խփելով։

Վա՛յ մէ՞... (Միջի դուռը դրսից Քսկում են։ Լռութիւն։ Մօտենալով դռանը եւ փորը ինչ բաց անելով, որպէս Քէ մէկի հետ խօսում է։) Հա՛, էսաի է։ (Առաջ գալով, Պէպօին։) Տօ, գժվիլ ին, քուրթահ արա՛, պրիստաֆն է։

ԿԷԿԷԼ, ՊԷՊՕ ԵՒ ՇՈՒՇԱՆ, միասին։

Պրիստավը՞։

ԳԻՔՕ։

Պրիստավը՞։ (Տեսարան։)

ԱՐՈՒԹԻՆ։

Իս տու բարաթս, Պէպան, թէ չէ բիրթն ին տանում։

ՊԷՊՕ։

Հաջաթ չէ, կէհամ բիրթը, կու նատիմ, էնդի խօ չիմ մեռնի, մէ օր կու ազատվիմ ախար էլի, վարէն հիռու չէ։ Շատին իս խափի էսէնց, շատի գլխին իս օյին էկի էսէնց, շատի բօղաղն իս դուս կտրի էսէնց ու ես Պէպօն չիմ ըլի, թէ գի-փունանց ջիդրը չիմ հանի։ Սաղ աշխրքումը էրեսդ մուր կու շինիմ։ Մնաս բարով, դէդի. մի՛ լաց ըլի, Կէկէլ։ Աստուա՛ծ օղորմած է, խղճի ճակտին էսէնց է գրած։

ԱՐՈՒԹԻՆ, սաստիկ շփոթուած։

Ի՞նչ անիմ հիմի։

ԿԷԿԷԼ, փաթաթուելով Պէպօին։

Մի՛ գնա՛, Պէպօ ջան, մի՛ գնա՛։

ՇՈՒՇԱՆ, Պէպօին միւս կողմից։

Ի՞նչ իս անում, Պէպօ, իրան սիվցրու էտ սիւ ու մութ բարաթը։

ՊԷՊՕ։

Իրան տամ, վուր սրա մասխարէն դառնամ...

վուր խալխի աչկումը սուտը ես էրեվամ, ղուրթը սա... բիրթի ահու գլուխս ծախիմ.... Չէ, դեդի, էս բարաթը Աստուձ թուր է դէվէր ղոդի ինձ ամա.... էստով պիտի կտրիմ ես սրա գլուխը.... Քանի՞քի պէսնիրն ին էրվում սրա ձեռնէմէն, քանի՞ (Կէկէլի վերայ ցոյց տալով։) սրա պէսնիրն ին լաց ըլում, քանի՞ ինձ պէսնիրն ին տանջվում... մէկն էլ է չիմաց անէ աշխարքին սրա արարմունքը, մէկն էլ է հարայի չը կանենայ տա՞, վուր էս մարթը, վուրին դիփունքը գլուխ ին տալի, դիփունքը մեձրում ին, դիփունքը յարդում ին ու պատվում ին... սա էն մարթն է, վուրի համա վունչիչ բան սուրփ չկայ աշխարքումը... Հիմի լաց ըլէք ինչղաղա դուվլաք... խոշի լացը հալբաթ էնդուր է սոխոշի Աստուձ, վուր հարուստի արարմունքը լվացվի։ (Դուռը կրկին թակում են։) **Մնա՞ք բարով։**

(Դուրս է գնում միջի դռնից։)

ՏԵՍԻԼ ԺԶ

ՆՐԱՆՔ ԱՌԱՆՑ ՊԷՊՕԻ։

ՇՈՒՇԱՆ ԵՒ ԿԷԿԷԼ, *միասին լաց լինելով Պէպօի ետեւից։*

Պէպօ, Պէպօ, Պէպօ ջան, Պէպօ ջան... (Կէկէլը վայր է ընկնում տախտի վերայ, գլուխը ժողովրդի կողմը, եւ երեսը ծածկելով մութարայի մէջ լաց է լինում, անշարժ մնալով մինչեւի վերջը։)

ԱՐՈՒԹԻՆ, *սեղանի մօտ կանգնած, գլխին խփելով։*

Էս ի՞նչ բան էկաւ գլուխս։ (Նոյնպէս անշարժ մնում է։)

ՇՈՒՇԱՆ, *լոլով Արութինին։*

Երգնային Թաքավուրն անէ քու դաղաստանը։

(Դուրս է վազում Պէպօի ետեւից։)

ՏԵՍԻԼ ԺԷ

ՆՐԱՆՔ ԱՌԱՆՑ ՇՈՒՇԱՆԻ։

ԳԻՐՔՕ, *Արութինին։*

Էս էիր ուզում էլի, էէր օխնած։ (Մօտենալով Կէկէլին։)

Մի՛ լաց ըլի, Կէկէլ ջան, մի՛ լաց ըլի, Աստուձ օղորմած է։ (Գլուխը քարշ գցած դէպի Կէկէլը, նմանապէս մնում է անշարժ։)

ԿԱԿՈՒԼԻ, *մօտենալով Արութինին, ձախ ձեռքը կողքին դրած, իսկ աջը վայր թողած։*

Հիմի, աղա Արութին, ճնացինք ես ու դուն։

(Անշարժ մնում են։ Տեսարան։)

ՎԱՐԱԳՈՅՐ։

ԳԻՆՆ Է 30 Կ.

Տպագրված է Թիֆլիզում «Մշակ» լրագրի խմբագրատանը Ե. Գ. Զաքարիա Գրիգորեանցի գրավաճառանոցում։

Այդ տեղերից պէտք է գիրքը հետևեալ ճարտէով՝ Кавказская книжная торговля въ Тифлисѣ З. Грикурова и К°, տեսցնելով գրքի գնին 5 կ. համարարքի ծախս։

ՀՀ Ազգային գրադարան
NL0341275